Դատական Գործ N: ԵԱԴԴ/0042/01/11

Երբ է գործը ստացվել:	24-05-2011
Քրեական գործի համարը:	ԵԱԴԴ/0042/01/11
Ինչ կարգով է գործը ստացվել:	
Գործը որտեղից է ստացվել:	
Դատախազություն:	Աջափնյակ և Դավթաշեն համայնքների դատախազություն
Նախաքննական գործի համարը:	10100811
Մեղադրական եզրակացության համառոտ բովանդակություն:	Կարեն Բեգլարյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ խարդախությամբ առանձնապես խոշոր չափի գույք հափշտակելու դիտավորությամբ, Դալլաքյանին սեփականությամբ պատկանող խանութը վաճառելու պատրվակով, խարդախությամբ հափշտակել է առանձնապես խոշոր չափի գումար: / 1 հատոր՝180 թերթ, Կ.Բեգլարյանի անձնագիրը/:
Մեղադրյալ	
Անձ	
Անուն	Կարեն
Ազգանուն	Բեգլարյան
Հայրանուն	Վլադիմիրի
Հասցե	ք.Երևան,Շիրազի 48շենքի դիմաց գտնվող խորդանոց
Սեռ	Արական
Ծննդյան ամսաթիվ	09-12-1967
Հոդված_1	
Հոդված	178 Մաս 3 Կետ 1
Դատվածություն:	նախկինում չդատված
Պաշտպան	
Անուն	Արսեն
Ազգանուն	Սարդարյան
Հասցե	ք.Երևան,
Սեռ	Արական
Լիցենզիա	1090
Վիճակագրական տողի համարը:	6.4
Իրեղեն ապացույց	
Իրեղեն ապացույցի անվանումը:	
Իրեղեն ապացույցի պահպանման փաստացի տեղը:	
Խափանման միջոց:	Գրավ
Չափահաս:	Այո

Երբ:	25-05-2011
Նախագահող դատավոր	
Դատարանի անվանում:	Աջափնյակ և Դավթաշեն
Դատավորի անուն:	Դավիթ Կիմի Բալայան

Դատավոր	
Դատարանի անվանում:	Աջափնյակ և Դավթաշեն
Դատավորի անուն:	

Երբ:	26-05-2011
Որոշումը ուղարկվել է կողմերին:	26-05-2011
Ուղարկվել է հուշաթերթիկ/որոշումը:	26-05-2011
Այլ նշումներ:	

Երբ:	16-06-2011
Դատավարության կողմեր:	Մեղադրյալ
Դատավարության կողմեր:	Տուժող
Դատավարության կողմեր:	Մեղադրող
Դատավարության կողմեր:	Պաշտպան
Դատավարության կողմեր:	Պաշտպան
Դատավարության կողմեր	
Անուն	Կարեն
Ազգանուն	Բեգլարյան
Հասցե	ք.Եր. Շիրազի 48 շ-ի դիմաց գտնվող խորդանոց
Դատավարության կողմեր	
Անուն	Մարինա
Ազգանուն	Մխիթարյան
Հասցե	ք.Եր. Դավթաշեն 2-րդ թաղ., 32 շ. 23 բն
Դատավարության կողմեր	
Անուն	Լ
Ազգանուն	Հովհաննիսյան
Հասցե	Աջափնյակ Դավթաշեն վարչական շրջանների դատախազություն
Դատավարության կողմեր	
Անուն	Արսեն
Ազգանուն	Սարդարյան
Հասցե	ք.Եր. Մոլդովական 21 շ., 34 բն
Դատավարության կողմեր	
Անուն	Կարեն
Ազգանուն	Սարդարյան
Հասցե	ք.Եր. Մոլդովական 21շ, 34 բն
Այլ նշումներ:	
Ժամ:	10:30
Դատավարության կողմեր	
Անուն:	
Հասցե:	
Նիստերի դահլիճի համարը:	1

Երբ:	27-06-2011

Ժամ:	10:30
Նիստերի դահլիճի համարը:	1
Այլ նշումներ:	

Երբ:	09-07-2011
Ժամ:	15:00
Նիստերի դահլիճի համարը:	1
Այլ նշումներ:	

Երբ:	18-07-2011
Ժամ:	12:30
Նիստերի դահլիճի համարը:	1
Այլ նշումներ:	

Երբ:	20-07-2011
Ժամ:	15:30
Նիստերի դահլիճի համարը:	1
Այլ նշումներ:	

Երբ:	27-07-2011
Ժամ:	10:30
Նիստերի դահլիճի համարը:	1
Այլ նշումներ:	

Երբ:	05-08-2011
Ժամ:	12:00
Նիստերի դահլիճի համարը:	1
Այլ նշումներ:	

Երբ:	15-09-2011
Ժամ:	10:30
Նիստերի դահլիճի համարը:	1
Այլ նշումներ:	

Երբ:	22-09-2011
Ժամ:	10:30
Նիստերի դահլիճի համարը:	1
Այլ նշումներ:	

Երբ:	27-09-2011
Ժամ:	10:30
Նիստերի դահլիճի համարը:	1

Այլ նշումներ:	
Երբ:	30-09-2011
Ժամ:	10:30
Նիստերի դահլիճի համարը:	1
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	03-10-2011
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	03-10-2011
Հոդված	
Հոդված	357,360,366,369,372
Այլ նշումներ:	
Դատական ակտի բովանդակությունը:	Գործ ԵԱԴԴ /0042/01/11 Դ Ա Տ Ա Վ Ճ Ի Ռ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 03.10.2011 թվական ք.Երևան ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՋԱՓՆՅԱԿ ԵՎ ԴԱՎԹԱՇԵՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆ ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ Դ.ԲԱԼԱՅԱՆ ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՆԵՐ Մ.ԽՈՌՈՅԱՆ, Վ.ԱԼԵՔՍԱՆԴՐՅԱՆ ՄԵՂԱԴՐՈՂ Լ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՏՈՒԺՈՂ՝ Մ.ՄԽԻԹԱՐՅԱՆ ՊԱՇՏՊԱՆ՝ Ա.ՍԱՐԳԱՐՅԱՆ ԹԱՐԳՄԱՆ՝ Ա.ԽԱՆԻԿՅԱՆ Դռնբաց դատական նիստում քննության առնելով գործն ըստ մեղադրանքի՝ Կարեն Վլադիմիրի Բեգլարյանի՝ ծնված 09.12.1967 թվականին Երևան քաղաքում« ազգությամբ հայ« ՀՀ քաղաքացի« բարձրագույն կրթությամբ« ամուսնալուծված« չդատված, չի աշխատում, ֆիզիկապես վատառողջ՝ ախտորոշվել է «հեպատիտ C» հիվանդությունը, հաշվառված է քաղաք Երևան, Շիրազի 52-րդ շենք 32-րդ բնակարան հասցեում, բնակվում է՝ քաղաք Երևան Շիրազի 48-րդ շենքի բակում՝ գտնվող խորդանոցում, որպես խափանման միջոց է ընտրված գրավը՝ 2011 թվականի փետրվարի 16-ից 21-ը գտնվել է անազատության մեջ, մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով: 1.Գործի դատավարական նախապատմությունը. 2011 թվականի հունվարի 25-ին ՀՀ ոստիկանության ՔԳՎ Երևան քաղաքի ՔՎ Մաշտոցի քննչական բաժնի քննիչ Հ.Խեդոյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել և վարույթ է ընդունվել թիվ 10100811 քրեական գործը: 2011 թվականի փետրվարի 18-ին Կարեն Բեգլարյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով այն բանի համար, որ նա խարդախությամբ

առանձնապես խոշոր չափի գույք հափշտակելու դիտավորությամբ, Սերյոժա Պավլու Դալաքյանին սեփականությամբ պատկանող Երևան քաղաքի Շիրազի փողոցի 52/6 հասցեում գտնվող խանութը Միքայել Սերգեյի Սարդարյանին 48.000 ԱՄՆ դոլարով վաճառելու պատրվակով, խաբեությամբ և վերջինիս վստահությունը չարաշահելով, 2008 թվականի ապրիլ-հունիս ամիսներին Երևան քաղաքի Պարոնյան 1 հասցեում գտնվող իր գրասենյակում և Դավթաշեն 2-րդ թաղամասի 32-րդ շենքի 23 բնակարանում Ս.Սարդարյանից ստացել և խարդախությամբ հափշտակել է առանձնապես խոշոր չափ հանդիսացող 2.706.000 ՀՀ դրամին համարժեք 5.500 եվրո, 3.880.800 ՀՀ դրամին համարժեք 9.900 ԱՄՆ դոլար և 8.000.000 ՀՀ դրամ, ընդհանուր 13.794.800 դրամ, Միքայել Սարդարյանին և նրա կնոջը՝ Մարինա Սուրենի Մխիթարյանին պատճառելով առանձնապես խոշոր չափի գույքային վնաս:
2011 թվականի փետրվարի 19-ին Կարեն Բեգլարյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտվել կալանավորումը և որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց է կիրառվել է գրավը:
2011 թվականի փետրվարի 21-ին վճարվել է սահմանված գրավի՝ 1.500.000 ՀՀ դրամ գումարը և նույն օրը մեղադրյալը ազատ է արձակվել կալանքից:
2011 թվականի մայիսի 24-ին հաստատվել է մեղադրական եզրակացությունը:
Նույն օրը քրեական գործը մուտք է եղել դատարան:
2011 թվականի մայիսի 25-ին քրեական գործը մակագրվել է դատավոր Դ.Բալայանին:
2011 թվականի մայիսի 26-ին որոշում է կայացվել քրեական գործը վարույթ ընդունելու մասին:
2011 թվականի հունիսի 07-ին որոշում է կայացվել դատաքննություն նշանակելու մասին:
2. Ապացույցների հետազոտում, գնահատում և դատարանի իրավական վերլուծություն.
Առաջադրված մեղադրանքում ամբաստանյալ Կարեն Բեգլարյանն իրեն մեղավոր չճանաչեց և ցուցմունք տվեց, որ 2007 թվականից շահույթ ստանալու նպատակով Ծաղկաձորում իրականացրել է շինարարական աշխատանքներ, սակայն դրանք ձախողվել են հողերի սահունության պատճառով և ինքը ֆինանսական խնդիրների առջև է կանգնել: Այդ աշխատանքները կատարելիս օգտագործել է նաև իր հոր ընկերոջ՝ Սերյոժա Դալլաքյանից 2006-2007 թվականներին մաս-մաս վերցրած ընդհանուր առմամբ 25.000 ԱՄՆ դոլար գումարը և շինարարական աշխատանքների ձախողումից հետո, որպես գումարը վերադարձնելու երաշխիք սեփականությամբ իրեն պատկանող Երևան քաղաքի Շիրազի փողոցի 52-րդ շենքի դիմաց գտնվող մթերային խանութը՝ 2007 թվականի դեկտեմբեր ամսին առուվաճառքի պայմանագրով հանձնել է Ս.Դալաքյանին, պայմանով՝ երբ պարտքը վերադարձնի խանութը կվերաձևակերպվի: Տեսնելով, որ իր գործերը գնալով վատանում են 2008 թվականի սկզբին դեռ իր հոր կենդանության օրոք որոշել է խանութը վաճառել 50.000 ԱՄՆ դոլարով /հայրը մահացել է 2008 թվականի փետրվարի 02-ին/ և այդ մասին ասել է անշարժ գույքի վաճառքով զբաղվող Սերգեյ Ղազարյանին, ում միջոցով էլ 2008 թվականի ապրիլին ծանոթացել է Միքայել Սարդարյանի հետ: Վերջինիս համաձայնվել է խանութի դիմաց վճարել 48.000 ԱՄՆ դոլար, ու ասել է, որ պետք է խորհրդակցի իր ընտանիքի անդամների և ընկերների հետ, որոնք բնակվում են ՌԴ-ում, որպեսզի ճշտի թե ինչ ժամկետում նրանք կուղարկեն այդ գումարը: Երկու-երեք օր անց Մ.Սարդարյանը եկել է Երևան քաղաքի Պարոնյան 1 հասցեում գտնվող իր կողմից վարձակալած գրասենյակ և պարտավորվել՝ երկու ամսվա ընթացքում վճարել նշված գումարը, իսկ ինքը պարտավորվել է ամբողջ գումարը ստանալուց հետո խանութը ձևակերպել Մ.Սարդարյանի անվամբ ու միաժամանակ նշել, որ խանութն այլ անձի անվամբ է գրանցված, ում ինքը պարտք

է մոտ 10.000.000 ՀՀ դրամ և այն վերադարձնելուց հետո կարող է խանութը անվանափոխել իր անվամբ ու առաջարկել է գումարը վճարել երկու փուլով, ինչին Մ.Սարդարյանը համաձայնվել է: Երկու օր անց Մ.Սարդարյանն իր փեսայի և Սերգեյ Ղազարյանի հետ եկել է իր գրասենյակ և որպես խանութը գնելու կանխավճար իրեն տվել է 5.000 եվրո գումար, որի վերաբերյալ գրել է ստացական: Այնուհետև, Մ.Սարդարյանը ստացականում նշված օրերին իր գրասենյակում իրեն է տվել է 500 եվրո, 1.000 և 8.900 ԱՄՆ դոլար գումարներ, ընդհանուր առմամբ 26.04.2008 թվականի դրությամբ՝ 18.000 ԱՄՆ դոլար գումար: Մոտ տասնհինգ օր անց Մ.Սարդարյանը իրեն հայտնել է, որ ճգնաժամի հետևանքով իր ընկերները չեն կարողանում ՌԴ-ից գումար ուղարկել և պատրաստվում է իր տունը գրավադնել բանկում և տալ խանութի մնացած գումարը, սակայն, քանի որ իրենք ՌԴ քաղաքացիներ են, բանկը վարկ չի տրամադրում և խնդրել է օգնել վարկ ձևակերպելու հարցում: Ինքը Մ.Սարդարյանին ասել է, որ իր մոտ կա Գևորգ Փաշոյանի այցեքարտը, ով զբաղվում է վարկերի ձևակերպմամբ և կարող է դիմել նրան: Իրենք Գևորգ Փաշոյանի հետ հանդիպել են Մ.Սարդարյանի շենքի բակում, ով վերցրել է Մ.Սարդարյանի բնակարանի և այլ փաստաթղթերը: Դրանց ծանոթանալուց հետո Գ.Փաշոյանը զանգահարել է իրեն և հայտնել, որ կարող է 10.000.000 ՀՀ դրամի վարկ ձևակերպել իր քրոջ անունով, սակայն անհրաժեշտ է որպեսզի վարկի մարումները կանոնավոր կատարվի որպեսզի վարկային պատմությունը չխեղաթյուրվի և որպես իր ծառայությունների վարձատրության գումար պահանջել է վարկի գումարի 10%-ը տրամադրել իրեն: Ինքը ասել է, որ վարկի մարման երաշխիք պետք է տա Մ.Սարդարյանը և ոչ թե ինքը: Այնուհետև Մ.Սարդարյանը համաձայնվել է այդ պայմաններին և առանձին հանդիպել է Գ.Փաշոյանին գործարքի մանրամասները քննարկելու համար: Միևնույն ժամանակ Մ.Սարդարյանն իրեն հայտնել է, որ քանի որ վարկի գումարից 1.000.000 ՀՀ դրամը պետք է հանձնի Գ.Փաշոյանին որպես միջնորդավճար, և հենց այդքան է պակասում վարկը ստանալուց հետո որ իրեն վճարի խանութի ողջ արժեքը, ապա տարբերությունը՝ 1.000.000 ՀՀ դրամն իրեն կտա մոտ հինգ օր անց: Մի քանի օր անց իրեն է զանգահարել Գ.Փաշոյանը և հայտնել, որ Մ.Սարդարյանը նոտարական գրասենյակում հրաժարվել է գործարքը կնքելուց իմանալով, որ վարկը ձևակերպվում է ոչ թե իր, այլ Գևորգ Փաշոյանի քրոջ անվամբ: Երեկոյան Մ.Սարդարյանը զանգահարել է իրեն և կրկին հայտնել, որ համաձայն է վարկի ձևակերպման հետ, սակայն Գ.Փաշոյանը հայտնել է, որ բանկի ներկայացուցիչը կասկածներ է հայտնել Մ.Սարդարյանի գործարքից հրաժարվելու կապակցությամբ և դրանք փարատելու համար միջնորդավճարը կկազմի վարկի գումարի 16%-ը: Ինքը զանգահարել է Մ.Սարդարյանին և տեղեկացրել նոր պայմանների մասին: Մ.Սարդարյանը մոտ մեկ ժամ անց զանգահարել է իրեն և հայտնել, որ համաձայն է բայց, վարկը ստանալուց հետո իրեն է հանձնելու 1.600.000 ՀՀ դրամ պակաս գումար, որը կտա մի քանի օր անց, ինքը համաձայնվել է ասելով, որ գործարքը կկնքեն գումարը ամբողջությամբ տալուց հետո: Մի քանի օր անց Մ.Սարդարյանը զանգահարել է իրեն և հայտնել, որ գնում են բանկ գումարը ստանալու և խնդրել է իրեն ներկա գտնվել՝ պատճառաբանելով, որ Գ.Փաշոյանին լավ չի ճանաչում: Երբ գնացել է «ՎՏԲ Հայաստան բանկ» ՓԲԸ-ն Ավանի մասնաճյուղի մոտ, այնտեղ հանդիպել է Գ.Փաշոյանին, նրա քրոջը՝ Շուշանիկ Ռուշանյանին, Մ.Սարդարյանին իր կնոջ՝ Մարինա Մխիթարյանի և դստեր՝ Նատալիա Գրիգորյանի հետ: Ինքը սպասել է դրսում, իսկ Մ.Սարդարյանը Գ.Փաշոյանը և նրա քույրը մտել են բանկ: Նրանց վերադառնալուց հետո Մ.Սարդարյանը և Գ.Փաշոյանը իր ավտոմեքենայում հաշվել են գումարը որից հետո Մ.Սարդարյանն իրեն է տվել 4.000.000 ՀՀ դրամ: Որից հետո ինքը գնացել է իր գործերով, իսկ Գ.Փաշոյանը Մ.Սարդարյանին և նրա ընտանիքի անդամներին տարել է տուն: Նույն օրը՝ 09.06.2008 թվականին

երեկոյան, պայմանավորվածության համաձայն գնացել է Մ.Սարդարյանի բնակարան և վերջինս կնոջ ու դստեր ներկայությամբ իրեն է տվել ևս 4.000.000 ՀՀ դրամ և ասել, որ գումարի մնացած մասը մոտ 4.000 ԱՄՆ դոլար կտա մի քանի օր անց, քանի որ 10.000.000 ՀՀ դրամից 1.600.000 ՀՀ դրամը տվել է Գ.Փաշոյանին, 8.000.000 ՀՀ դրամը իրեն, իսկ 400.000 ՀՀ դրամն իրեն ներկայումս անհրաժեշտ է: Ինքը կրկին ստացական է գրել, որում նշել է, որ որևէ պահանջ այլևս չունի և խանութը կձևակերպի 16.06.2008 թվականին, քանի որ Մ.Սարդարյանը պարտավորվել էր պարտք մնացած 4.000 ԱՄՆ դոլարը վճարել հինգ օր անց՝ 16.06.2008 թվականին: Հաջորդ օրը՝ առավոտյան ժամը 10-ի սահմաններում գնացել է իր գրասենյակ ուր մուտքի մոտ տեսել է Միքայել Սարդարյանին: Վերջինս զրույցի ընթացքում հայտնել է, որ չի կարող տալ մնացած 4.000 ԱՄՆ դոլարը, բացի այդ հրաժարվում է խանութը գնելուց, քանի որ իրեն մոտ 15.000 ԱՄՆ դոլար գումար է անհրաժեշտ խանութը աշխատացնելու համար, իսկ աշխատացնելու դեպքում էլ իր հաշվարկներով խանութի ստացած եկամուտով չի կարողանա մարել վարկը և հոգալ իր կարիքները: Ինքը առաջարկել է Մ.Սարդարյանին վերադարձնել 9.000.000 ՀՀ դրամ /8.000.000 ՀՀ դրամ վարկից իրեն տրված գումարը և 1.000.000 ՀՀ դրամ ունեցել է գրասենյակի դրամարկղում/, իսկ մնացած գումարները հետագայում, քանի որ դրանք ծախսել է իր հոր գերեզմանի կառուցման համար: Մ.Սարդարյանը հայտնել է, որ իրեն գումար անհրաժեշտ չէ, իրեն գործ է պետք, որ ընտանիքը պահի, քանի որ որոշել է մշտական բնակություն հաստատել Հայաստանում: Ի վերջո իրենք պայմանվորվել են, որ Մ.Սարդարյանի տրված 8.000.000 ՀՀ դրամը մնա իր մոտ և ինքը նրանից վերցրած ամբողջ գումարի՝ 44.000 ԱՄՆ դոլարի դիմաց Մ.Սարդարյանին յուրաքանչյուր ամիս վճարի մոտ 2.000 ԱՄՆ դոլար գումար որպես տոկոս, ինչը այն ժամանակ համարժեք էր 620.000 ՀՀ դրամին՝ մինչև ամբողջ գումարի վերադարձը: Հաջորդ օրը Մ.Սարդարյանի առաջարկով, վերջինիս և նրա դստեր հետ գնացել են նոտարական գրասենյակ, որտեղ իր և Նատալիա Գրիգորյանի միջև կնքվել է փոխառության պայմանագիր, ըստ որի ինքը Ն.Գրիգորյանից փոխառությամբ մեկ ամիս ժամկետով վերցրել է 15.000.000 ՀՀ դրամ գումար: Գումարի չափը իր վերցրած գումարից 1.000.000 ՀՀ դրամով ավել և փոխառությունը մեկ ամիս ժամկետով ձևակերպելը եղել է Մ.Սարդարյանի պահանջը վերջինս պատճառաբանել է, որ եթե պայմանավորվածության համաձայն չկատարի ստանձնած պարտավորությունը, ապա նման դեպքում ինքը հնարավորություն կունենա ցանկացած պահի դիմել դատարան՝ ամբողջ գումարի բռնագանձման պահանջով: Ինքն օգոստոս ամսին Մ.Սարդարյանին է տվել 450.000 ՀՀ դրամ, սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին 620.000-ական դրամ, իսկ նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ընդհանուր առմամբ 965.000 ՀՀ դրամ որի մեջ ներառված է եղել Մ.Սարդարյանի ինքնաթիռի տոմսի արժեքը Երևան-Եկարտիրնբուրգ և հետադարձ ուղղություններով, ինչպես նաև ճանապարհածախսը: Հունվար և փետրվար ամիսներին Մ.Սարդարյանին է վճարել ընդամենը 172.000 ՀՀ դրամ, ինչի կապակցությամբ վերջինս դժգոհել է, ասելով որ խանմքին թոռնիկ ունի և չի կարողանում հոգալ ընտանիքի ծախսերը: Ինքը Մ.Սարդարյանի պարտքը վերադարձնելու պարտավորությունից դրդված, ճարահատյալ նույնիսկ փորձել է վաճառել իր երիկամը, և այդ նպատակով մի քանի լաբարատոր հետազոտությունների է ենթարկվել, սակայն վերջին հետազոտության ընթացքում պարզվել է, որ ինքը տառապում է «Հեպոտիտ C» հիվանդությամբ, ուստի իր երիկամը պիտանի չէ փոխպատվաստման համար: Նշեց, որ ինքը խարդախություն չի կատարել և Մ.Սարդարյանի գումարները հափշտակելու մտադրություն չի ունեցել, ուղղակի հանգամանքների բերումով և Մ.Սարդարյանի գործարքից հրաժարվելու կապակցությամբ ընկել է անելանելի վիճակի մեջ Մ.Սարդարյանից վերցված 44.000 ԱՄՆ դոլարից կարողացել է վերադարձնել ընդամենը 2.850.000 ՀՀ դրամ և չի հրաժարվում, որ նրա հանդեպ

ունի պարտավորություններ և գումար ունենալու դեպքում պատրաստ է հետ վերադարձնել պարտքը /դատական նիստի արձանագրություն/: Տուժող Մարինա Մխիթարյանը ցուցմունք տվեց, որ 2008 թվականին ամբողջ ընտանիքով Եկատիրինբուրգից տեղափոխվել են Երևան քաղաք: Իրենք ունեցել են մի փոքր խնայողություններ որով ցանկացել են Երևանում խանութ գնել, աշխատել, որպեսզի օգնեն իրենց դստերը մեծացնելու նրա փոքր երեխային, ով հոր մահից հետո կորցրել էր կերակրողին: Այդ նպատակով իրենք դիմել են մի քանի անշարժ գույքի գործակալների, այդ թվում նաև Սերգեյ Ղազարյանին: Վերջինիս առաջարկել է 50.000 ԱՄՆ դոլարով գնել Երևան քաղաքի Շիրազի փողոցի 52 շենքի դիմաց գտնվող խանութը, որը իրենք տեսնելուց հետո հավանել են: Դրանից հետո Սերգեյ Ղազարյանն իր ամուսնուն ծանոթացրել է Կարեն Բեգլարյանի հետ, ով այն ժամանակ զբաղվում էր ավիոտոմսերի վաճառքով, կրում էր փողկապ, վարում էր «Տուառեգ» ավտոմեքենա և զբաղվում էր ավտոմեքենաներ վարձակալությամբ հանձնելով ու թողնում էր պարկեշտ մարդու տպավորություն: Իր ամուսինը համաձայնության է եկել Կ.Բեգլարյանի հետ խանութը 48.000 ԱՄՆ դոլարով գնելու հարցում: Իր ամուսինը մի քանի անգամ Կարեն Բեգլարյանին և Սերյոժա Ղազարյանին հարցրել է խանութի փաստաթղթերը ինչ վիճակում են, նրանք երկուսն էլ պատասխանել են, որ դրանք նորմալ են, խանութը պատկանում է Կարեն Բեգլարյանին և խանութի բանալիները մշտապես գտնվել են վերջինիս մոտ: Կ.Բեգլարյանը համոզել է իր ամուսնուն վարկ վերցնել գրավադրելով իրենց բնակարանը, իրենք գումարը պետք է տրամադրեին երկու ամսվա ընթացքում: Կ.Բեգլարյանը պարտավորվել էր վարկը ստանալուց հետո խանութը անվանափոխել իր ամուսնու անվամբ: 2008 թվականի ապրիլի 16-ին իր ամուսինը Սերգեյ Ղազարյանի ներկայությամբ Երևան քաղաքի Պարոնյան 1 հասցեում գտնվող Կ.Բեգլարյանի գրասենյակում նրան է տվել 5.000 եվրո, որպես խանութի գնման կանխավճար: Այդ մասին գրվել է ստացական: Դրանից հետո նույն վայրում 18.04.2008 թվականին Կ.Բեգլարյանին իր ամուսինը տվել է 500 եվրո, 24.04.2008 թվականին՝ 1.000 ԱՄՆ դոլար, 26.04.2008 թվականին՝ 8.900 ԱՄՆ դոլար: Մինչ վարկի ձևակերպումն իր ամուսինը, որպես կանխավճար ամբաստանյալին է տվել իրենց մոտ առկա ամբողջ գումարը՝ ընդհանուր առմամբ 18.000 ԱՄՆ դոլարի չափով, իսկ Կ.Բեգլարյանը գրել է սատացական ասելով, որ դա ունի իրավաբանական ուժ: Այնուհետև, 04.06.2008 թվականին իրենք գնացել են նոտարական գրասենյակ՝ վարկ ձևակերպելու, այն ձևակերպում էր Կ.Բեգլարյանի ծանոթ Գևորգ Փաշոյանն իր քրոջ՝ Շուշանիկ Ռուշանյանի անունով: Գ.Փաշոյանը ասել է, որ իրենց հետ որևէ գործ չունի գործ ունի միայն Կ.Բեգլարյանի հետ: Վարկը ձևակերպվել էր Շ.Ռուշանյանի անվամբ, քանի որ դրա համար անհրաժեշտ էր ՀՀ քաղաքացու անձնագիր, իսկ իրենք այդ ժամանակահատվածում նման անձնագրեր չեն ունեցել: Իրենց որևէ մեկը չի ասել, որ անհրաժեշտ է հայկական անձնագիր, հակառակ դեպքում իրենք շատ ազգականներ ունեին ՀՀ-ում և վարկը կձևակերպեին իրենց ազգականների անվամբ: Գործարքը կնքելուց հետո բանկի աշխատակիցն իրենց ասել է, որ իրենց բնակարանի դիմաց տրամադրվել է 30.000 ԱՄՆ դոլար վարկ, իրենք անակնկալի են եկել, քանի որ նախապես գիտեին թե տրամադրվելու է ընդամենը 18.000 ԱՄՆ դոլար: Խորհրդակցելուց հետո իրենք համաձայնվել են այդ գումարի չափին, քանի որ հենց այդքան գումար պետք է տային Կ.Բեգլարյանին ու մտածել, որ միևնույն է խանութն իրենց անվամբ ձևակերպվելուց հետո կաշխատեն և աստիճանաբար կմարեն տոկոսները: Իր ամուսինը զանգահարել է Կ.Բեգլարյանին հետաքրքրվել թե ինչու է 30.000 ԱՄՆ դոլար վարկ տրամադրվում, իսկ վերջինս ասել է, որ իր ավտոմեքենանել է գրավադրված 12.000 ԱՄՆ դոլարի դիմաց: 09.06.2008 թվականին իրենք գնացել են ՎՏԲ բանկի Ավանի մասնաճյուղ վարկը ստանալու: Բանկի աշխատակիցը պոլիէթիլենային տոպրակով դուրս է բերել գումարը և

տարել Կ.Բեգլարյանի ավտոմեքենայի մեջ: Գումարը, ոչ թե 10.000.000 ՀՀ դրամ էր ինչպես նշված էր պայմանագրում, այլ 8.400.000 ՀՀ դրամ: Իր ամուսինը վրդովվել է գումարը պակաս լինելու կապակցությամբ, իսկ Կ.Բեգլարյանը ասել է, որ 1.600.000 ՀՀ դրամ գումարը տվել է որպես պարգևատրում և ինքը մեզ կվճարի այն: Ավտոմեքենայի մեջ Կ.Բեգլարյանը հաշվել և իրեն է պահել 4.000.000 ՀՀ դրամ՝ մնացածը հանձնել է իր ամուսնուն և հեռացել: Երկու ժամ անց ամբաստանյալը եկել է իրենց տուն և սկսել է պահանջել մնացած գումարը, ասելով, որ ամեն ինչ կգրի ստացականում, որը իրավաբանական ուժ ունի և գրեց, որ 16.06.2008 թվականին խանութը կձևակերպի իրենց անվամբ: Տանից դուրս գալու պահին նա ասեց, որ մենք չանհանգստանանք և որ ամբողջ գումարը իր մոտ է և այդ ամենը կձևակերպվի նաև նոտարական կարգով: 2008 թվականի հունիսի 11-ին ամբաստանյալը եկել է իմ ամուսնու և դստեր հետևից, նրանց տարել նոտարի մոտ և ձևակերպել 15.000.000 ՀՀ դրամի չափով պարտք: 2008 թվականի հունիսի 16-ից հետո իրենք կանգնեցին մեծ բարդությունների առջև, քանի որ Կ.Բեգլարյանը խանութը չէր ձևակերպում և իր ամուսնուն մշտապես խաբում էր ասելով «վաղը արի, մյուս օրը արի, երեքշաբթի արի, չորեքշաբթի արի» ամեն անգամ հետաձգելով խանութի ձևակերպումը: Կարկի օրը մոտենում էր, իսկ խանութը դեռ չէր ձևակերպվել իրենց անվամբ: Դրանից հետո Կ.Բեգլարյանը ասել է, որ վարկի տոկոսներն ինքը կմարի: Երկու ամիս նա տվել է 600.000 ՀՀ դրամ, քանի որ երկրորդ ամիսն էր, որ խանութը իրենց անվամբ չէր ձևակերպված: Ամբաստանյալը մշտապես խաբում էր ասելով, որ խանութը վերահասցեավորվում է և պետք է սպասել: Հետո Կ.Բեգլարյանը հայտնել է, որ խանութի փաստաթղթերը գտնվում են Սերգեյ Դալլաքյանի մոտ, ով բնակվում է Կրասնոսելսկում և նրան ինքը 15.000 կամ 20.000 ԱՄՆ դոլար է պարտք և պետք է վերադարձնի որպեսզի նա տրամադրի խանութի փաստաթղթերը: Դրանից հետո նա հայտնել է, որ Ս.Դալլաքյանի կինը քաղցկեղով հիվանդ է և ներկայումս նա ժամանակ և տրամադրություն չունի: Իրենք խնդրել են ծանոթացնել իրենց Ս.Դալլաքյանի հետ որպեսզի համոզվեն իրականում այդպիսի անձնավորություն գոյություն ունի թե ոչ, բայց ծանոթությունը այդպես էլ տեղի չի ունեցել: Հետո իր ամուսինը պահանջել է իր տված գումարները ցանկանալով այլ խանութ գնել, սակայն ամբաստանյալը միշտ հետաձգել է գումարների վերադարձը ասելով «10 օրից Ռուսաստանից կուղարկեն, 15 օրից՝ Ֆրանսիայից, 20 օրից Ամերիկայից» Հնարավոր է, որ նրան ուղարկել են այդ գումարները, բայց դրանք իրնեց չեն հասել: Հետո նա ասել է, որ վաճառում է իր երիկամը՝ 25.000 ԱՄՆ դոլարով գնորդներ կան և այդ անձինք իրեն են տվել 5.000 ԱՄՆ դոլար հետազոտություններ անցնելու համար: Որոշ ժամանակ անց իբր պարզվեց, որ նրա երիկամը փչացած է, բայց եթե նա ցանկություն ունենար վերադարձնելու գումարները, ապա կարող էր վաճառել իր մոր կամ երեխաների կամ բարեկամների երիկամները: Դրանից հետո ամբաստանյալը հեռախոսին չէր պատասխանում կամ անհասանելի էր և այդպես ձգվեց ութ ամիս: Իր ամուսինը Կ.Բեգլարյանին ասել է, որ կդիմի դատարան, իսկ նա խնդրել է, որ դիմի ոչ թե քրեական դատարան այլ քաղաքացիական ասելով, որ մնալով ազատության մեջ հնարավորություն կունենա աշխատել և վերադարձնել գումարը: 2009 թվականի փետրվարին իր ամուսինը դիմել է դատարան այդ ժամանակ իրենք արդեն Կ.Բեգլարյանի հետ կապը կորցրել էին: Դատական գործի քննության ընթացքում իրենց հայտնի դարձավ, որ Կ.Բեգլարյանի անվամբ որևէ գույք հաշվառված չէ, բացառությամբ 1980 թվականի արտադրության մի հին ավտոմեքենայի, իսկ խանութը նա օտարել էր դեռևս 2007 թվականին, փաստորեն նա վաճառում էր մի գույք որը նրան չէր պատկանում: 2009 թվականի հոկտեմբերի 16-ին դատարանը գործի քննությունն ավարտեց նրա բացակայությամբ և բավարելով իրենց հայցը Կ.Բեգլարյանից իրենց օգտին բռնագանձեց 44.214 ԱՄՆ դոլար գումար, այդ գումարի վրա

	հաշվարկելով ամսական 1% մինչև գումարի մարումը: Դրանից հետո, մոտ մեկ տարի անց իրեն հաջողվել է հեռախոսազրույց ունենալ Կ.Բեգլարյանի հետ, ում ասել է եթե նա չվերադարձնի իրենց գումարները կամ չձևակերպի իրենց անվամբ խանութը, ապա ինքը կդիմի իրավապահ մարմիններին: Կ.Բեգլարյանն իրեն ասել է, որ ինքը հաշվեհամար բացի և նա քիչ-քիչ կմարի իրենց գումարը, սակայն այլևս իրեն չի զանգահարել: Իր կարծիքով Կ.Բեգլարյանը և Ս.Ղազարյանը նախնական համաձայնության են եկել իրենցից առանձնապես խոշոր չափի գումարներ հափշտակելու հարցում և գործել են համատեղ /դատական նիստի արձանագրություն/: Վկա Սերյոժա Ղազարյանը ցուցմունք տվեց, որ մանուկ հասակից ճանաչում է Կարեն Բեգլարյանին և իմացել է, որ նա իրենց շենքի դիմաց խանութ ունի: 2008 թվականին զբաղվել է անշարժ գույքի առքուվաճառքով, այդ ընթացքում Կ.Բեգլարյանից տեղեկացել է, որ խանութը վաճառում է: Մի քանի ամիս անց՝ ապրիլին իրեն է դիմել իր ծանոթներից Էմման ով զբաղվում է պատճենահանությամբ Աջափնյակի նոտարական գրասենյակում և ասել, որ իր բարեկամը՝ Միքայել Սարդարյանը ցանկանում է խանութ ձեռք բերել: Մ.Սարդարյանն իրեն հայտնել է, որ գույքի դիմաց կարող է վճարել 50.000 ԱՄՆ դոլար գումարի սահմաններում: Ինքը նրան է, ցույց տվել Կ.Բեգլարյանի խանութը և Մ.Սարդարյանը այն տեսնելով հավանել է: Դրանից հետո իրենք հանդիպել են Կ.Բեգլարյանին: Ամբաստանյալը խանութը վաճառում էր 50.000 ԱՄՆ դոլարով, իսկ Մ.Սարդարյանը սակարկում էր այդ գումարը ասելով, որ պատրաստ է վճարել 48.000 ԱՄՆ դոլար: Կ.Բեգլարյանը չէր համաձայնվում խանութի արժեքը նվազեցնելու առաջարկին՝ մտածելով, որ իրեն որպես անշարժ գույքի գործակալի պետք է գումար տրամադրի: Տեսնելով, որ կողմերն ընդհանուր հայտարարի չեն գալիս ինքը հաշվի առնելով, որ Մ.Սարդարյանը հրաժարվում էր միջնորդվճարից ասելով, որ այն պետք է վճարի վաճառողը և որ Կ.Բեգլարյանը ուներ գումարային խնդիրներ, հայտնել է, որ իրեն գումար պետք չէ: Դրանից հետո Մ.Սարդարյանը և Կ.Բեգլարյանը պայմանավորվել են, որ խանութի գինը 48.000 ԱՄՆ դոլար: Երկու օր անց Մ.Սարդարյանը զանգահարել է իրեն և խնդրել ներկա գտնվել կանխավճարի տրամադրման ժամանակ: Այնուհետև իր ներկայությամբ Երևան քաղաքի Պարոնյան 1 հասցեում գտնվող գրասենյակում Մ.Սարդարյանը Կ.Բեգլարյանին տվել է 5.000 եվրո՝ որպես կանխավճար, Մ.Սարդարյանը խոստացել է մարել մնացած գումարը վճարել մաս-մաս երկու ամսվա ընթացքում: Այս ամենի վերաբերյալ գրվել է ստացական, որը ստորագրել է նաև ինքը: Դրանից հետո այլևս Մ.Սարդարյանին չի հանդիպել: Նշեց նաև, որ ինքը երբեք հավաստիացումներ չի տվել, որ խանութի փաստաթղթերը նորմալ վիճակում են և չէր էլ կարող տալ, քանի որ դրանք չի տեսել, ուղղակի համոզված է եղել որը խանութը պատկանում է Կ.Բեգլարյանին՝ դրա բանալիները գտնվել են նրա մոտ և տարիներ շարունակ իմացել է որ խանութի սեփականատերը հենց Կ.Բեգլարյանն է: Հայտնեց, որ Կ.Բեգլարյանի և Մ.Սարդարյանի միջև վարկ վերցնելու խոսակցություն չի եղել, իսկ Կ.Բեգլարյանի կողմից Մ.Սարդարյանից բացի իր ներկայությամբ տրված կանխավճարից այլ գումարներ վերցնելու մասին իմացել է միայն այն ժամանակ երբ իրեն կանչել են ՀՀ ոստիկանության 6-րդ վարչություն: Մինչ այդ իրեն մի քանի անգամ զանգահարել է Մ.Մխիթարյանը Կ.Բեգլարյանի հետ կապ հաստատելու խնդրանքով, ինքը սկզբում օգնել նրան և գտել է Կ.Բեգլարյանին, հետագայում Մ.Մխիթարյանը սկսել է վիրավորել իրեն որից հետո ինքը չի ցանկացել խոսել նրա հետ: Այդ ընթացքում Կ.Բեգլարյանին հարցրել է թե ինչու խանութը չի ձևակերպել Մ.Սարդարյանի անվամբ, իսկ վերջինս պատասխանել է, որ գումարն ամբողջությամբ չեն վճարել, հետո Կ.Բեգլարյանից տեղեկացել է, որ խանութը պարտքի դիմաց գրավադրվել է և այն վերադարձնելուց հետո միայն կարող է ձևակերպել գնորդի անվամբ, իսկ ավելի ուշ նոր միայն իրեն հայտի է դարձել, որ խանութը ոչ թե կալանքի տակ է, այլ անվանափոխվել է Ս.Դալլաքյանի անվամբ:

Հայտնեց նաև, որ ներկա չի գտնվել Կ.Բեգլարյանի կողմից Մ.Սարդարյանին գումար վերադարձնելուն, սակայն ականատես է եղել նրան, որ Կ.Բեգլարյանը նրան է փոխանցել ինքնաթիռի տոմս որի գումարը Կ.Բեգլարյանը վճարել է երկու օր անց /դատական նիստի արձանագրություն/: Վկա Սերյոժա Դալլաքյանը ցուցմունք տվեց, որ 1988 թվականից ճանաչել է ներկայումս հանգուցյալ Վլադիմիր Բեգլարյանին, ով ամբաստանյալի հայրն է: 2006-2007 թվականներին ինքը Կ.Բեգլարյանի հետ եղել է գործնական հարաբերությունների մեջ և գումարներ է ներդրել նրա բիզնեսում շահույթ ստանալու նպատակով: 2007 թվականի վերջին Կ.Բեգլարյանի ձեռնարկված գործերը հաջողությամբ չեն պսակվել և նա այլևս չի կարողացել իրեն ինչպես շահույթ տրամադրել, այնպես էլ իր ներդրած գումարները վերադարձնել: Փոխադարձ հաշվարկի արդյունքում պարզել են, որ Կ.Բեգլարյանն իրեն պետք է վերադարձնի մոտ 10.600.000 ՀՀ դրամ ինչը համարժեք է եղել 30.000 ԱՄՆ դոլարին: Թեև Կ.Բեգլարյանի խանութի արժեքը եղել է անհամեմատ ավելի բարձր քան նրա ունեցած իրեն հանդեպ պարտավորության գումարը, սակայն որպես պարտավորությունը կատարելու երաշխիք Վլադիմիր Բեգլարյանի առաջարկով նրա որդուն՝ ամբաստանյալին պատկանող Երևան քաղաքի Շիրազի փողոցի 52 շենքի դիմաց գտնվող խանութը առքուվաճառքի պայմանագրով օտարվել է իրեն՝ պայմանով, որ պարտքը վերադարձնելու դեպքում խանութը կրկին կանվանափոխվի Կ.Բեգլարյանի կամ խանութի գնորդի անվամբ: Այդ ժամանակ խանութը նույնիսկ հասցե չի ունեցել և ինքը զբաղվել է նաև այդ հարցերով, որից հետո միայն 2007 թվականի դեկտեմբերի 26-ին Կ.Բեգլարյանի հետ խանութի առուվաճառքի պայմանագիր են կնքել: Դրանից հետո Կ.Բեգլարյանի ասածի համաձայն ինքը երկու անգամ Ճամբարակից՝ ուր բնակվում է, եկել է Երևան և միասնական տեղեկանք է վերցրել կադաստրից խանութը վաճառելու նպատակով, սակայն գործարք չի կնքվել, քանի որ գնորդները ըստ Կ.Բեգլարյանի հրաժարվել են խանութը գնելուց: 2008 թվականի ապրիլի վերջին Կ.Բեգլարյանն իրեն ասել է, որ Ռուսաստանից գնորդ կա որը բեհ է տվել և խանութը պետք է գնի: Ինքը Կ.Բեգլարյանին հայտնել է, որ գումարները վերցնի, նոր իրեն տեղյակ պահի, քանի որ իր համար դժվար է յուրաքանչյուր անգամ 120 կմ ճանապարհ կտրել, հասնել Երևան, գումար վճարել տեղեկանքը կադաստրից ստանալու համար ու վերջում իմանալ, որ գործարքը չի կայանալու: Դրանից հետո Կ.Բեգլարյանն իրեն չի զանգահարել և, ինքը տեղյակ չի եղել, որ Կ.Բեգլարյանը 2008 թվականի ապրիլ-հունիս ամիսներին խանութը վաճառելու համար ստացել է 44.000 ԱՄՆ դոլար գումար, այդ մասին իրեն հայտնի է դարձել նախաքննության ընթացքում՝ քննիչից: Կ.Բեգլարյանը իրեն երբևէ գումար չի տվել /դատական նիստի արձանագրություն/: Վկա Գևորգ Փաշոյանը ցուցմունք է տվել, որ զբաղվում է անշարժ գույքի առքուվաճառքով և բանկերից վարկի տրամադրման գործերով: 2008 թվականի մայիս ամսին կոնկրետ օրը չի հիշում, իրեն է զանգահարել մի տղամարդ, ով ներկայացել է Կարեն անունով և հարցրել զբաղվում է արդյոք վարկի տրամադրման գործերով, ինքը մանրամասները քննարկելու համար նրա հետ հանդիպել է իր կողմից Դավթաշենում վարձակալած բնակարանի շենքի բակում և ծանոթացել է Կարեն Բեգլարյանի հետ, ով իրեն ասել է, որ իր ծանոթներից մեկի տունն է ուզում գրավադնել, որոնք իրեն գումար են պարտք, բացի այդ ցանկանում էր իր «Ֆոլցվագեն» ավտոմեքենան և հացի փուռը գրավադնել: Ինքը նրան հայտնել է, որ վարկի գումարի 16%-ը պետք է տրամադրվի իրեն որպես միջնորդավճար: Դրանից մի քանի օր անց Կ.Բեգլարյանը հեռախոսով հայտնել է, որ տունը գրավ դնող անձանց հետ խոսել է և պետք է գործընթացը սկսել: Այնուհետև ինքը Կ.Բեգլարյանի հետ գնացել է Միքայելի Դավթաշենում գտնվող բնակարան, նրա հետ խոսել է՝ Մ.Սարդարյանը համաձայնվել է վարկի գումարի 16%-ը տրամադրել որպես միջնորդավճար: Հաջորդ օրն ինքը

Մ.Սարդարյանենց տուն տարել է բնակարան գնահատողներին և բոլոր փաստաթղթերը հավաքելուց հետո դրանք ներկայացրել է ՎՏԲ բանկի Ավանի մասնաճյուղ: Միքայել Սարդարյանի և նրա ընտանիքի անդամների ՌԴ քաղաքացիներ լինելու պատճառով, ինքը համաձայնվել է վարկը ձևակերպել քրոջ՝ Շուշանիկ Ռուշանյանի անվամբ: Հետագայում՝ նոտարի մոտ պայմանագիրը կնքելու ժամանակ, Միքայել Սարդարյանը տեղեկացել է, որ ամբողջ վարկը 10.000.000 ՀՀ դրամի չափով պետք է ձևակերպվի իրենց բնակարանի գրավադրմամբ և սկսել է վիճել Կ.Բեգլարյանի հետ, ինքը նրանց խոսակցությունից հասկացել է, որ բնակարանի գրավադրմամբ պետք է 18.000 ԱՄՆ դոլարի չափով վարկ վերցվեր, իսկ մնացած 12.000 ԱՄՆ դոլարի դիմաց Կ.Բեգլարյանը պետք է ավտոմեքենա գրավադներ: Կ.Բեգլարյանի հետ առանձին խոսելուց հետո Մ.Սարդարյանը ասել է, որ համաձայն է վարկի նման պայմաններին: Հինգ օր անց քրոջ հետ գնացել է բանկ, որտեղ տեսել է Կ.Բեգլարյանին, Մ.Սարդարյանին նրա կնոջը և աղջկան: Էդգար Ղազարյանը ով բանկի աշխատակից էր և իրեն օգնել է վարկը ձևակերպելու հարցում վերցրել է իրենց հասանելիք 1.600.000 ՀՀ դրանը, իսկ մնացած՝ 8.400.000 ՀՀ դրամը իրենք տվել են Կ.Բեգլարյանին, ով Մ.Սարդարյանի հետ նստած է եղել իր ավտոմեքենայում, նրանք երկուսով հաշվել են գումարները, որից հետո ինքը Կ.Բեգլարյանի առաջարկով Մ.Սարդարյանի ընտանիքին իր ավտոմեքենայով տարել է տուն: Ճանապարհին Մ.Սարդարյանի և նրա կնոջ խոսակցությունից հասկացել է, որ նրանք վարկից 4.000.000 ՀՀ դրամը տվել են Կ.Բեգլարյանին՝ ինչ-որ խանութ են ուզում գնել և որ մնացած գումարը պայմանավորվել են տալ առուվաճառքի պայմանագիրը կնքելուց հետո /գ.թ.135-138/: Գ.Փաշոյանը Կ.Բեգլարյանի հետ առերես հարցաքննվելիս հիմնականում պնդել է իր ցուցմունքը, սակայն հայտնել է նաև այլ տեղեկություններ, որոնք էապես հակասում են իր նախորդ ցուցմունքից, մասնավորապես. նշել է, որ Կ.Բեգլարյանը ցանկացել է 100.000 ԱՄՆ դոլարի չափով վարկ վերցնել գրավադրելով իր ավտոմեքենան, հացի փուռը և բնակարան, ինքը պատասխանել է, որ վարկը տրամադրելու դեպքում դրա 10%-ը պետք է իրեն հատկացվի որպես միջնորդավճար: Հետո պայմանավորվել են, որ գրավադրվելու է միայն բնակարանը: Նոտարական գրասենյակում պայմանագիրը կնքելուց հետո Մ.Սարդարյանը վիճել է Կ.Բեգլարյանի հետ կապված թե վարկի գումարի չափի մասին, թե այլ անձի անվամբ վարկը ձևակերպելու մասին և թե Կ.Բեգլարյանի ավտոմեքենան գրավի առարկա չդարձնելու հանգամանքի վերաբերյալ: Դրան ականատես են եղել նաև բանկի ներկայացուցիչը և էդգար Ղազարյանը, վերջինս ասել է, որ տեսնելով Կ.Բեգլարյանի և Մ.Սարդարյանի խոսակցությունը բանկի ներկայացուցիչը որոշել է չեղյալ համարել պայմանագիրը, իսկ որպես խնդրի շտկում առաջարկել է միջնորդավճար տրամադրել ոչ թե վարկի գումարի 10%-ը այլ 16%-ը: Ինքն այդ մասին տեղեկացրել է Կ.Բեգլարյանին, որից հետո իրեն է զանգահարել Մ.Սարդարյանը և ասել, որ համաձայն է վարկի գումարի 16%-ը տրամադրել որպես միջնորդավճար: Վարկը ստանալու օրը ինքը քրոջ հետ գնացել է բանկ այնտեղ հանդիպել է Կ.Բեգլարյանին, Մ.Սարդարյանին նրա կնոջը և դստերը: Իր քույրը ստացել է 10.000.000 ՀՀ դրամ վարկի գումարը, որից հետո էդգար Ղազարյանը վերցրել է 1.600.000 ՀՀ դրամ իրենց միջնորդավճարը իսկ մնացած 8.400.000 ՀՀ դրամը տվել է իրեն, ինքը քրոջ հետ դուրս է եկել բանկից և գումարը փոխանցել է Մ.Սարդարյանին, ով նստել է Կ.Բեգլարյանի ավտոմեքենան և նրանք հաշվել են գումարը /գ.թ. 143-145/: Վկա Նատալիա Գրիգորյանը ցուցմունք տվեց, որ 2008 թվականին իր ծնողները՝ Միքայել Սարդարյանը և Մարինա Մխիթարյանը, որոշել են խանութ գնել և բրոքեր Սերգեյ Ղազարյանի միջոցով ծանոթացել են Կարեն Բեգլարյանի հետ, ով Երևան քաղաքի Շիրազի 52-րդ հասցեում խանութ էր վաճառում: Ինքը ծնողների խոսակցություններից լսել է, որ Կ.Բեգլարյանն առաջարկել է վարկ

ձևակերպել 18.000 ԱՄՆ դոլարի չափով, քանի որ նրանց գումարները բավարար չեն եղել 48.000 ԱՄՆ դոլար արժեքով խանութը ձեռք բերելու համար: Գործարքը կնքելիս՝ նոտարական գրասենյակում, իրենց հայտնի է դարձել, որ իրենց բնակարանի դիմաց տրամադրվող վարկը 30.000 ԱՄՆ դոլար է, իրենք վրդովվել են, քանի որ նախապես գիտեին որ վարկը լինելու է 18.000 ԱՄՆ դոլարի չափով, սակայն իր ծնողները խորհրդակցելուց հետո համաձայնվել են՝ մտածելով, որ միևնույն է պետք է խանութի ամբողջ գումարը տան և ավելի լավ է այդ չափով վարկը ստանալ այն վճարել և խանութը անվանափոխել իրենց անվամբ: Վարկը ստանալու օրը բանկի աշխատակիցը դուրս է բերել գումարը և տարել Կ.Բեգլարյանի ավտոմեքենայի մեջ, որտեղ Կ.Բեգլարյանը հաշվել է որոշակի գումար, իսկ մյուս մասը տվել է իր հորը: Հետագայում հորից իմացել է, որ բանկից դուրս են բերել ընդամենը 8.400.000 ՀՀ դրամ՝ 10.000.000 ՀՀ դրամի փոխարեն, որից Կ.Բեգլարյանն իրեն է պահել 4.000.000 ՀՀ դրամ, իսկ 4.400.000 տվել է իր հորը: Նույն օրը մի քանի ժամ անց Կ.Բեգլարյանը եկել է իրենց տուն և խնդրել է տրամադրել մնացած գումարը, նա ասել է, որ ամեն ինչը կնշի ստացականի մեջ նշելով խանութի վերաձևակերպման ամսաթիվը, ու շեշտել, որ դա ունի իրավաբանական ուժ: Այդ պահին իրենց մտքով անգամ չէր անցնում, որ նա պատրաստվում է իրենց խաբել: Գումարը վերցնելուց հետո Կ.Բեգլարյանը ստացականում նշեց և պարտավորվեց 16.06.2008 թվականին խանութը վերաձևակերպել իրենց անվամբ: Մինչ գնալը նա առաջարկեց նաև նոտարական վավերացմամբ պայմանագիր կնքել, պատճառաբանելով՝ որ չանհանգստանանք որ գումարը գտնվում է իր մոտ: Երկու օր անց Կ.Բեգլարյանը եկել է իրենց հետևից և ինքը հոր հետ միասին գնացել են նոտարական գրասենյակ պայմանագիրը կնքելու: Պայմանագրի մեջ նշված գումարի չափը 15.000.000 ՀՀ դրամ նույնպես առաջարկել է Կ.Բեգլարյանը: Խանութը ձևակերպելու օրը՝ 16.06.2008 թվականից հետո, իր ծնողների մոտ խնդիրներ առաջացան՝ իր հայրը ամեն օր գնում էր նրա գրասենյակ և ամեն օր Կ.Բեգլարյանը ինչ-որ պատճառաբանություններ է բերել ձևակերպումը հետաձգելու համար: Ինքն ականատես է եղել այդ երեք տարիների ընթացքում իր ծնողներն ինչպես են տանջվել, նույնիսկ իր հայրը սրտի նոպաներ է ունեցել, ինքը ստիպված է եղել առավոտից երեկո աշխատել, որպեսզի կարողանա կերակրել իր երեխային:Հայտնեց նաև, որ խանութը այլ անձին պատկանելու մասին տեղեկացել են միայն այն ժամանակ, երբ իր հայրը Կ.Բեգլարյանի դեմ հայցով դիմել է դատարան և հակադիր կատարողները պարզել են, որ խանութը դեռևս 2007 թվականին վաճառվել է: Նշեց նաև, որ խանութը ձեռք բերելու համար իր հայրը նախատեսում էր վաճառել ՌԴ-ում իրենց պատկանող բնակարանը և միգուցե վաճառքի գումարով պետք է մարեր վերցրած վարկը /դատական նիստի արձանագրություն/: Նախաքննական մարմինը 25.04.2011 թվականին որոշում է կայացրել ապացույց ճանաչել ստացականը՝ համաձայն որի այն գրվել է 16.08.2008 թվականին Կարեն Բեգլարյանի և Միքայել Սարդարյանի կոմից Սերգեյ Ղազարյանի ներկայությամբ ձեռագիր տեքստով: Նշված ստացականի համաձայն Կ.Բեգլարյանը Միքայել Սարդարյանից վերցրել է 5.000 եվրոին համարժեք դրամ նախավճարի տեսքով Երևան քաղաքի Շիրազի 52-րդ հասցեում գտնվող անշարժ գույքի վաճառքի դիմաց որի ամբողջ գինը կազմում է 48.000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ: Միքայել Սարդարյանը պարտավորվել է մնացած գումարը վճարել երկու ամսվա ընթացքում սեփականության իրավունքը ձեռք բերելու համար: Կ.Բեգլարյանը պարտավորվել է մնացած գումարը ստանալու պահին նոտարական վավերացմամբ որպես սեփականատեր ճանաչել և տալ սեփականության իրավունքը Միքայել Սարդարյանին: Կազմված փաստաթղթի հակառակ էջում կատարվել են լրացումներ համաձայն որոնց 18.04.2008, 24.04.2008 և 26.04.2008 թվականներին Կ.Բեգլարյանը

ստացել է համապատասխանաբար 500 եվրոին համաժեք 245.000 ՀՀ դրամ, 1.000 ԱՄՆ դոլար, 8.800 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: 26.04.2008 թվականի դրությամբ ընդհանուր վերցրած գումարի չափը կազմել է 5.794.000 ՀՀ դրամ: Այնուհետև առկա է հետևյալ նշումը՝ «Ես Բեգլարյան Կարենս ստացա Միքայել Սարդարյանից ևս 8.000.000 դրամ խանութի դիմաց և պահանջ չունեմ պարտավորվում եմ մինչև 16.06.2008 թ. խանութի սեփականության իրավունքը հանձնել Միքայել Սարդարյանին հակառակ դեպքում վերադարձնել ամբողջ գումարը, իմ կողմից վերցրած որը նշված է տվյալ ստացականի մեջ. 09.06.2008 գրված է իմ ձեռքով, որի համար ստորագրում եմ և կրում եմ պատասխանատվություն Բեգլարյան Կարեն /ստորագրություն/ 09.06.2008թ.»: /գ.թ. 7/: Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 16.10.2009 թվականի թիվ ԵԱԴԴ 0231/02/09 գործով կայացված վճռի համաձայն Կարեն Բեգլարյանից հօգուտ Միխաիլ Սարդարյանի բռնագանձվել է 44.214 ԱՄՆ դոլարին համարժեք 13.794.000 ՀՀ դրամ /գ.թ.17-19/: 11.06.2008 թվականին Նատալիա Գրիգորյանի և Կարեն Բեգլարյանի միջև նոտարական վավերացմամբ կնքվել է փոխառության պայմանագիր, ըստ որի Կ.Բեգլարյանը Ն.Գրիգորյանից փոխառությամբ՝ մեկ ամիս ժամկետով վերցրել է 15.000.000 ՀՀ դրամ գումար /գ.թ.64/: Նախաքննական մարմինը 25.02.2011 թվականի որոշմամբ /գ.թ.121/ որպես ապացույց է ճանաչել նաև քրեական գործի 73-ից 76-րդ էջերում առկա «դիմում» վերտառությամբ փաստաթուղթը, նշելով, որ այն Մաշտոցի քննչական բաժին է ուղարկել Միքայել Սարդարյանը, ու պատճառաբանել, որ այդ դիմումով հաստատվում են քրեական գործի համար կարևոր նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ: Քրեական գործի դատաքննության ընթացքում ամբաստանյալի շահերի պաշտպանը միջնորդություն է ներկայացրել ապացույց ճանաչված դիմումը անթույլատրելի ապացույց ճանաչելու վերաբերյալ՝ պատճառաբանելով, որ քննիչի կողմից որոշումը կայացնելիս խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածը, չի ստուգվել այդ փաստաթղթի ծեռք բերման աղբյուրը, եթե նույնիսկ այդ փաստաթուղթը կեղծված չէ և գրված է Միքյել Սարդարյանի կողմից, ապա այն ապացուցողական նշանակություն չի կարող ունենալ դրանով խախտվում են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի «դ» կետը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 216-րդ հոդվածի 1-ին մասը, 65-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը և 126-րդ հոդվածը, ուստի նույն օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 5-րդ կետերի ուժով այն պետք է հանել քրեական գործով ապացույցների շրջանակից: Տուժող Մարինա Մխիթարյանը խնդրեց միջնորդությունը մերժել նշելով, որ ապացույց ճանաչված դիմումը գրել է իր ամուսինը և ՌԴ-ից ուղարկել քննիչին ֆաքսի միջոցով, իր ամուսինը այն գրել է ռուսերեն լեզվով, այն թարգմանվել է հայերեն արտոնագիր ունեցող թարգմանչի կողմից, որից հետո իր ամուսինը ստորագրել է և ուղարկել: Մեղադրողը միջնորդության դեմ առարկեց նշելով, որ պաշտպանական կողմը շփոթել է ապացույցների տեսակները՝ վկայի ցուցմունքը որպես ապացույցի տեսակ և այլ փաստաթուղթը որպես ապացույցի տեսակ: Պաշտպանի վկայակոչած դրույթները վերաբերում են վկայի ցուցմունքին որպես ապացույցի տեսակի և քանի որ Մ.Սարդարյանից ցուցմունք չի վերցվել հետևաբար նրա հետ առերես հարցաքննվելու կամ նրան հարցեր տալու իրավունք Կ.Բեգլարյանը ծեռք չի բերել, ուստի դրա խախտման մասին խոսք լինել չի կարող: Քննիչը որպես ապացույց է ճանաչել Մ.Սարդարյանի կողմից ուղարկված դիմումը, որպես այլ փաստաթուղթ և այն ինքնուրույն ապացույցի տեսակ է: Իսկ ծեռք բերման աղբյուրը հայտնի է տուժողը հայտնեց, որ այն ուղարկել է իր ամուսինը: Խնդրեց միջնորդությունը մերժել: Դատարանը ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 2-րդ մասով որոշում է կայացրել միջնորդության լուծումը

հետաձգելու մասին և այն քննության առարկա դարձնել վերջնական դատական ակտ կայացնելու ընթացքում: Քննության առնելով ներկայացված միջնորդությունը դատարանը գտնում է, որ այն ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ. ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք (…)»: ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի համաձայն «(…) Արգելվում է օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործումը (…)»: «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք (…) »: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն «Քրեական գործով ապացույցներ են ցանկացած փաստական տվյալները, որոնց հիման վրա օրենքով որոշված կարգով հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը պարզում են քրեական օրենսգրքով նախատեսված արարքի առկայությունը կամ բացակայությունը, այդ արարքը կասկածյալի կամ մեղադրյալի կողմից կատարելը կամ չկատարելը և մեղադրյալի մեղավորությունը կամ անմեղությունը, ինչպես նաև գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ»: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 5-րդ կետերի համաձայն «1. Քրեական գործով վարույթում մեղադրանքի հիմքում չեն կարող դրվել և որպես ապացույց օգտագործվել այն նյութերը, որոնք ձեռք են բերվել՝ (…) 2) կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքի, դատավարության լեզվին չտիրապետող անձանց իրավունքների՝ սույն օրենսգրքով նախատեսված լրացուցիչ երաշխիքների էական խախտմամբ. (…) 5) քննչական կամ այլ դատավարական գործողության կատարման կարգի էական խախտմամբ. (…) »: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն «Ապացույցներ ձեռք բերելիս էական են այն խախտումները, որոնք, դրսևորվելով մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների կամ սույն օրենսգրքի որևէ պահանջի խախտմամբ, դատավարության մասնակիցներին՝ օրենքով երաշխավորված իրավունքների զրկմամբ կամ սահմանափակմամբ կամ որևէ այլ կերպ ազդել են կամ կարող էին ազդել ստացված փաստական տվյալների հավաստիության վրա»:Նշված իրավադրույթներից հետևում է, որ որպես քրեական օրենսգրքով նախատեսված արարքի առկայությունը կամ բացակայությունը, այդ արարքը կասկածյալի կամ մեղադրյալի կողմից կատարելը կամ չկատարելը և մեղադրյալի մեղավորությունը կամ անմեղությունը, ինչպես նաև գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքները պարզելու միջոց կարող են օգտագործվել միայն այնպիսի ապացույցներ, որոնք ձեռք են բերվել, ամրագրվել և գործին կցվել են քրեադատավարական օրենքով սահմանված և թույլատրելի համարվող կարգով: Ապացույցների ձեռքբերման և ամրագրման թույլատրելիությունը կարգավորող նորմերից հետևում է, որ որպես ապացույց չեն կարող օգտագործվել քննչական կամ այլ դատավարական գործողության կատարման կարգի էական խախտմամբ ձեռք բերված փաստական տվյալները, հատկապես եթե դրանք իրենց հերթին հանգեցրել են դատավարության մասնակիցների իրավունքների էական խախտման, ազդել են կամ

կարող էին ազդել ստացված փաստական տվյալների հավաստիության վրա: Այսպիսով, ապացույցների հավաքմանը և ստուգմանն ուղղված դատավարական գործողությունների կատարման ընթացքում պետք է ապահովվի անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Հակառակ դեպքում կատարված դատավարական գործողության արդյունքում ստացված փաստական տվյալը, անկախ գործի համար ունեցած նշանակությունից, կորցնում է իր իրավական ուժը, ապացուցողական նշանակությունը և չի կարող ընդգրկվել կոնկրետ քրեական գործով ապացույցների համակցության մեջ և դրվել մեղադրանքի հիմքում: Կոնկրետ դեպքում դատարանը գտնում է, որ չի ստուգվել ապացույց ճանաչված փաստաթղթի ձեռք բերման աղբյուրը: Ինչպես ապացույց ճանաչելու որոշման մեջ, այնպես էլ ողջ քրեական գործի նյութերում չկա որևէ նշում թե երբ, ում կողմից, ինչ ճանապարհով է վարույթն իրականացնող մարմնին տրամադրվել Մ.Սարդարյանի դիմումը, որը ճանաչվել է որպես ապացույց, նույնիսկ հայտնի չէ այդ դիմումի հեղինակն իրոք Մ.Սարդարյանն է թե ոչ, ում վստահությունը չարաշահելու մեջ մեղադրվում է Կ.Բեգլարյանը: Այիսնքն նախաքննական մարմինը անհայտ ծագումով դիմումը ճանաչել է որպես ապացույց, ուստի այդ ապացույցը թույլատրելի չէ: Ավելին՝ համաձայն Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի, «դ» ենթակետի՝ քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները (...) հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության,(…): Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, կիրառելով և մեկնաբանելով կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետը, եկել է այն ընդհանուր հետևության, որ եթե մեղադրյալին դատավարության որևէ փուլում հնարավորություն չի տրվել հարցեր ուղղելու իր դեմ ցուցմունք տված անձին, ապա նա զրկվում է արդար դատաքննության իրավունքից /Ռինտերպերտինգերն ընդդեմ Ավստրիայի, գանգատ թիվ 9120/80, 1986թ. նոյեմբերի 24-ի վճիռ, 31-33 կետեր/: Իսկ Սադակը և ուրիշներն ընդդեմ Թուրքիայի /թիվ 1/ գործով վճռում Եվրոպական դատարանը զարգացրել է Ռինտերպերտինգերի գործով ձևակերպված իրավական դիրքորոշումը և սահմանել, որ անձի դատապարտումը չի կարող ամբողջապես կամ վճռական չափով հիմնվել այնպիսի անձի հայտնած տվյալների վրա, որի հարցեր ուղղելու համարժեք հնարավորություն պաշտպանության կողմը չի ունեցել /գանգատներ թիվ 29900/96 և այլն, 2001թ. հուլիսի 17-ի վճիռ, կետ 65/: Ռինտերպերտինգերի և Սադակի գործերով Եվրոպական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները ոչ թե կոնկրետ գործի փաստերով պայմանավորված դատաղություններն են, այլ Եվրոպական դատարանի կայուն նախադեպային պրակտիկայի արտահայտություն: Դրա մասին է վկայում այն, որ նշված իրավական դիրքորոշումները հետագայում բազմիցս վերահաստատվել ու կիրառվել են, մասնավորապես, հետևյալ գործերով. Հուլկի Գյունեշն ընդդեմ Թուրքիայի, գանգատ թիվ 28490/95, 2003թ. հունիսի 19-ի վճիռ, 53-54 կետեր, Գոսսան ընդդեմ Լեհաստանի, գանգատ թիվ 47986/99, 2007թ. հունվարի 9-ի վճիռ, 54-55 կետեր, Բալսիտե-Լիդեիկյենեն ընդդեմ Լիտվայի, գանգատ թիվ 72596/01, 2008թ. նոյեմբերի 4-ի վճիռ, կետ 86, Չական ընդդեմ Ալբանիայի, գանգատ թիվ 44023/02, 2009թ. դեկտեմբերի 8-ի վճիռ, կետ 102, Խամեշինն ընդդեմ Ռուսաստանի, գանգատ թիվ 18487/03, 2010թ. մարտի 4-ի վճիռ, կետ 32, Ա.Ս.-ն ընդդեմ Ֆինլանդիայի, գանգատ թիվ 40156/07, 2010թ. սեպտեմբերի 28-ի վճիռ, կետ 62, և այլն: Ընդ որում, Եվրոպական դատարանի նշված վճիռներում խոսքը վերաբերում է ոչ թե ցուցմունքներին, այլ հայտնած տվյալներին: Այլ կերպ՝ էական չէ, թե ներպետական իրավունքում

	ինչպես կանվանվեն տվյալների ձևակերպման դատավարական միջոցները՝ ցուցմունք, այլ փաստաթուղթ, բացատրություն, թե այլ կերպ: Անհրաժեշտ է միայն, որ այդպիսի տվյալները ներկայցվեն դատարանին, իսկ դատարանը ձեռնամուխ լինի այդ փաստական տվյալները թույլատրելիության տեսանկյունից գնահատելուն, ուստի մեղադրողի այն պատաճառաբանությունը, որ Կ.Բեգլարյանի որևէ իրավունք չի խախտվել և որպես այլ փաստաթուղթ ճանաչված դիմումը ունի ապացուցողական ուժ անհիմն է: Վերը նշված թույլատրելի ապացույցների հիման վրա դատարանը պետք է իրավական գնահատական տա այն հարցին« թե Կարեն Բեգլարյանի արարքն արդյոք համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներին« թե ոչ: ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի համաձայն՝ խարդախությունը՝ խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով ուրիշի գույքի զգալի չափերով հափշտակությունն է կամ ուրիշի գույքի նկատմամբ իրավունք ձեռք բերելն է: ՀՀ վճռաբեկ դատարանը Լիա Ավետիսյանի վերաբերյալ թիվ ԵԿԴ/0176/01/09 քրեական գործով 2011 թվականի փետրվարի 24-ի որոշմամբ արտահայտել է իրավական դիրքորոշում համաձայն որի՝ խարդախությունը կատարվում է միայն ուղղակի դիտավորության մեղքի ձևով, հանցավորը պետք է գիտակցի« որ խաբեության կամ վստահությունը չարաշահելու միջոցով հափշտակում է ուրիշի գույքը« ինչպես նաև պետք է նախատեսի և ցանկանա դա: Խարդախության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է նաև շահադիտական նպատակի առկայությամբ« այսինքն՝ մինչև գույքը վերցնելը կամ գույքին տիրանալը հանցավորն ի սկզբանե նպատակ է ունենում հափշտակելու այն« չվերադարձնելու գույքը« չկատարելու խոստումը կամ պայմանագրային պարտավորությունները: Հակառակ դեպքում« երբ գույքը չվերադարձնելու« խոստումը կամ պարտավորությունները չկատարելու դիտավորությունն առաջանում է գույքը վերցնելուց հետո անկախ շարժառիթից« խարդախության հանցակազմը բացակայում է: Խարդախության միջոցով ուրիշի գույքը հափշտակելու ուղղակի դիտավորության և գույքը հափշտակելու շահադիտական նպատակի առկայության կամ բացակայության մասին դատարանի հետևությունները պետք է հիմնված լինեն գործով ձեռք բերված ապացույցների համակցության վրա: Նշված ապացույցների գնահատման արդյունքում դատարանը յուրաքանչյուր դեպքում պետք է հաստատված համարի« որ անձն ի սկզբանե նպատակ է ունեցել խարդախության միջոցով հափշտակել ուրիշի գույքը« և եթե ապացուցվի« որ ունեցել է« ապա խարդախության հանցակազմն առկա է: Ընդ որում« եթե ապացույցների բավարար համակցությամբ և հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշով չի հիմնավորվում« որ շահադիտական նպատակը ծագել է համապատասխան գործարքի կնքումից առաջ« ապա նման դեպքերում խարդախության հանցակազմ առկա չէ: Ներքին համոզմունք ձևավորելու համար հատկանշական է նաև« որ կողմերի միջև խանութի վաճառքի վերաբերյալ գործարք կնքելու համաձայնությունը կայացվել է 2008 թվականի ապրիլ ամսին« իսկ ամբաստանյալին գումարի տրամադրումը տեղի է ունեցել նույն թվականի ապրիլ-հունիս ամիսներին, սակայն հանցագործության մասին հաղորդում է ներկայացվել միայն 2010 թվականի նոյեմբերին: Անհրաժեշտ է արձանագրել նաև, որ մինչև Մարինա Մխիթարյանի կողմից հաղորդում ներկայացնելը, նրա ամուսինը քաղաքացիական հայց է ներկայացրել Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ Կարեն Բեգլարյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին: Դատարանը բավարարել է քաղաքացիական հայցը և հօգուտ Միխաիլ Սարդարյանի Կարեն Բեգլարյանից բռնագանձել է 13.794.800 ՀՀ դրամ այնքան գումար ինչքան սույն քրեական գործի մեղադրանքի ծավալն է: Այսինքն՝ հանցագործության օբյեկտիվ

	կողմը նույնական է նույն անձանց միջև հարուցված քաղաքացիական հայցի առարկայի հետ: Վստահությունը չարաշահելու առումով հատկանշական է ՀՀ վճռաբեկ դատարանի վերը նշված որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումը նաև այն մասին« որ թեև խարդախության պարագայում առկա է գույքի սեփականատիրոջ կողմից հանցագործին գույքը կամ դրա նկատմամբ իրավունքները փոխանցելու կամային ակտ« սակայն գույքը կամ դրա նկատմամբ իրավունքները փոխանցելու ակտի կամային բնույթը սեփականատիրոջ գիտակցության և կամքի վրա հանցագործի ունեցած ներգործության հետևանք է: Այս կապակցությամբ էական նշանակություն կարող է ունենալ« թե գույքն ուրիշին հանձնելու գործում ով է նախաձեռնություն դրսևորել: Արդյոք գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքները հանձնելու տուժողի մտադրությունն առաջացել է հանցավորի կողմից նրան համոզելու և հորդորելու արդյունքում: Վստահությունը չարաշահելն ուրիշի գույքին տիրանալու կամ դրա նկատմամբ իրավունք ձեռք բերելու նպատակով հանցավորի կողմից« նրա և գույքի սեփականատիրոջ կամ գույքը տիրապետողի միջև ձևավորված վստահության հարաբերությունների օգտագործումն է: Արարքը խարդախություն որակելու համար բավարար չէ« որ անձն իր արարքներով կամ որոշակի հանգամանքների բերումով տուժողի մոտ վստահություն վայելի« այլ անհրաժեշտ է« որպեսզի վերջինս համոզի տուժողին իրեն փոխանցել գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքները: Կոնկրետ քրեական գործով հիմնավորվել և հաստատվել է, որ ամբաստանյալը Մ.Սարդարյանի հետ ծանոթացել է վերջինիս նախաձեռնությամբ՝ Երևան քաղաքի Շիրազի փողոցի 52/6 հասցեում գտնվող խանութը վաճառելու կապակցությամբ, ընդ որում Մ.Սարդարյանն է Կ.Բեգլարյանին առաջարկել և սակարկելով գինը պայմանավորվածություն ձեռք բերել, որ խանութի համար պատրաստ է վճարել 48.000 ԱՄՆ դոլար գումար՝ երկու ամսվա ընթացքում և հակառակը ձեռք չի բերվել որևէ ապացույց, որ խանութը Մ.Սարդարյանին վաճառելու նախաձեռնությունը եղել է Կ.Բեգլարյանինը, ու վերջինս մինչև Մ.Սարդարյանից գումարները վերցնելն ի սկզբանե նպատակ է ունենցել հափշտակել դրանք և չկատարել խոստումը կամ ստանձնած պարտավորությունը: Ավելին՝ գործի քննությամբ հիմնավորվեց, որ Կ.Բեգլարյանը խանութը վաճառելու բանակցությունները վարել է հենց Մ.Սարդարյանի հետ, այլ ոչ թե նրա կնոջ, ի դեպ նախաքննական մարմինը նույնպես հաստատված է համարել այդ փաստը, քանի որ մեղադրանքի որոշման մեջ ուղղակի արձանագրել է, որ Կ.Բեգլարյանը չարաշահել է Մ.Սարդարյանի վստահությունը: Հատկանշական է նաև, որ գործի քննությամբ հիմնավորվել է, որ Կ.Բեգլարյանը տուժող ճանաչված Մ.Մխիթարյանին հանդիպել է միայն վարկը տրամադրելու օրը՝ 09.06.2008 թվականին, երբ արդեն Մ.Սարդարյանը նրան հանձնած է եղել ընդհանուր առմամբ 18.000 ԱՄՆ դոլար գումար և պայմանավորվածություն է ձեռք բերվել ստացած վարկը Կ.Բեգլարյանին հանձնելու հարցում: Փաստորեն նախաքննական մարմնի կողմից Կ.Բեգլարյանին առաջադրված մեղադրանքի հիմքում դրված ապացույցները եթե ոչ բացառապես, ապա մեծամասամբ կառուցված են մի անձի ցուցմունքի վրա, ով ներկա չի գտնվել ամբաստանյալի և Մ.Սարդարյանի միջև տեղի ունեցող պայմանավորվածությունների ձեռք բերման գործընթացին: Այդուհանդերձ, վերլուծելով Մ.Մխիթարյանի կողմից գործի նախաքննության և դատաքննության ընթացքում տրված ցուցմունքներն ակնհայտ է դառնում, որ վերջինս կամ տեղյակ չի եղել իր ամուսնու և Կ.Բեգլարյանի ձեռք բերված պայմանավորվածությունների մասին և փորձում է հիմնավորել հակառակը, կամ էլ տեղյակ է եղել, սակայն ներկայումս փորձում է խեղաթյուրել դրանք: Այսպես՝ քրեական գործի քննության ընթացքում տուժողը մշտապես պնդել է, որ իր ամուսինն իրեն տեղեկացրել է Կ.Բեգլարյանի հետ ձեռք բերված պայմանավորվածությունները, սակայն գործի քննության տարբեր

ժամանակաշրջանում տվել է միմյանց հակասող և իրարամերժ ցուցմունքներ: Գործի նախաքննության ընթացքում տուժողը ցուցմունք է տվել, որ Կ.Բեգլարյանը խանութի ձևակերպումը չկատարելուց հետո իր ամուսնուն է տվել երկու անգամ 600.000-ական դրամ: Դատարանում չժխտելով նույն հանգամանքը տուժողը հայտնեց, որ Կ.Բեգլարյանը այդ կերպ փորձել է պատրանք ստեղծել, որ հափշտակություն չի կատարել և իր ամուսնուն առաջարկել է անձամբ մարել վարկի բանկային տոկոսները: Տուժողի այս ցուցմունքը հակասում է իր իսկ տրված այլ ցուցմունքներին, քանի որ ըստ նրա բանկին վճարվելիք գումարները յուրաքանչյուր ամիս կազմել են մոտ 300.000 ՀՀ դրամ այդ թվում մայր գումարի ու տոկոսի մարումը և եթե ամբաստանյալը խոստում է տվել մարել վարկի տոկոսները, ապա նա պետք է վճարեր միայն տոկոսները, այլ ոչ թե ամսական 600.000 ՀՀ դրամ, ինչը անհամեմատ մեծ է յուրաքանչյուր ամիս բանկին վճարվող վարկի մայր գումարի և տոկոսների հանրագումարից, բացի այդ տուժողը նշել է, որ իրենք մարել են վարկը ժամանակացույցին համապատասխան և ամբաստանյալի տված գումարներն ամբողջությամբ չեն ուղղել վարկի մարմանը: Ամբաստանյալի ցուցմունքը, որ Մ.Սարդարյանն է հրաժարվել խանութը ձեռք բերելուց և իրեն առաջարկել է յուրաքանչյուր ամիս վճարել 2.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ մինչև տրված ամբողջ գումարի վերադարձը և այն փաստը, որ նա վճարել է երկու ամիս 600.000-ական ՀՀ դրամ ոչ միայն հերքվում է տուժողի պատճառաբանությունը, որ նա խոստացել է մարել վարկի տոկոսները, այլ նաև հաստատում, որ եղել է պայմանավորվածություն ամսական 600.000 ՀՀ դրամ վճարելու: Դատաքննության ընթացքում տուժողն ընդունեց, որ Կ.Բեգլարյանն իր ամուսնուն է տրամադրել նաև ինքնաթիռի տոմս, որի արժեքը, ըստ իրեն, կարող էր կազմել 400-ից 500 ԱՄՆ դոլար, նշեց, որ տեղյակ չէ հետադարձ տոմսը Կ.Բեգլարյանը նույնպես տրամադրել է թե ոչ, նշեց նաև, որ տեղեկություն չունի Կ.Բեգլարյանը ճանապարհածախսի գումար տվել է իր ամուսնուն թե ոչ: Այսինքն ամբաստանյալի պատճառաբանությունը, որ հինգ ամիսների ընթացքում ինքը Մ.Սարդարյանին է տվել ընդհանուր առմամբ 2.850.000 ՀՀ դրամ գումար, որի մեջ ներառված է նաև ինքնաթիռի տոմսերի արժեքը չի հերքվել, սակայն դատարանը չի էլ կարող հաստատված համարել, որ ամբաստանյալը այդ չափով գումար է վերադարձրել: Հատկանշական է, որ 26.04.2008 թվականի դրությամբ խանութի դիմաց չվճարված գումարը կազմել է 30.000 ԱՄՆ դոլար ինչը հենց համարժեք էր 10.000.000 ՀՀ դրամին, որի չափով էլ վարկ է ձևակերպվել, հետևաբար տուժողի այն պնդումը, որ մինչ ամբաստանյալին իր ամուսնու կողմից կանխավճար տրամադրելը, Կ.Բեգլարյանն է համոզել, որ իրենք վարկ վերցնեն որևէ հիմնավորում ունենալ չի կարող, առավել ևս այն դեպքում, երբ տուժողը հայտնեց, որ իրենք ՌԴ-ում ունեին բնակարան որը պետք է վաճառեին և այդ գումարով էին պատրաստվում խանութ գնել և գումարը երկու ամսում վճարելու պայմանավորվածությունը ձեռք է բերվել բնակարանը այդ ընթացքում վաճառելու ակնկալիքով: Դատաքննությամբ Մ.Մխիթարյանը նշեց, որ իրենք ի սկզբանե չեն իմացել, որ 1.600.000 ՀՀ դրամ պետք է որպես միջնորդավճար տրամադրեն Գ.Փաշոյանին և այդ մասին տեղեկացել են միայն այն ժամանակ, երբ բանկի աշխատակիցը բանկից դուրս է բերել ընդամենը 8.400.000 ՀՀ դրամ, ինչի կապակցությամբ իր ամուսինը զարմանք է արտահայտել: Մինչդեռ նախաքննության ընթացքում հայտնել է հակառակը՝ «Կ.Բեգլարյանը ամուսնուս ասել էր, որ 10.000.000 դրամ վարկից 1.600.000 դրամ պետք է տրվի կամ Գևորգին կամ բանկի աշխատողին, ես կոնկրետ չեմ հիշում, որպես միջնորդավճար: 2008 թվականի հունիսի 9-ին մենք ՎՏԲ բանկից Ավանի ստացանք 10.000.000 դրամ վարկը, որից հետո մեքենայի մեջ իմ և ամուսնուս ներկայությամբ Կ.Բեգլարյանը մեքենայի մեջ 1.600.000 դրամ հաշվեց և տվեց ինչքան հիշում եմ Գևորգին»: Մ.Մխիթարյանն իր ցուցմունքների այս էական հակասությունը որևէ

կերպ չկարողացավ բացատրել՝ մի դեպքում նշեց, որ գումարը հաշվել են ավտոմեքենայի մեջ ինքն այնտեղ չի գտնվել և չէր կարող տեսնել թե ինչքան են գումար բերել և ով ում որքան գումար է տվել, հետո նշեց, որ քննիչն է սխալ արձանագրել, ինքը նման բան չի նշել, մյուս դեպքում հայտնեց, որ հայերեն լեզվին լավ չի տիրապետում ինչի արդյունքում այդպես է արձանագրվել: Ուշագրավ է նաև, որ նախաքննության ժամանակ ցուցմունք տալիս /գ.թ. 47-50/ տուժողն իր ձեռքով գրել է «Ես տիրապետում եմ հայերեն և ռուսերեն գրավոր լեզուներին, ավելի վարժ գրում եմ ռուսերեն, սակայն հայերեն կարդում և գրում եմ և թարգմանչի կարիք չունեմ: Խնդրում եմ ցուցմունքս արձանագրի քննիչը», ցուցմունքի վերջում ավելացրել «ցուցմունքս կարդացի, գրված է իմ պատմածից, ճիշտ է որի համար ստորագրում եմ»: Նշվածը հրապարակելուց հետո տուժողը հայտնեց «թող լինի այդպես, որ ի սկզբանե իմացել ենք, որ պետք է 1.600.000 տրվի որպես միջնորդավճար, ինձ դա չի հետաքրքրում իմացել ենք թե ոչ, իմ ցանկությունն է որպեսզի մեր գումարը վերադարձվի»: Նույն ցուցմունքվ տուժողը նշել է, որ բանկից գումարը ստանալուց և Կ.Բեգլարյանին այն տրամադրելուց հետո պետք է նրան պարտք մնայն 4.000 ԱՄՆ դոլար, ինչը նույնպես հաստատում է, որ Մ.Մխիթարյանը մինչև գումարը ստանալը տեղյակ է եղել, որ ստացվող գումարի 16% պետք է տրամադրեին միջնորդին: Իսկ դատաքննության ժամանակ նա հետևողականորեն պնդեց, որ ոչ միայն չեն իմացել միջնորդավճարի մասին այլև բանկից գումարը դուրս բերելուց այն արդեն իսկ եղել է 8.400.000 ՀՀ դրամ: Մ.Մխիթարյանը նախաքննության ընթացքում հայտնել է՝, «Նշեմ նաև, որ 1.600.000 դրամը ամուսինս Կ.Բեգլարյանի հետ պայմանավորվել էր, որ եթե խանութը անվանափոխվի, ապա այդ գումարը կմարենք մենք, իսկ եթե գործարքը չստացվի, ապա այդ գումարը պետք է տար Կ.Բեգլարյանը»: Այս արտահայտությամբ Մ.Մխիթարյանն ուղղակի ընդունել է, որ իր ամուսնու և Կ.Բեգլարյանի միջև բանակցություններ են ընթացել գործարքի հնարավոր ձախողման մասին, ինչը նա մշտապես հերքել է ասելով, որ գարծարքի կնքումից միակողմանի հրաժարվել է Կ.Բեգլարյանը: Մ.Մխիթարյանն ընունել է նաև, որ վարկը ստանալու օրը, երբ Կ.Բեգլարյանը եկել է իրենց տուն գումարը վերցնելու իրենք նրան պարտք են մնացած եղել 4.000 ԱՄՆ դոլար և պարտավորվել են այն վճարել մինչև աշուն, բայց Կ.Բեգլարյանը ստացականում այդ մասին առանց նշելու պարտավորվել է խանութը հինգ օր անց ձևակերպել իրենց անվամբ, դրանից հետո իր ամուսինը հանդիպել է Կ.Բեգլարյանին և պահանջել է անվանափոխել խանութը, սակայն վերջինս ասել է, որ խանութն իր անունով չէ այն 20.000 ԱՄՆ դոլար պարտքի դիմաց անվանափոխել է ոմն Սերգեյի անունով, ով բնակվում է Կրասնոսելսկում: Ի հակառակ իր կողմից նախաքննության ընթացքում տրված ցուցմունքի, դատաքննությամբ Մ.Մխիթարյանը սկզբում հայտնեց, որ Ս.Ղալլաքյանին խանութը պատկանելու վերաբերյալ տեղեկացել են, քաղաքացիական հայցով դատարան դիմելուց հետո՝ հարկադիր կատարողներից, հետո նշեց, որ այդ մասին իր ամուսնուն ասել է Կ.Բեգլարյանը երկու ամիս 600.000-ական դրամ վճարելուց հետո: Իր ցուցմունքների հակասության վերաբերյալ Մ.Մխիթարյանը մի դեպքում հայտնեց, որ քննիչն է սխալ արձանագրել, մյուս դեպքում, որ նախկինում դատարանների հետ չի առնչվել, ուստի նախաքննության ընթացքում իր տված ցուցմունքներում մանրամասը չի նշել իրադարձությունների ժամանակագրությունը: Տուժողը հայտնեց նաև, որ Կ.Բեգլարյանը մինչև կանխավճարը տրամադրելու օրը, իր ամուսնուն համազել է խանութը գնելու նպատակով վարկ ձևակերպել, դատարանը գտնում է, որ Մ.Մխիթարյանը այդ կերպ փորձում է արհեստական հիմքեր ստեղծել Կ.Բեգլարյանի գործողություններում խարդախության հանցակազմը հիմնավորելու համար, իսկ պայմանավորվող կողմերի միջև վարկի ձևակերպման միջոցով խանութը ձեռք բերելու մասին խոսակցություն տեղի ունեցած չլինելու վերաբերյալ հայտնեց նաև Սերգեյ Ղազարյանը, ով

ներկա է գտնվել ամբաստանյալի և Մ.Սարդարյանի հանդիպմանը՝ թե կանխավճարը տալու օրը և թե դրանից առաջ: Որևէ հիմնավորում չունի նաև Մ.Սարդարյանի ընտանիքի անդամների այն պնդումը, որ վարկը ստանալուց հետո նույն օրը Կ.Բեգլարյանը եկել է իրենց տուն և խնդրել իրեն տրամադրել ևս 4.000.000 ՀՀ դրամ, քանզի թե գործի նյութերի և թե Մ.Սարդարյանի կնոջ ու դստեր ցուցմունքների համաձայն իրենք վարկը ձևակերպել են հենց այդ գումարը Կ.Բեգլարյանին տրամադրելու նպատակով, ուստի ինչու նա պետք է խնդրեր, որ իրեն տրամադրեին գումարը: Դատարանն անդրադառնալով, վկա Գ.Փաշոյանի ցուցմունքներում տեղ գտած հակասություններին արձանագրում է, որ վերջինիս այն պնդումը, որ նոտարական գրասենյակում Մ.Սարդարյանը վիճել է Կ.Բեգլարյանի հետ, չի համապատասխանում իրականությանը հետևյալ պատճառաբանությամբ. Կ.Բեգլարյանը ցուցմունք տվեց, որ պայմանագիրը կնքելիս ինքը ներկա չի գտնվել նոտակարական գրասենյակում և ինչպես Գ.Փաշոյանը, այնպես էլ Մ.Սարդարյանն իր հետ այնտեղից խոսել են հեռախոսով ու վերջինիս անհագստության պատճառը եղել է ոչ թե նրա բնակարանի դիմաց տրամադրվող գումարի չափը, այլ վարկը այլ անձի անվամբ ձևակերպելու հանգամանքը: Տուժողը և նրա դուստրը, թեև հայտնեցին, որ նոտարական գրասենյակում են տեղեկացել, որ վարկը այլ անձի անվամբ է ձևակրպվում և որ այն պետք է հատկացվի 10.000.000 ՀՀ դրամի չափով, այնուամենայնիվ Կ.Բեգլարյանի ներկայությունը նոտարի մոտ չնշեցին: Դատարանը գտնում է, որ Գ.Փաշոյանը փորձելով ընդգծել Կ.Բեգլարյանի և Մ.Սարդարյանի միջև առկա տարաձայնությունները, միտումնավոր նշել է, որ ամբաստանյալը ներկա է գտնվել նոտարական գրասենյակում, ցանկանալով հնարավորինս զերծ մնալ վարկը ձևակերպելու հարցում ունեցած իր դերեկատարությունից: Միևնույն ժամանակ Գ.Փաշոյանը հետևողականորեն պնդել է, որ Մ.Սարդարյանը մինչ պայմանագիրը կնքելը տեղյակ է եղել, որ ստացված վարկի գումարի մի մասը որպես միջնորդվճար պետք է տրամադրի իրեն սկզբում 10%-ի, հետագայում 16%-ի չափով, ինչը հիմնավորում է, որ Մ.Սարդարյանը տեղյակ է եղել թե ստացվող վարկի չափի և թե դրա դիմաց գրավադրվող գույքի վերաբերյալ, հետևաբար Կ.Բեգլարյանի և Մ.Սարդարյանի միջև խոսկցությունը կարող էր լինել միայն վարկն այլ անձի անվամբ ձևակերվելու կապացությամբ: Գ.Փաշոյանի նման ցուցմունքն ի նպաստ է Կ.Բեգլարյանին, քանի որ այս մասով նրանց երկուսի շահերն էլ համընկնում են, ու եթե Գ.Փաշոյանն այդ մասով չհայտներ իրականությունը, ապա կասկածի տակ կդներ նաև իր իսկ առնչությունը հնարավոր խարդախությանը: Դատարանը գտնում է, որ Գ.Փաշոյանի կողմից մասնակի ճիշտ ցուցմունքներ տալը պայմանավորված է այն հանգամանքով, որ վերջինս լինելով հինգ անգամ դատապարտված ամեն կերպ փորձել է խուսափել կրկին քրեական պատասխանատվության ենթարկվելուց, ուստի և իր ցուցմունքներում Կ.Բեգլարյանին ձեռնտու հանգամանները հայտնելով չի վկայել նաև իր դեմ, ինչ վերաբերում է Կ.Բեգլարյանի դեմ տրված ցուցմունքի, ապա դրանք նույնպես միտված են հեռացնելու հնարավոր առնչությունն իր կատարված ենթադրյալ անօրինական գործողություններին: Վկա Սերյոժա Դալլաքյանը ինչպես նախաքննական, այնպես էլ դատաքննական ցուցմունքներում նշեց, որ ճիշտ է խանութը գրանցված է իր անունով, բայց իրականում խանութը պատկանում է Կարեն Բեգլարյանին վերջինս պարտքի դիմաց այն ձևակերպել է իր անվամբ, սակայն իրենց մեջ պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ պարտքը վերադարձնելուց հետո խանութը կանվանափոխվի Կարեն Բեգլարյանի կամ այն գնող անձի անվամբ: Ավելին՝ Ս.Դալլաքյանի ցուցմունքով հիմնավորվում է նաև, որ ամբաստանյալն իրեն տեղյակ է պահել Մ.Սարդարյանի կոմից խանութի համար կանխավճար տալու մասին, նույնիսկ խնդրել է ԱԳԿ-ից տեղեկանք վերցնել այն վաճառելու համար: Քրեական գործով հետազոտված ապացույցներով չհերքվեցին ամբաստանյալ Կ.Բեգլարյանի

	պատճառաբանությունները, առ այն, որ Մ.Սարդարյանն է հրաժարվել գործարքը կնքելուց և, որ խարդախության եղանակով հափշտակություն կատարելու նպատակ չի ունեցել, հափշտակություն չի կատարել, հակառակը գործով ձեռք բերված ապացույցների ու փաստական տվյալների համադրումը հիմնավորում է ամբաստանյալի հայտնած տեղեկությունը: Գործի ողջ տվյալներով դատարանը հաստատված է համարում, որ ամբաստանյալ Կ.Բեգլարյանը Մ.Սարդարյանի հետ սկզբում պայմանավորվածություն է ձեռք բերել նրան վաճառելու Երևան քաղաքի Շիրազի 52/6 հասցեում գտնվող խանութը 48.000 ԱՄՆ դոլար գումարով, որը վերջինս պետք է վճարեր երկու ամսվա ընթացքում մաս-մաս: Մ.Սարդարյանը Կ.Բեգլարյանին է տվել՝ 1. 16.04.2008 թվականին 5.000 եվրո գումար 2. 18.04.2008 թվականին՝ 500 եվրո գումար 3. 24.04.2008 թվականին 1.000 ԱՄՆ դոլար 4. 26.04.2008 թվականին 8.800 ԱՄՆ դոլար 5. 09.06.2008 թվականին 8.000.000 ՀՀ դրամ, վերցրած գումարները համարժեք են 44.214 ԱՄՆ դոլարին կամ 13.794.800 ՀՀ դրամին: Այսինքն Մ.Սարդարյանը չի կատարել 16.04.2008 թվականին ստանձնած իր պարտավորությունը 3.786 ԱՄՆ դոլարի չափով: Ամբաստանյալի այն պատճառաբանությունը, որ 10.06.2008 թվականին իր և Մ.Սարդարյանի միջև նոր պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ գործարքը չի կնքվում և իրեն տրված մոտ 44.000 ԱՄՆ դոլարի դիմաց ինքը պետք է վճարի տոկոսներ յուրաքանչյուր ամիս 620.000 ՀՀ դրամ դատաքննության ընթացքում որևէ կերպ չի հերքվել: Բացի այդ ամբաստանյալի այն պատճառաբանությունը, որ նա Մ.Սարդարյանին որպես տոկոսներ ընդհանուր առմամբ վճարել է 2.850.000 ՀՀ դրամ թեև չի հաստատվել, սակայն նույնպես չի հերքվել, ավելին՝ տուժողը ընդունում է, որ ամբաստանյալն իր ամուսնուն բացի երկու ամիս անընդմեջ 600.000-ական դրամ տալուց տվել է նաև այլ գումարներ /ճանապարհածախս և ինքնաթիռի տոմս/ որի չափը իրեն հայտնի չէ: Հատկանշական է, որ ժամանակագրական առումով հենց ամբաստանյալի կողմից նշված գումարները տալուց հետո, երբ չի կարողացել այլևս գումար տրամադրել ու ապարդյուն են անցել նաև իր երիկամը վաճառելու փորձերը Մ.Սարդարյանը դիմել է դատարան գումարի բռնագանձման պահանջով: Կ.Բեգլարյանի մոտ «Հեպոտիտ-Ց» հիվանդությունը ախտորոշվել է՝ 16.01.2009 թվականին, որից հետո էլ Մ.Սարդարյանը դիմել է դատարան: Նման պայմաններում դատարանը գտնում է, որ Կ.Բեգլարյանի և Մ.Սարդարյանի միջև ծավալվել են քաղաքացիաիրավական հարաբերություններ՝ դրանից բխող բոլոր հետևանքներով: ՀՀ Սահմանադրության 21-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը: Չփարատված կասկածները մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի: Նմանատիպ նորմեր նախատեսված են նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում: Նշված օրենսգրքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հանցանք գործելու մեջ անձի մեղավորության մասին հետևությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա« այն պետք է հաստատվի գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ: Իսկ նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ մեղադրանքն ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները« որոնք չեն կարող փարատվել սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում« մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի կամ կասկածյալի: Այսպիսով« դատարանը« հետազոտելով դատաքննության ընթացքում ձեռք բերված ապացույցները« դրանցից յուրաքանչյուրը գնահատելով վերաբերելիության« թույլատրելիության« իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից« հանգում է այն հետևության« որ ամբաստանյալ Կ.Բեգլարյանին առաջադրված մեղադրանքը հիմնավորված և հաստատված չէ գործին վերաբերվող

փոխկապակցված« հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ: Նման պայմաններում դատարանը գտնում է« որ չի ապացուցվում այն հանգամանքը« որ Կարեն Բեգլարյանը տուժող Միքաել Սարդարյանի վստահությունը չարաշահելու եղանակով խարդախությամբ հափշտակել է գումար և գտնում է« որ Կարեն Բեգլարյանի արարքներում ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշները բացակայում են« ինչը ՀՀ քրեական դատավության օրենսգրքի 366-րդ հոդվածի 2-րդ մասի և 35րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի ուժով հիմք է հանցակազմի բացակայությամբ արդարացման դատավճիռ կայացնելու համար: Հակառակ մոտեցումը խիստ կասկածելի է և նման հետևությունը հիմնված կլինի բացառապես ենթադրության վրա: Պետք է նշել նաև, որ ՀՀ վճռաբեկ դատարանը Լիա Ավետիսյանի վերաբերյալ գործով իր որոշման 28-31-րդ կետերում անդրադառնալով խարդախության հանցակազմը քաղաքացիաիրավական պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքերից սահմանազատելու հատկանիշներին արձանագրել է հետևյալը՝ «Տարբեր տեսակի գործարքների առուվաճառք, գրավ, փոխառություն, այդ թվում վարկային պայմանագիր և այլն) կատարման ժամանակ ծագող քաղաքացիական իրավահարաբերություններից խարդախության հանցակազմի սահմանազատման հիմնախնդրին Վճռաբեկ դատարանն անդրադառնում է ելնելով այն հանգամանքից, որ անձի կողմից իր գույքային պարտավորությունների չկատարումը դեռևս չի վկայում անձի մոտ հանցանքի կատարման դիտավորության առկայության մասին: Այլ կերպ՝ անձի կողմից քաղաքացիաիրավական պարտավորության չկատարումը դեռևս չի վկայում վերջինիս արարքում խարդախության հանցակազմի սուբյեկտիվ կողմի և հետևաբար, խարդախության հանցակազմի առկայության մասին տե°ս սույն որոշման 26-րդ կետը): Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ խարդախությունը քաղաքացիաիրավական պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքերից տարանջատելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ հանգամանքները.ա) խարդախության դեպքում տուժողին խաբելու կամ նրա վստահությունը չարաշահելու մտադրությունն անձի մոտ ծագում է նախքան գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքներ ձեռք բերելը:բ) խարդախության դեպքում անձի մոտ քաղաքացիաիրավական պայմանագրով ստանձնած պարտավորությունները (գույքը փոխանցել, կատարել վարկային պարտավորությունը, պարտքը վերադարձնել և այլն) չկատարելու դիտավորությունը ծագում է նախքան գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքներ ձեռք բերելը: Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ եթե քաղաքացիաիրավական հարաբերության հենքը վերաբերում է կարգավորիչ գործառույթ իրականացնող իրավունքի ճյուղին, ապա քրեական իրավունքը և դատավարությունը, մարմնավորելով իրավունքի պահպանիչ գործառույթը, իրենց բնույթով ածանցյալ են իրավունքի տվյալ ճյուղերից, մասնավորապես քաղաքացիական իրավունքից և դատավարությունից: Այլ կերպ՝ ներգործության քրեաիրավական և քրեադատավարական միջոցները չպետք է այնպիսին լինեն, որ խաթարեն քաղաքացիաիրավական ու քաղաքացիադատավարական հարաբերությունների ներքին տրամաբանությունը, անորոշություն ու անկանխատեսելիություն ստեղծեն քաղաքացիաիրավական շրջանառության մեջ: Այս առումով անթույլատրելի է գործող քաղաքացիական օրենսդրության պահանջների անտեսմամբ բնականոն գույքային շրջանառությունը խաթարող գործարքներ կնքելու պրակտիկան: Այդ փաստերը կարող են խեղաթյուրել քաղաքացիաիրավական հարաբերությունները, սպառնալ իրավական անվտանգությանը, պայմաններ ստեղծել, որ անձինք խուսափեն հարկային պարտավորությունների կատարումից, ինչպես նաև այլ եղանակներով վնասել իրավաչափ հանրային շահերը: Նման դեպքերում պետությունը պարտավոր չէ

գործող քաղաքացիական օրենսդրության պահանջների անտեսմամբ գործարքներ կնքած քաղաքացիների գույքային և այլ իրավունքների վերականգնումը դիտել հանրային շահի տիրույթում և հանրային միջոցներ ծախսելով իրականացնել նշված մասնավոր շահերի քրեաիրավական պաշտպանություն: Այդ մասնավոր շահերի պաշտպանությունը, որպես ընդհանուր կանոն, պետք է կատարվի մասնավոր իրավունքի տիրույթում՝ քաղաքացիաիրավական և քաղաքացիադատավարական միջոցներով»: Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի թիվ 4 արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել միայն այն պատճառով, որ ի վիճակի չէ կատարելու պայմանագրային որևէ պարտավորություն: Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 11-րդ հոդվածի համաձայն՝ ոչ ոք չի կարող ազատազրկվել միայն այն հիմքով, որ ի վիճակի չէ կատարելու պայմանագրային պարտավորությունը: ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի համաձայն մարդուն չի կարելի ազատությունից զրկել միայն այն պատճառով, որ ի վիճակի չէ կատարելու քաղաքացիաիրավական պարտավորությունները: ՀՀ քրեական օրենսգիրքը քրեական պատասխանատվություն չի նախատեսում քաղաքացիաիրավական, ինչպես նաև պայմանագրային պարտավորությունների կամ պարտականությունները չկատարելու համար: Հետևաբար վերոհիշյալ հիմնարար դրույթների ուժով անձը ոչ միայն ազատությունից զրկվել չի կարող, այլև նրա նկատմամբ քրեական հետապնդում չի կարող իրականացվել: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետի համաձայն՝ քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե՝ արարքի մեջ հանցակազմ չկա: Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ դատարանը հայտնաբերելով քրեական հետապնդումը բացառող հանգամանքներ, լուծում է ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու հարցը: Նման պայմաններում դատարանը հանգում է հետևության, որ Կ.Բեգլարյանին մեղսագրվող արարքն ընդհանրապես տեղի չի ունեցել, չի եղել դեպքը, որը կարող էր դիտվել, որպես հանցագործություն, այսինքն՝ հանցավոր արարքի փաստ չի հայտնաբերվել, ուստի դատարանը գտնում է, որ Կարեն Բեգլարյանի գործողություններում ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված արարքը բացակայում է, այն է՝ արարքում հանցակազմ չկա: Քննության առնելով Կարեն Բեգլարյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցի հարցը, դատարանը գտնում է, որ գրավը ենթակա է վերացման: Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 357-360-րդ« 366-րդ և 369-372-րդ հոդվածներով՝ դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

Ամբաստանյալ Կարեն Վլադիմիրի Բեգլարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 178րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքում ճանաչել անպարտ և արդարացնել:
Կարեն Բեգլարյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը գրավը՝ վերացնել:
Կարեն Վլադիմիրի Բեգլարյանի համար «ԱՐԴՇԻՆԻՆՎԵՍՏԲԱՆԿ» ՓԲԸ-ն «ՄԱՇՏՈՑԻ» մասնաճյուղում Արմեն Հակոբյանի կողմից Երևանի թիվ 2 տեղական գանձապետական բաժանմունքի Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի արտաբյուջետային՝ 900053422011 հաշվին մուծված 1.500.000 ՀՀ դրամ գումարը վերադարձնել Արմեն Հակոբյանին:
Դատավճիռը կարող է բողոքարկվել ՀՀ քրեական վերաքննիչ դատարան հրապարակվելու օրվանից հետո մեկամսյա ժամկետում:

	ԴԱՏԱՎՈՐ Դ.ԲԱԼԱՅԱՆ
Դատական ակտի ամսաթիվը:	03-10-2011
Այլ նշումներ:	

Գործը հանձնվել է գրասենյակ:	04-11-2011
Էջերի քանակ:	1-ին հատոր 179 թերթ, 2-րդ հատոր 124 թերթ,
Գործին կից նյութերը:	
Այլ նշումներ:	

Գործը ուղարկվել է:	04-11-2011
Էջերի քանակը:	2 հատոր՝ 1-ին հատոր 179 թերթ, 2-րդ հատոր 124 թերթ,
Գործին կից նյութերը:	
Ուր(դատարան):	Քրեական և զինվորական վերաք.
Ուր:	
Ելքի գրության համարը:	ԴԴ-18 Ե-8633
Այլ նշումներ:	

Ամսաթիվ:	08-11-2011

Ամսաթիվ:	23-02-2012
Այլ նշումներ:	

Ամսաթիվ:	23-02-2012
Այլ նշումներ:	

Գործը հանձնվել է գրասենյակ:	07-03-2012
Էջերի քանակ:	1-ին հատոր 180 թերթ, 2-րդ հատոր 124 թերթ, 3-րդ հատոր 182 թերթ
Գործին կից նյութերը:	ամբաստանյալի վիճ. քարտը
Այլ նշումներ:	

Դատական Գործ N: ԵԱԴԴ/0042/01/11

Ամսաթիվ:	02-11-2011
Ամբաստանյալ	
Անձ	
Անուն	Կարեն
Ազգանուն	Բեգլարյան

Հասցե	չկա
Հոդված_1	
Հոդված	178 Մաս 3 Կետ 1
Դատվածություն:	
Պատիժ:	
Հոդված_2	
Հոդված	չկա
Խափանման միջոց:	Կալանավորում
Ում կողմից է բերվել բողոքը:	Մեղադրող
Բողոքը բերող անձը	
Անուն	Լ
Ազգանուն	Հովհաննիսյան
Հասցե	Լ Հովհաննիսյան Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների դատախազի տեղակալ
Բողոքի բովանդակությունը:	Կարեն Բեգլարյան Բեկանել Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ Կարեն Վլադիմիրի Բեգլարյանի /ՀՀ քր.օր.178 հոդ. 3-րդ մասի 1-ին կետով ճանաչվել է անպարտ և արդարացվել / վերաբերյալ 03.10.2011թ. դատավճիռը և կայացնել մեղադրական դատավճիռ :
Բողոքի ստացման կարգը:	Առձեռն հանձնվել է գրասենյակ
Ամսաթիվ:	01-11-2011
Չափահաս:	Այո
Ամսաթիվ:	04-11-2011
Նախագահող դատավոր	
Դատարանի անվանում:	Քրեական և զինվորական վերաք.
Դատավորի անուն:	Կարինե Սուրենի Ղազարյան
Դատավոր	
Դատարանի անվանում:	Քրեական և զինվորական վերաք.
Դատավորի անուն:	
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	08-11-2011
Կից փաստաթղթեր և իրեղեն ապացույց:	չկան
Ամսաթիվ:	09-11-2011
Երբ:	17-11-2011
Ուղարկվել է ծանուցագիր:	
Ժամ:	12:00
Այլ նշումներ:	
Նիստերի դահլիճի համարը:	1

Երբ:	25-11-2011
Ուղարկվել է ծանուցագիր:	
Ժամ:	12:30
Այլ նշումներ:	
Նիստերի դահլիճի համարը:	1

Երբ:	01-12-2011
Ուղարկվել է ծանուցագիր:	
Ժամ:	11:00
Այլ նշումներ:	
Նիստերի դահլիճի համարը:	1
Նիստը:	
Պատճառը:	

Երբ:	05-12-2011
Ուղարկվել է ծանուցագիր:	
Ժամ:	15:00
Այլ նշումներ:	
Նիստերի դահլիճի համարը:	1
Նիստը:	
Պատճառը:	

Երբ:	06-12-2011
Ուղարկվել է ծանուցագիր:	
Ժամ:	15:30
Այլ նշումներ:	
Նիստերի դահլիճի համարը:	1
Նիստը:	
Պատճառը:	

Անփոփոխ թողնված դատական ակտը:	Պատճառաբանվել է
Ամսաթիվ:	06-12-2011
Ամբաստանյալ	
Անուն	Կարեն
Ազգանուն	Բեգլարյան
Հասցե	ք.Երևան, Շիրազի 48 շենքի դիմաց գտնվող խորդանոց
Սեռ	Արական
Քր. դատ. օր. հոդված	
Հոդված	393, 394
Քր. դատ. օր. հոդված	
Հոդված	393, 394
Այլ նշումներ:	
Քր.օր. հոդված	

Հոդված	178 Մաս 3 Կետ 1
Դատական ակտ:	Գործ ԵԱԴԴ/0042/01/11 Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2011թ. դեկտեմբերի 06-ին Երևան ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ՝ ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ Կ. ՂԱԶԱՐՅԱՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐ Գ. ՄԵԼԻՔ-ՍԱՐԳՍՅԱՆ Հ. ՏԵՐ-ԱԴԱՄՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՄԲ՝ Մ. ՈՒԴՈՒՄՅԱՆԻ Մասնակցությամբ՝ ՄԵՂԱԴՐՈՂՆԵՐ՝ Լ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ, Ա. ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ՊԱՇՏՊԱՆ՝ Ա. ՍԱՐԴԱՐՅԱՆԻ ՏՈՒԺՈՂ՝ Մ. ՄԽԻԹԱՐՅԱՆԻ ԹԱՐԳՄԱՆ՝ Ա. ԽԱՆԻԿՅԱՆԻ ԱՄԱՍՏԱՆՅԱԼ՝ Կ. ԲԵԳԼԱՐՅԱՆԻ Դռնբաց դատական նիստում քննելով մեղադրող Լ. Հովհաննիսյանի և տուժող Մ. Մխիթարյանի վերաքննիչ բողոքները՝ քրեական գործով ըստ մեղադրանքի Կարեն Վլադիմիրի Բեգլարյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի /այսուհետ՝ Դատարան/ 03.10.2011թ. դատավճռի դեմ, Պ Ա Ր Զ Ե Ց Գործի դատավարական նախապատմությունը և փաստական հանգամանքները. 25.01.2011թ. ՀՀ ոստիկանության ՔԳՎ Երևան քաղաքի ՔՎ Մաշտոցի քննչական բաժնի քննիչ Հ.Խեդոյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել և վարույթ է ընդունվել թիվ 10100811 քրեական գործը: 18.02.2011թ. որոշում է կայացվել Կարեն Բեգլարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով մեղադրանք առաջադրելու մասին: 19.02.2011թ. վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց ընտվել է կալանավորումը և որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց կիրառվել գրավը: 21.02.2011թ. վճարվել է սահմանված գրավի՝ 1.500.000 դրամ գումարը և նույն օրը մեղադրյալը ազատ է արձակվել կալանքից: 24.05.2011թ. քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Դատարան և 07.06.2011թ. որոշում է կայացվել դատաքննության նշանակելու մասին: Դատարանի 03.10.2011թ. դատավճռով ամբաստանյալ Կարեն Բեգլարյանը ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքում ճանաչվել է անպարտ և

արդարացվել:
Խափանման միջոց գրավը՝ վերացվել է:
Վճռվել է Կարեն Բեգլարյանի համար <<ԱՐԴՇԻՆԻՆՎԵՍՏԲԱՆԿ>> ՓԲԸ-ն <<ՄԱՇՏՈՑԻ>> մասնաճյուղում Արմեն Հակոբյանի կողմից Երևանի թիվ 2 տեղական գանձապետական բաժանմունքի Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի արտաբյուջետային՝ 900053422011 հաշվին մուծված 1.500.000 դրամ գումարը վերադարձնել Արմեն Հակոբյանին:
Դատարանի 03.10.2011թ. դատավճռի դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել տուժող Մ. Մխիթարյանը և մեղադրող Լ. Հովհաննիսյանը:

2.Գործի փաստական հանգամանքները
Նախաքննական մարմնի կողմից Կարեն Բեգլարյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, խարդախությամբ, առանձնապես խոշոր չափի գույք հափշտակելու դիտավորությամբ, Սերյոժա Դալաքյանին սեփականությամբ պատկանող Երևանի Շիրազի փողոցի 52/6 հասցեում գտնվող խանութը, Միքայել Սարդարյանին 48.000 ԱՄՆ դոլարով վաճառելու պատրվակով, խաբեությամբ և վերջինիս վստահությունը չարաշահելով, 2008թ. ապրիլ-հունիս ամիսներին, Երևանի Պարոնյան 1 հասցեում գտնվող իր գրասենյակում և Դավթաշեն 2-րդ թաղամասի 32-րդ շենքի 23 բնակարանում, Ս.Սարդարյանից ստացել և խարդախությամբ հափշտակել է առանձնապես խոշոր չափ հանդիսացող 2.706.000 դրամին համարժեք 5.500 եվրո, 3.880.800 դրամին համարժեք 9.900 ԱՄՆ դոլար և 8.000.000 դրամ, ընդհանուրը՝ 13.794.800 դրամ՝ Միքայել Սարդարյանին և նրա կնոջը՝ Մարինա Մխիթարյանին պատճառելով առանձնապես խոշոր չափի գույքային վնաս:

2/. Վերաքննիչ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.
Վերաքննիչ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում, ներքոհիշյալ հիմնավորումներով:
1. Տուժող Մարինե Մխիթարյանը իր վերաքննիչ բողոքում նշել է, որ Դատարանը ապացույցների հետազոտման, գնահատման արդյունքում կատարել է սխալ իրավական վերլուծություն, քրեական գործի փաստական հանգամանքների վերաբերյալ եզրակացության հանգելիս թույլ է տվել ակնհայտ սխալ՝ իր ամուսնու՝ Միքայել Սարդարյանի դիմումը Մաշտոցի քննչական բաժին դիտելով որպես օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցի օգտագործում՝ պատճառաբանելով, որ խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 126 հոդվածը, 216 հոդվածի 1-ին մասը, Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի 6 հոդվածի 3-րդ մասի դ կետը և մի շարք այլ հոդվածներ:
Ապացույցների ոչ ճիշտ իրավական գնահատման արդյունքում Դատարանը գտել է, որ իր ամուսնու և Կարեն Բեգլարյանի միջև ծավալվել են քաղաքացիաիրավական հարաբերություններ և որ վերջինիս արարքներում բացակայում են ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշները:
Տվյալ պարագայում Կարեն Բեգլարյանը գույքին (դրամին) տիրանալու համար դիմել է խաբեության՝ իր ամուսնուն հայտնելով ոչ ճիշտ տեղեկություններ, ներկայանալով որպես Երևանի Շիրազի փողոցի 52 շենքի դիմաց գտնվող մթերային խանութի սեփականատեր, որը ինչպես պարզվեց հետագայում, դեռևս 2007թ. առ ու ծախի պայմանագրով վաճառվել է գործով վկա Սերյոժա Դալլաքյանին: Կ. Բեգլարյանը իր հանցավոր գործողությունները իրականացրել է

ստացականներ (09.06.2008թ. կազմված), 11.06.2008թ. փոխառության պայմանագիր կազմելու եղանակով:
Դեռևս 16.04.2008թ., 5.000 Եվրո ստանալուց հետո 2 օր անց, իրենց հայտնել է, թե իբրև խանութը գնող այլ հաճախորդ կա, որը իրեն

կվճարի արժեքը ամբողջությամբ, սակայն չի ցանկանում վաճառել նրանց, քանի որ խոստացել է իրենց՝ այդ եղանակով համոզելով և հորդորելով, ծուղակը գցելով՝ աստիճանաբար, 18.04.2008թ. ստացել 500 եվրո, 24.04.2008թ.՝ 1.000 ԱՄՆ դոլար, 26.04.2008թ. 8.900 ԱՄՆ դոլար, ընդհանուրը մինչև վարկի ձևակերպումը՝ խաբեությամբ իրենցից ստացել է 18.000 ԱՄՆ դոլար:
Կարեն Բեգլարյանը խաբեությամբ (իրենց հայտնել է, որ բացի մեր բնակարանից բանկում գրավ է դրվել նաև իր անվամբ գոյություն չունեցող ավտոմեքենաները) 18.000 ՍՄՆ դոլարի փոխարեն վարկ է ստացել 30 հազար ԱՄՆ դոլար, որը նա և բանկի աշխատակիցը՝ (1.600.000 դրամ) յուրացրել են:
Քրեական գործում նշված (գրավոր բոլոր) ապացույցների ճիշտ գնահատման արդյունքում ակնհայտ է դառնում, որ Կարեն Բեգլարյանն ի սկզբանե նպատակ է ունեցել խարդախության միջոցով հափշտակել ուրիշի գույքը:
ՀՀ Վճռաբեկ դատարանը թիվ ԵԿԴ/0176/01/09 քրեական գործով 24.02.2011թ. որոշմամբ արտահայտել է իրավական դիրքորոշում՝ խարդախության հանցակազմի սուբյեկտիվ կողմի դրսևորման վերաբերյալ, որը լիովին համապատասխանում Կարեն Բեգլարյանի կողմից կատարված արարքի հատկանիշներին:
Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376, 378, 379, 380, 381 հոդվածներով, 396 հոդվածի 1-ին, 2-րդ կետերով՝ բողոքաբերը խնդրել է բեկանել Դատարանի 03.10.2011թ. դատավճիռը, Կարեն Բեգլարյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և դատապարտել ազատազրկման օրենքով նախատեսված պատժաչափով /հաշվի առնելով իրենց պատճառված վնասի չափը/:
2. Մեղադրող Լ. Հովհաննիսյանն իր վերաքննիչ բողոքում նշել է, որ ապացույցների գնահատման և Դատարանի իրավական վերլուծության հետ անհամաձայնությունը կայանում է նրանում, որ առաջադրված մեղադրանքում ամբաստանյալ Կարեն Բեգլարյանն իրեն մեղավոր չի ճանաչել և ցուցմունք է տվել, որ ինքը տուժողներին չի խաբել, իրենց միջև առկա են քաղաքացիական իրավահարաբերություններ: Այս առումով նրա պատճառաբանությունները քրեական պատասխանատվությունից ու պատժից խուսափելու նպատակ են հետապնդում և հերքվել են Դատարանում հետազոտված այլ ապացույցներով, մասնավորապես տուժողի, վկաների ցուցմունքներով, գործով ապացույց այլ փաստաթղթերով: Չտալով իր գործողություններին քրեահրավական գնահատական՝ տուժողների հետ ունեցած փաստական հարաբերությունների մասին Կարեն Բեգլարյանի ցուցմունքներն ըստ էության մասնակիորեն խոստովանական էին, պարզապես գործի փաստական հանգամանքների շուրջ նրա ցուցմունքների իրավական գնահատման հարցում Դատարանը թույլ է տվել դատական սխալ:
Կ.Բեգլարանի ցուցմունքն այն մասին, որ խանութը պարտքի դիմաց Սերյոժա Դալլաքյանին պայմանագրով ի սեփականություն հանձնած լինելու և պարտքը վերադարձնելու դեպքում այն կրկին իր անվամբ վերաձևակերպելու պայմանավորվածության մասին Մ. Սարդարյանին հայտնել է իրենց ծանոթության և առուծախի շուրջ պայմանավորվածության հենց սկզբից, հերքեցին ոչ միայն տուժողն ու նրա դուստրը, այլև վկա Սերյոժա Ղազարյանը, ով հանդիսանալով որպես անշարժ գույքի գործակալ՝ ծանոթացրել է կողմերին, ներկա է գտնվել նրանց պայմանավորվածություններին, դատարանին հայտնեց, որ ինքը ևս տեղյակ չի եղել նշվածի մասին, այլապես իր իսկ բառերով՝ ,, ...հո հիմար չէի նման պայմաններում միջնորդ հանդես գայի..: Նա ցուցմունք տվեց, որ համոզված է եղել, որը խանութր պատկանում է Կ.Բեգլարյանին՝ դրա բանալիները մշտապես գտնվել են նրա մոտ և տարիներ շարունակ իմացել է, որ խանութի սեփականատերը Կարեն Բեգլարյանն է: Հետագայում, երբ վերջինս խուսափել և թաքնվել է տուժողներից, ինքը նրան գտնելու

համար ենթարկվելով տուժողների հետամուտին, ամիսներ անց նոր միայն իմացել է, որ խանութը Կարեն Բեգլարյանի անվամբ չի եղել: Վերջինս իր ցուցմունքներով չի հերքել, որ տուժողներից ստանալով 44 հազար ԱՄՆ դոլար գումար, Սերյոժա Դալլաքյանի 25 հազար դոլար պարտքը վերադարձնելու և խանութը իր կամ Մ. Ասրդարյանի անվամբ վերաձևակեպելու ուղղությամբ ոչինչ չի արել, հայտնեց, որ այդ գումարը ծախսել է այլ նպատակներով, այդ թվում հոր գերեզմանն է սարքել:
Ամբաստանյալի ցուցմունքների իսկ համաձայն, նրա գործողությունների ողջ հաջորդականությունը միանշանակորեն հաստատում է ի սկզբանե նրա սուբյեկտիվ դիտավորությունը՝ խարդախությամբ հափշտակելու տուժողների գումարը:
Աբսուրդ է ամբաստանյալի այն պատճառաբանությունը, որ տուժողը վարկը վերցնելուց և 44 հազար դոլարը տալուց հետո, քանի որ մնացած 4000 դոլարը վճարել չէր կարող, հրաժարվեց ինչպես գործարքից, այնպես էլ գումարը ետ ստանալու իր առաջարկից, ասելով, որ իրեն գումար անհրաժեշտ չէ և պայմանավորվել են, որ Մ.Սարդարյանից վերցրած ամբողջ գումարի՝ 44.000 ԱՄՆ դոլարի դիմաց Մ.Սարդարյանին յուրաքանչյուր ամիս վճարի մոտ 2.000 ԱՄՆ դոլար գումար՝ որպես տոկոս: /Տուժող Մարինա Սխիթարյանի, վկաներ Նատալյա Գրիգորյանի, Սերյոժա Դազարյանի, Սերյոժա Դալլաքյանի, Գևորգ Փաշոյանի ցուցմունքներ/ :
Դատարանը, հետազոտելով նախաքննական մարմնի 25.02.2011թ. որոշմամբ ապացույց ճանաչված և քրեական գործին կցված Միքայել Սարդարյանի կողմից Մաշտոցի քննչական բաժին ուղարկված դիմումը, որով հաստատվում են քրեական գործի համար կարևոր նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ, այդ փաստաթուղթը ճանաչել է անթույլատրելի ապացույց՝ պատճառաբանելով, որ չի ստուգվել այդ փաստաթղթի ձեռք բերման աղբյուրը, նախաքննական մարմինը անհայտ ծագումով դիմումը ճանաչել է որպես ապացույց:
Բողոքաբերը գտնում է, որ քննիչը ապացույց է ճանաչել Մ.Սարդարյանի կողմից ուղարկված դիմումը՝ որպես այլ փաստաթուղթ և նրա ձեռք բերման աղբյուրը հայտնի է եղել: Տուժողը Դատարանում հայտնել է, որ դիմումը գրել է իր ամուսինը ռուսերեն լեզվով, այն թարգմանվել է հայերեն արտոնագիր ունեցող թարգմանչի կողմից, որից հետո իր ամուսինը ստորագրել և ՈԴ-ից ուղարկել է քննիչին՝ ֆաքսի միջոցով: Ուստի Կ.Բեգլարյանի որևէ իրավունք չի խախտվել և որպես այլ փաստաթուղթ ճանաչված դիմումը ունի ապացուցողական նշանակություն իսկ դրա անթույլատրելի ճանաչելն անհիմն է: Քրեադատավարական օրենքի խախտումը տվյալ դեպքում էական է:
Գործով ձեռք բերված բավարար ապացույցների համակցության անկողմնակալ գնահատման արդյունքում միանշանակորեն հաստատվում է, որ Կ. Բեգլարյանը ի սկզբանե նպատակ է ունեցել խարդախության միջոցով հափշտակելու տուժողների գումարը, չվերադարձնելու այն, չկատարելու խոստումը կամ պայմանագրային պարտավորությունները, և շահադիտական նպատակի վրա հիմնված նրա գործողությունների ու անգործության ամբողջ ծավալը ապացուցում է, որ նրա արարքում առկա է խարդախության հանցակազմ:
Վերջինս խաբել է տուժողներին, նրանցից թաքցրել խանութն իրենը չլինելու փաստը, երբ վերջիններս հայտնել են, որ իրենք այդքան գումար չունեն, հորդորել է վարկ վերցնել, համոզել որ ինքը կօգնի նրանց վարկ վերցնելու, և հետագայում խանութը ամսեկան 2 հազար դոլարով վարձով տալու հարցում: Փաստորեն, ներգործել է տուժողների գիտակցության և կամքի վրա:
Դատարանի դատողությունները զուտ ապօրինի են, իրավական վերլուծությունը չի համապատասխանում քրեական օրենքի իսկական իմաստին, վկայակոչելով ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումը, ի խախտումն այդ դիրքորոշման՝ գործի փաստական հանգամանքների վերաբերյալ սխալ հետևություններ է

արել:
Դատարանը ջանք չի խնայել արհեստականորեն հակասական համարել տուժող Մարինա Մխիթարյանի, Սերյոժա Ղազարյանի, Գևորգ Փաշոյանի հայտնած տեղեկությունները՝ Կարեն Բեգլարյանի գործողությունների իրավական գնահատման հիմքում դնելով միայն նրա իսկ տված ցուցմունքները, առանց դրանք համադրելու այլ ապացույցների հետ:
Փոխառության պայմանագրի առկայությունը տվյալ դեպքում բացարձակապես չի խոսում քաղաքացիաիրավական հարաբերությունների առկայության մասին, ավելին այդ փաստաթղթի առկայությունը հաստատում է ամբաստանյալի կողմից մտածված, պլանավորված իր գործողություններին քաղաքացիական հարաբերությունների բնույթ տալու միտումը:
Տուժողներն արդեն իսկ ունեցել են գրավոր ստացական, կասկածներ չեն ունեցել Կ.Բեգլարյանի կողմից խաբվելու վերաբերյալ, այդպիսիք չեն բարձրաձայնել, գործարքի ձևակեպումն օրերի հարց էր և պայմանագրի կնքումը եղել է ամբաստանյալի նախաձեռնությունը:
Նման պայմաններում դատարանի հետևությունները չեն բխում գործի փաստական հանգամանքներից:
Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 54 հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով, 376, 380, 395 հոդվածներով՝ բողոքաբերը խնդրել է բեկանել Դատարանի 03.10.2011թ. դատավճիռը՝ ամբաստանյալ Կարեն Բեգլարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքում անպարտ ճանաչելու և արդարացնելու վերաբերյալ և կայացնել մեղադրական դատավճիռ:

3.Վերաքննիչ բողոքի դեմ բերված պատասխանը.
Ամբաստանյալ Կարեն Բեգլարյանի պաշտպանները վերաքննիչ բողոքի դեմ բերված իրենց պատասխանում նշել են, որ մեղադրողի կողմից գործի փասաակսւն հանգամանքների նման խեղաթյուրումը մեղմ ասած անհասկանալի է իրենց, քանի որ Դատարանում ապացուցվել է ճիշտ հակառակը:
Ինչ վերաբերում է Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների դատախազության կողմից բողոքի հետ ներկայացվող «նոր ապացույցին», ապա նախ բողոքում որևէ հիմնավորում ներկայացված չէ այն մասիև, թե ինչ օբյեկտիվ հանգամանքների առկայության պայմաններում է, որ հնարավոր չի եղել այն ներկայացնել առաջին ատյանի դատարանում:
Բացի այդ, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381 հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, վերաքննիչ բողոքը պետք է բովանդակի՝ բողոքին կցվող նյութերի ցանկը, ինչը ներկայացված բողոքում բացակայում է, այսինքն ըստ էության խախտվել է նշված հոդվածի պահանջը և համաձայն նույն հոդվածի 2-րդ մասի՝ այն դեպքում, երբ վերաքննիչ բողոքը չի համապատասխանում սույն հոդվածով սահմանված պահանջներին, վերաքննիչ դատարանի որոշմամբ այն թողնվում է առանց քննության:
Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73 հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, 382 հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝ խնդրել է մերժել մեղադրող Լ. Հովհաննիսյանի և տուժող Մ. Մխիթարյանի վերաքննիչ բողոքները՝ Դատարանի դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ:

4/.Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.
Վերաքննիչ բողոքում նշված հիմքերի ու հիմնավորումների սահմաններում վերլուծելով գործի նյութերը, լսելով մեղադրողի և

տուժողի կողմից իրենց վերաքննիչ բողոքների հիմնավորումները, ամբաստանյալի բացատրությունը, պաշտպանի պատասխանը, ստուգելով քրեական գործով ձեռք բերված ապացույցները, ապացույցների ձեռքբերման աղբյուրները, քրեական գործով ձեռք բերված յուրաքանչյուր ապացույց ստուգելով թույլատրելիության, վերաբերելիության, ապացույցների ողջ համակցությունը՝ քրեական գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանը գտավ, որ տուժողի և մեղադրողի վերաքննիչ բողոքները պետք է մերժել, Դատարանի 03.10.2011թ դատավճիռը՝ քրեական գործով ըստ մեղադրանքի Կարեն Բեգլարյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդվածի 3-րդ մասի 1-ի և կետով, թողնելով օրինական ուժի մեջ՝ հետևյալ պատճառաբանությամբ:

Առաջադրված մեղադրանքում ամբաստանյալ Կարեն Բեգլարյանն իրեն մեղավոր չի ճանաչել և ցուցմունք է տվել այն մասին, որ 2007թ-ից շահույթ ստանալու նպատակով Ծաղկաձորում իրականացրել է շինարարական աշխատանքներ, սակայն դրանք ձախողվել են հողերի սահունության պատճառով և ինքը կանգնել է ֆինանսական խնդիրների առջև: Այդ աշխատանքները կատարելիս, օգտագործել է նաև իր հոր ընկերոջ՝ Սերյոժա Դալլաքյանից 2006-2007թթ. մաս-մաս վերցրած ընդհանուր առմամբ 25.000 ԱՄՆ դոլար գումարը և շինարարական աշխատանքների ձախողումից հետո, որպես գումարը վերադարձնելու երաշխիք, սեփականությամբ իրեն պատկանող Երևանի Շիրազի փողոցի 52-րդ շենքի դիմաց գտնվող մթերային խանութը 2007թ. դեկտեմբեր ամսին, առուվաճառքի պայմանագրով հանձնել է վերջինիս, պայմանով՝ երբ պարտքը վերադարձնի խանութը կվերաձևակերպվի: Տեսնելով, որ իր գործերը գնալով վատանում են՝ 2008թ. սկզբին, դեռ իր հոր կենդանության օրոք, որոշել է խանութը վաճառել 50.000 ԱՄՆ դոլարով /հայրը մահացել է 02.02.2008թ./ և այդ մասին ասել է անշարժ գույքի վաճառքով զբաղվող Սերգեյ Ղազարյանին, ում միջոցով էլ 2008թ. ապրիլին ծանոթացել է Միքայել Սարդարյանի հետ: Վերջինս համաձայնվել է խանութի դիմաց վճարել 48.000 ԱՄՆ դոլար ու ասել, որ պետք է խորհրդակցի իր ընտանիքի անդամների և ընկերների հետ, որոնք բնակվում են ՌԴ-ում, որպեսզի ճշտի, թե ինչ ժամկետում նրանք կուղարկեն այդ գումարը: Երկու-երեք օր անց, Մ.Սարդարյանը եկել է Երևանի Պարոնյան 1 հասցեում գտնվող իր կողմից վարձակալած գրասենյակ և պարտավորվել՝ երկու ամսվա ընթացքում վճարել նշված գումարը, իսկ ինքը պարտավորվել է ամբողջ գումարը ստանալուց հետո խանութը ձևակերպել վերջինիս անվամբ ու միաժամանակ նշել, որ խանութն այլ անձի անվամբ է գրանցված, ում ինքը պարտք է մոտ 10.000.000 դրամ և այն վերադարձնելուց հետո կարող է խանութը անվանափոխել իր անվամբ ու առաջարկել է գումարը վճարել երկու փուլով, ինչին նա համաձայնվել է: Երկու օր անց Մ.Սարդարյանն իր փեսայի ու Սերգեյ Ղազարյանի հետ եկել է իր գրասենյակ և որպես խանութը գնելու կանխավճար՝ իրեն տվել 5.000 Եվրո գումար, որի վերաբերյալ գրել է ստացական: Այնուհետև, Մ.Սարդարյանը ստացականում նշված օրերին իր գրասենյակում իրեն է տվել 500 Եվրո, 1.000 և 8.900 ԱՄՆ դոլար գումարներ, ընդհանուր առմամբ 26.04.2008թ. դրությամբ՝ 18.000 ԱՄՆ դոլար գումար: Մոտ տասնհինգ օր անց, Մ.Սարդարյանը իրեն հայտնել է, որ ճգնաժամի հետևանքով իր ընկերները չեն կարողանում ՌԴ-ից գումար ուղարկել և պատրաստվում է իր տունը գրավադրել բանկում և տալ խանութի մնացած գումարը, սակայն, քանի որ իրենք ՌԴ քաղաքացիներ են, բանկը վարկ չի տրամադրում և խնդրել է օգնել վարկ ձևակերպելու հարցում: Ինքը նրան ասել է, որ իր մոտ կա Գևորգ Փաշոյանի այցեքարտը, ով զբաղվում է վարկերի ձևակերպմամբ և կարող է դիմել նրան: Իրենք վերջինիս հետ հանդիպել են Մ.Սարդարյանի շենքի բակում, ով վերցրել է Մ.Սարդարյանի բնակարանի և այլ փաստաթղթերը: Դրանց ծանոթանալուց հետո, Գ.Փաշոյանը զանգահարել է իրեն և հայտնել, որ կարող է 10.000.000 դրամի վարկ

ձևակերպել իր քրոջ անունով, սակայն անհրաժեշտ է որպեսզի վարկի մարումները կանոնավոր կատարվի, որպեսզի վարկային պատմությունը չխեղաթյուրվի և որպես իր ծառայությունների վարձատրության գումար՝ պահանջել է վարկի գումարի 10%-ը տրամադրել իրեն: Ինքը ասել է, որ վարկի մարման երաշխիք պետք է տա Մ.Սարդարյանը և ոչ թե ինքը: Այնուհետև Մ.Սարդարյանը համաձայնվել է այդ պայմաններին և առանձին հանդիպել է Գ.Փաշոյանին գործարքի մանրամասները քննարկելու համար: Միևնույն ժամանակ, Մ.Սարդարյանն իրեն հայտնել է, որ քանի որ վարկի գումարից 1.000.000 դրամը պետք է հանձնի Գ.Փաշոյանին որպես միջնորդավճար, և հենց այդքան է պակասում վարկը ստանալուց հետո որ իրեն վճարի խանութի ողջ արժեքը, ապա տարբերությունը՝ 1.000.000 դրամն իրեն կտա մոտ հինգ օր անց: Մի քանի օր անց, իրեն է զանգահարել Գ.Փաշոյանը և հայտնել, որ Մ.Սարդարյանը նոտարական գրասենյակում հրաժարվել է գործարքը կնքելուց՝ իմանալով, որ վարկը ձևակերպվում է ոչ թե իր, այլ Գևորգ Փաշոյանի քրոջ անվամբ: Երեկոյան Մ.Սարդարյանը զանգահարել է իրեն և կրկին հայտնել, որ համաձայն է վարկի ձևակերպման հետ, սակայն Գ.Փաշոյանը հայտնել է, որ բանկի ներկայացուցիչը կասկածներ է հայտնել Մ.Սարդարյանի գործարքից հրաժարվելու կապակցությամբ և դրանք փարատելու համար միջնորդավճարը կկազմի վարկի գումարի 16%-ը: Ինքը զանգահարել է Մ.Սարդարյանին և տեղեկացրել նոր պայմանների մասին: Վերջինս մոտ մեկ ժամ անց զանգահարել է իրեն և հայտնել, որ համաձայն է, բայց վարկը ստանալուց հետո իրեն է հանձնելու 1.600.000 դրամ պակաս գումար, որը կտա մի քանի օր անց: Ինքը համաձայնվել է՝ ասելով, որ գործարքը կկնքեն գումարը ամբողջությամբ տալուց հետո: Մի քանի օր անց, Մ.Սարդարյանը զանգահարել է իրեն և հայտնել, որ գնում են բանկ գումարը ստանալու և խնդրել է իրեն ներկա գտնվել՝ պատճառաբանելով, որ Գ.Փաշոյանին լավ չի ճանաչում: Երբ գնացել է <<ՎՏԲ Հայաստան բանկ>>ՓԲԸ-ն Ավանի մասնաճյուղի մոտ, այնտեղ հանդիպել է Գ.Փաշոյանին, նրա քրոջը՝ Շուշանիկ Ռուշանյանին, Մ.Սարդարյանին իր կնոջ՝ Մարինա Մխիթարյանի և դստեր՝ Նատալյա Գրիգորյանի հետ: Ինքը սպասել է դրսում, իսկ Մ.Սարդարյանը Գ.Փաշոյանը և նրա քույրը մտել են բանկ: Նրանց վերադառնալուց հետո, Մ.Սարդարյանը և Գ.Փաշոյանը իր ավտոմեքենայում հաշվել են գումարը, որից հետո Մ.Սարդարյանն իրեն է տվել 4.000.000 դրամ, որից հետո ինքը գնացել է իր գործերով, իսկ Գ.Փաշոյանը Մ.Սարդարյանին և նրա ընտանիքի անդամներին տարել է տուն: Նույն օրը՝ 09.06.2008թ., երեկոյան, պայմանավորվածության համաձայն, գնացել է Մ.Սարդարյանի բնակարան և վերջինս կնոջ ու դստեր ներկայությամբ իրեն տվել ևս 4.000.000 դրամ և ասել, որ գումարի մնացած մասը՝ մոտ 4.000 ԱՄՆ դոլարը, կտա մի քանի օր անց, քանի որ 10.000.000 դրամից 1.600.000 դրամը տվել է Գ.Փաշոյանին, 8.000.000 դրամը իրեն, իսկ 400.000 դրամն իրեն ներկայումս անհրաժեշտ է: Ինքը կրկին ստացական է գրել, որում նշել է, որ որևէ պահանջ այլևս չունի և խանութը կձևակերպի 16.06.2008թ., քանի որ Մ.Սարդարյանը պարտավորվել էր պարտք մնացած 4.000 ԱՄՆ դոլարը վճարել հինգ օր անց՝ 16.06.2008թ.: Հաջորդ օրը՝ առավոտյան ժամը 10-ի սահմաններում, գնացել է իր գրասենյակ, ուր մուտքի մոտ տեսել է Միքայել Սարդարյանին: Վերջինս զրույցի ընթացքում հայտնել է, որ չի կարող տալ մնացած 4.000 ԱՄՆ դոլարը, բացի այդ հրաժարվում է խանութը գնելուց, քանի որ իրեն մոտ 15.000 ԱՄՆ դոլար գումար է անհրաժեշտ խանութը աշխատացնելու համար, իսկ աշխատացնելու դեպքում էլ իր հաշվարկներով խանութի ստացած եկամուտով չի կարողանա մարել վարկը և հոգալ իր կարիքները: Ինքը առաջարկել է նրան վերադարձնել 9.000.000 դրամ /8.000.000 դրամ վարկից իրեն տրված գումարը և 1.000.000 դրամ ունեցել է գրասենյակի դրամարկղում/, իսկ մնացած գումարները հետագայում, քանի որ դրանք ծախսել է իր հոր գերեզմանի կառուցման համար:

Մ.Սարդարյանը հայտնել է, որ իրեն գումար անհրաժեշտ չէ, իրեն գործ է պետք, որ ընտանիքը պահի, քանի որ որոշել է մշտական բնակություն հաստատել Հայաստանում: Ի վերջո իրենք պայմանավորվել են, որ վերջինիս տրված 8.000.000 դրամը մնա իր մոտ և ինքը նրանից վերցրած ամբողջ գումարի՝ 44.000 ԱՄՆ դոլարի դիմաց նրան յուրաքանչյուր ամիս վճարի մոտ 2.000 ԱՄՆ դոլար գումար որպես տոկոս, ինչը այն ժամանակ համարժեք էր 620.000 դրամին՝ մինչև ամբողջ գումարի վերադարձը: Հաջորդ օրը Մ.Սարդարյանի առաջարկով, վերջինիս և նրա դստեր հետ գնացել են նոտարական գրասենյակ, որտեղ իր և Նատալյա Գրիգորյանի միջև կնքվել է փոխառության պայմանագիր, ըստ որի ինքը վերջինիցս փոխառությամբ մեկ ամիս ժամկետով վերցրել է 15.000.000 դրամ գումար: Գումարի չափը իր վերցրած գումարից 1.000.000 դրամով ավել և փոխառությունը մեկ ամիս ժամկետով ձևակերպելը եղել է Մ.Սարդարյանի պահանջը, վերջինս պատճառաբանել է, որ եթե պայմանավորվածության համաձայն չկատարի ստանձնած պարտավորությունը, ապա նման դեպքում ինքը հնարավորություն կունենա ցանկացած պահի դիմել դատարան՝ ամբողջ գումարի բռնագանձման պահանջով: Ինքն օգոստոս ամսին Մ.Սարդարյանին է տվել 450.000 դրամ, սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին 620.000-ական դրամ, իսկ նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ընդհանուր առմամբ 965.000 դրամ, որի մեջ ներառված է եղել Մ.Սարդարյանի ինքնաթիռի տոմսի արժեքը Երևան-Եկարտիրնբուրգ և հետադարձ ուղղություններով, ինչպես նաև ճանապարհածախսը: Հունվար և փետրվար ամիսներին վերջինիս վճարել է ընդամենը 172.000 դրամ, ինչի կապակցությամբ վերջինս դժգոհել է, ասելով որ խնամքին թոռնիկ ունի և չի կարողանում հոգալ ընտանիքի ծախսերը: Ինքը Մ.Սարդարյանի պարտքը վերադարձնելու պարտավորությունից դրդված, ճարահատյալ նույնիսկ փորձել է վաճառել իր երիկամը, և այդ նպատակով մի քանի լաբարատոր հետազոտությունների է ենթարկվել, սակայն վերջին հետազոտության ընթացքում պարզվել է, որ ինքը տառապում է <<Հեպոտիտ C>> հիվանդությամբ, ուստի իր երիկամը պիտանի չէ փոխպատվաստման համար: Նշեց, որ ինքը խարդախություն չի կատարել և Մ.Սարդարյանի գումարները հափշտակելու մտադրություն չի ունեցել, ուղղակի հանգամանքների բերումով և վերջինիս գործարքից հրաժարվելու կապակցությամբ ընկել է անելանելի վիճակի մեջ Մ.Սարդարյանից վերցված 44.000 ԱՄՆ դոլարից կարողացել է վերադարձնել ընդամենը 2.850.000 դրամ և չի հրաժարվում, որ նրա հանդեպ ունի պարտավորություններ և գումար ունենալու դեպքում պատրաստ է հետ վերադարձնել պարտքը /դատական նիստի արձանագրություն/: Տուժող Մարինա Մխիթարյանը ցուցմունք է տվել, որ 2008թ. ամբողջ ընտանիքով Եկատիրինբուրգից տեղափոխվել են Երևան: Իրենք ունեցել են մի փոքր խնայողություններ, որով ցանկացել են Երևանում խանութ գնել, աշխատել, որպեսզի օգնեն իրենց դստերը մեծացնելու նրա փոքր երեխային, ով հոր մահից հետո կորցրել էր կերակրողին: Այդ նպատակով իրենք դիմել են մի քանի անշարժ գույքի գործակալների, այդ թվում նաև Սերգեյ Ղազարյանին: Վերջինիս առաջարկել է 50.000 ԱՄՆ դոլարով գնել Երևանի Շիրազի փողոցի 52 շենքի դիմաց գտնվող խանութը, որը իրենք տեսնելով հավանել են: Դրանից հետո Սերգեյ Ղազարյանն իր ամուսնուն ծանոթացրել է Կարեն Բեգլարյանի հետ, ով այն ժամանակ զբաղվում էր ավիոտոմսերի վաճառքով, կրում էր փողկապ, վարում էր <<Տուառեգ>> ավտոմեքենա և զբաղվում էր ավտոմեքենաներ վարձակալության հանձնելով ու թողնում էր պարկեշտ մարդու տպավորություն: Իր ամուսինը համաձայնության է եկել վերջինիս հետ խանութը 48.000 ԱՄՆ դոլարով գնելու հարցում: Իր ամուսինը մի քանի անգամ Կարեն Բեգլարյանին և Սերյոժա Ղազարյանին հարցրել է, թե խանութի փաստաթղթերը ինչ վիճակում են, նրանք երկուսն էլ պատասխանել են, որ դրանք նորմալ են, խանութը պատկանում է Կարեն Բեգլարյանին և խանութի բանալիները

մշտապես գտնվել են վերջինիս մոտ: Վերջինս համոզել է իր ամուսնուն վարկ վերցնել՝ գրավադրելով իրենց բնակարանը, իրենք գումարը պետք է տրամադրեին երկու ամսվա ընթացքում: Կ.Բեգլարյանը պարտավորվել էր վարկը ստանալուց հետո խանութը անվանափոխել իր ամուսնու անվամբ: 16.04.2008թ. իր ամուսինը Սերգեյ Ղազարյանի ներկայությամբ Երևանի Պարոնյան 1 հասցեում գտնվող Կ.Բեգլարյանի գրասենյակում նրան է տվել 5.000 Եվրո՝ որպես խանութի գնման կանխավճար: Այդ մասին գրվել է ստացական: Դրանից հետո նույն վայրում 18.04.2008թ. տվել է 500 Եվրո, 24.04.2008թ.՝ 1.000 ԱՄՆ դոլար, 26.04.2008թ.՝ 8.900 ԱՄՆ դոլար: Մինչ վարկի ձևակերպումն իր ամուսինը, որպես կանխավճար ամբաստանյալին է տվել իրենց մոտ առկա ամբողջ գումարը՝ ընդհանուր առմամբ 18.000 ԱՄՆ դոլարի չափով, իսկ վերջինս գրել է սատացական՝ ասելով, որ դա ունի իրավաբանական ուժ: Այնուհետև, 04.06.2008թ. իրենք գնացել են նոտարական գրասենյակ՝ վարկ ձևակերպելու, այն ձևակերպում էր Կ.Բեգլարյանի ծանոթ Գևորգ Փաշոյանն իր քրոջ՝ Շուշանիկ Ռուշանյանի անունով: Գ.Փաշոյանը ասել է, որ իրենց հետ որևէ գործ չունի, գործ ունի միայն Կ.Բեգլարյանի հետ: Վարկը ձևակերպվել էր Շ.Ռուշանյանի անվամբ, քանի որ դրա համար անհրաժեշտ էր ՀՀ քաղաքացու անձնագիր, իսկ իրենք այդ ժամանակահատվածում նման անձնագրեր չեն ունեցել: Իրենց որևէ մեկը չի ասել, որ անհրաժեշտ է հայկական անձնագիր, հակառակ դեպքում իրենք շատ ազգականներ ունեին ՀՀ-ում և վարկը կձևակերպեին իրենց ազգականների անվամբ: Գործարքը կնքելուց հետո, բանկի աշխատակիցն իրենց ասել է, որ իրենց բնակարանի դիմաց տրամադրվել է 30.000 ԱՄՆ դոլար վարկ, իրենք անակնկալի են եկել, քանի որ նախապես գիտեին, թե տրամադրվելու է ընդամենը 18.000 ԱՄՆ դոլար: Խորհրդակցելուց հետո, իրենք համաձայնվել են այդ գումարի չափին, քանի որ հենց այդքան գումար պետք է տային Կ.Բեգլարյանին ու մտածել, որ միևնույն է խանութն իրենց անվամբ ձևակերպվելուց հետո կաշխատեն և աստիճանաբար կմարեն տոկոսները: Իր ամուսինը զանգահարել է վերջինիս, հետաքրքրվել, թե ինչու է 30.000 ԱՄՆ դոլար վարկ տրամադրվում, իսկ վերջինս ասել է, որ իր ավտոմեքենանել է գրավադրված 12.000 ԱՄՆ դոլարի դիմաց: 09.06.2008թ. իրենք գնացել են ՎՏԲ բանկի Ավանի մասնաճյուղ վարկը ստանալու: Բանկի աշխատակիցը պոլիէթիլենային տոպրակով դուրս է բերել գումարը և տարել Կ.Բեգլարյանի ավտոմեքենայի մեջ: Գումարը, ոչ թե 10.000.000 դրամ էր, ինչպես նշված էր պայմանագրում, այլ 8.400.000 դրամ: Իր ամուսինը վրդովվել է գումարը պակաս լինելու կապակցությամբ, իսկ Կ.Բեգլարյանը ասել է, որ 1.600.000 դրամ գումարը տվել է որպես պարգևատրում և ինքը մեզ կվճարի այն: Ավտոմեքենայի մեջ Կ.Բեգլարյանը հաշվել և իրեն է պահել 4.000.000 դրամը՝ մնացածը հանձնել է իր ամուսնուն և հեռացել: Երկու ժամ անց, ամբաստանյալը եկել է իրենց տուն և սկսել պահանջել մնացած գումարը՝ ասելով, որ ամեն ինչ կգրի ստացականում, որը իրավաբանական ուժ ունի և գրել, որ 16.06.2008թ. խանութը կձևակերպի իրենց անվամբ: Տանից դուրս գալու պահին, նա ասել է, որ իրենք չանհանգստանան և որ ամբողջ գումարը նրա մոտ է և այդ ամենը կձևակերպվի նաև նոտարական կարգով: 11.06.2008թ. ամբաստանյալը եկել է իր ամուսնու և դստեր հետևից, նրանց տարել նոտարի մոտ և ձևակերպել 15.000.000 դրամի չափով պարտք: 16.06.2008թ.-ից հետո իրենք կանգնել են մեծ բարդությունների առջև, քանի որ Կ.Բեգլարյանը խանութը չէր ձևակերպում և իր ամուսնուն մշտապես խաբում էր ասելով՝ <<վաղը արի, մյուս օրը արի, երեքշաբթի արի, չորեքշաբթի արի>>՝ամեն անգամ հետաձգելով խանութի ձևակերպումը: Վարկի օրը մոտենում էր, իսկ խանութը դեռ չէր ձևակերպվել իրենց անվամբ: Դրանից հետո, Կ.Բեգլարյանը ասել է, որ վարկի տոկոսներն ինքը կմարի: Երկու ամիս նա տվել է 600.000 դրամ, քանի որ երկրորդ ամիսն էր, որ խանութը իրենց անվամբ չէր ձևակերպված: Ամբաստանյալը

մշտապես խաբում էր՝ ասելով, որ խանութը վերահասցեավորվում է և պետք է սպասել: Հետո Կ.Բեգլարյանը հայտնել է, որ խանութի փաստաթղթերը գտնվում են Սերգեյ Դալլաքյանի մոտ, ով բնակվում է Կրասնոսելսկում և նրան ինքը 15.000 կամ 20.000 ԱՄՆ դոլար է պարտք և պետք է վերադարձնի, որպեսզի նա տրամադրի խանութի փաստաթղթերը: Դրանից հետո, նա հայտնել է, որ Ս.Դալլաքյանի կինը քաղցկեղով հիվանդ է և ներկայումս նա ժամանակ և տրամադրություն չունի: Իրենք խնդրել են ծանոթացնել իրենց Ս.Դալլաքյանի հետ, որպեսզի համոզվեն իրականում այդպիսի անձնավորություն գոյություն ունի թե ոչ, բայց ծանոթությունը այդպես էլ տեղի չի ունեցել: Հետո իր ամուսինը պահանջել է իր տված գումարները՝ ցանկանալով այլ խանութ գնել, սակայն ամբաստանյալը միշտ հետաձգել է գումարների վերադարձը՝ ասելով <<10 օրից Ռուսաստանից կուղարկեն, 15 օրից՝ Ֆրանսիայից, 20 օրից Ամերիկայից>>: Հնարավոր է, որ նրան ուղարկել են այդ գումարները, բայց դրանք իրնեց չեն հասել: Հետո նա ասել է, որ վաճառում է իր երիկամը՝ 25.000 ԱՄՆ դոլարով գնորդներ կան և այդ անձինք իրեն են տվել 5.000 ԱՄՆ դոլար հետազոտություններ անցնելու համար: Որոշ ժամանակ անց, իբր պարզվեց, որ նրա երիկամը փչացած է, բայց եթե նա ցանկություն ունենար վերադարձնելու գումարները, ապա կարող էր վաճառել իր մոր կամ երեխաների կամ բարեկամների երիկամները: Դրանից հետո, ամբաստանյալը հեռախոսին չէր պատասխանում կամ անհասանելի էր և այդպես ձգվեց ութ ամիս: Իր ամուսինը Կ.Բեգլարյանին ասել է, որ կդիմի դատարան, իսկ նա խնդրել է, որ դիմի ոչ թե քրեական դատարան, այլ քաղաքացիական՝ ասելով, որ մնալով ազատության մեջ, հնարավորություն կունենա աշխատել և վերադարձնել գումարը: 2009թ. փետրվարին իր ամուսինը դիմել է դատարան, այդ ժամանակ իրենք արդեն Կ.Բեգլարյանի հետ կապը կորցրել էին: Դատական գործի քննության ընթացքում իրենց հայտն է դարձել, որ վերջինիս անվամբ որևէ գույք հաշվառված չէ, բացառությամբ 1980թ. արտադրության մի հին ավտոմեքենայի, իսկ խանութը նա օտարել էր դեռևս 2007թ.-ին, փաստորեն նա վաճառում էր մի գույք, որը նրան չէր պատկանում: 16.10.2009թ. դատարանը գործի քննությունն ավարտեց նրա բացակայությամբ և բավարելով իրենց հայցը՝ Կ.Բեգլարյանից իրենց օգտին վճռվել է բռնագանձել 44.214 ԱՄՆ դոլար գումար՝ այդ գումարի վրա հաշվարկելով ամսական 1% մինչև գումարի մարումը: Դրանից հետո, մոտ մեկ տարի անց, իրեն հաջողվել է հեռախոսազրույց ունենալ նրա հետ, ում ասել է, որ եթե նա չվերադարձնի իրենց գումարները կամ չձևակերպի իրենց անվամբ խանութը, ապա ինքը կդիմի իրավապահ մարմիններին: Կ.Բեգլարյանն իրեն ասել է, որ ինքը հաշվեհամար բացի և նա քիչ-քիչ կմարի իրենց գումարը, սակայն այլևս իրեն չի զանգահարել: Իր կարծիքով վերջինս և Ս.Ղազարյանը նախնական համաձայնության են եկել իրենցից առանձնապես խոշոր չափի գումարներ հափշտակելու հարցում և գործել են համատեղ /դատական նիստի արձանագրություն/:
Վկա Սերյոժա Ղազարյանը ցուցմունք է տվել այն մասին, որ մանուկ հասակից ճանաչում է Կարեն Բեգլարյանին և իմացել է, որ նա իրենց շենքի դիմաց խանութ ունի: 2008թ. զբաղվել է անշարժ գույքի առքուվաճառքով, այդ ընթացքում նրանից տեղեկացել է, որ խանութը վաճառում է: Մի քանի ամիս անց՝ ապրիլին, իրեն է դիմել իր ծանոթներից Էմման, ով զբաղվում է պատճեննահանությամբ Աջափնյակի նոտարական գրասենյակում և ասել, որ իր բարեկամը՝ Միքայել Սարդարյանը ցանկանում է խանութ ձեռք բերել: Վերջինս իրեն հայտնել է, որ գույքի դիմաց կարող է վճարել 50.000 ԱՄՆ դոլար գումարի սահմաններում: Ինքը նրան է ցույց տվել Կ.Բեգլարյանի խանութը և Մ.Սարդարյանը այն տեսնելով՝ հավանել է: Դրանից հետո, իրենք հանդիպել են Կ.Բեգլարյանին: Ամբաստանյալը խանութը վաճառում էր 50.000 ԱՄՆ դոլարով, իսկ Մ.Սարդարյանը սակարկում էր այդ գումարը՝ ասելով, որ պատրաստ է վճարել 48.000 ԱՄՆ դոլար է: Կ.Բեգլարյանը չէր համաձայնվում

խանութի արժեքը նվազեցնելու առաջարկին՝ մտածելով, որ իրեն՝ որպես անշարժ գույքի գործակալի, պետք է գումար տրամադրի: Տեսնելով, որ կողմերն ընդհանուր հայտարարի չեն գալիս՝ ինքը հաշվի առնելով, որ Մ.Սարդարյանը հրաժարվում էր միջնորդվճարից՝ ասելով, որ այն պետք է վճարի վաճառողը և որ Կ.Բեգլարյանը ուներ գումարային խնդիրներ, հայտնել է, որ իրեն գումար պետք չէ: Դրանից հետո, Մ.Սարդարյանը և Կ.Բեգլարյանը պայմանավորվել են, որ խանութի գինը 48.000 ԱՄՆ դոլար: Երկու օր անց, Մ.Սարդարյանը զանգահարել է իրեն և խնդրել ներկա գտնվել կանխավճարի տրամադրման ժամանակ: Այնուհետև, իր ներկայությամբ, Երևանի Պարոնյան 1 հասցեում գտնվող գրասենյակում Մ.Սարդարյանը Կ.Բեգլարյանին տվել է 5.000 Եվրո՝ որպես կանխավճար, Մ.Սարդարյանը խոստացել է մնացած գումարը վճարել մաս-մաս երկու ամսվա ընթացքում: Այս ամենի վերաբերյալ գրվել է ստացական, որը ստորագրել է նաև ինքը: Դրանից հետո այլևս Մ.Սարդարյանին չի հանդիպել: Նշել է նաև, որ ինքն երբեք հավաստիացումներ չի տվել, որ խանութի փաստաթղթերը նորմալ վիճակում են և չէր էլ կարող տալ, քանի որ դրանք չի տեսել, ուղղակի համոզված է եղել, որը խանութը պատկանում է Կ.Բեգլարյանին՝ դրա բանալիները գտնվել են նրա մոտ և տարիներ շարունակ իմացել է, որ խանութի սեփականատերը հենց Կ.Բեգլարյանն է: Հայտնել է, որ Կ.Բեգլարյանի և Մ.Սարդարյանի միջև վարկ վերցնելու խոսակցություն չի եղել, իսկ Կ.Բեգլարյանի կողմից Մ.Սարդարյանից բացի իր ներկայությամբ տրված կանխավճարից այլ գումարներ վերցնելու մասին իմացել է միայն այն ժամանակ, երբ իրեն կանչել են ՀՀ ոստիկանության 6-րդ վարչություն: Մինչ այդ, իրեն մի քանի անգամ զանգահարել է Մ.Մխիթարյանը Կ.Բեգլարյանի հետ կապ հաստատելու խնդրանքով, ինքը սկզբում օգնել նրան և գտել է Կ.Բեգլարյանին, հետագայում Մ.Մխիթարյանը սկսել է վիրավորել իրեն, որից հետո ինքը չի ցանկացել խոսել նրա հետ: Այդ ընթացքում Կ.Բեգլարյանին հարցրել է, թե ինչու խանութը չի ձևակերպել Մ.Սարդարյանի անվամբ, իսկ վերջինս պատասխանել է, որ գումարն ամբողջությամբ չեն վճարել, հետո Կ.Բեգլարյանից տեղեկացել է, որ խանութը պարտքի դիմաց գրավադրվել է և այն վերադարձնելուց հետո միայն կարող է ձևակերպել գնորդի անվամբ, իսկ ավելի ուշ նոր միայն իրեն հայտի է դարձել, որ խանութը ոչ թե կալանքի տակ է, այլ անվանափոխվել է Ս.Դալլաքյանի անվամբ: Հայտնեց նաև, որ ներկա չի գտնվել Կ.Բեգլարյանի կողմից Մ.Սարդարյանին գումար վերադարձնելուն, սակայն ականատես է եղել նրան, որ Կ.Բեգլարյանը նրան է փոխանցել ինքնաթիռի տոմս, որի գումարը Կ.Բեգլարյանը վճարել է երկու օր անց /դատական նիստի արձանագրություն/:
Վկա Սերյոժա Դալլաքյանը ցուցմունք է տվել այն մասին, որ 1988թ.-ից ճանաչել է ներկայումս հանգուցյալ Վլադիմիր Բեգլարյանին, ով ամբաստանյալի հայրն է: 2006-2007թթ. ինքը Կ.Բեգլարյանի հետ եղել է գործնական հարաբերությունների մեջ և գումարներ է ներդրել նրա բիզնեսում շահույթ ստանալու նպատակով: 2007թ. վերջին Կ.Բեգլարյանի ձեռնարկված գործերը հաջողությամբ չեն պսակվել և նա այլևս չի կարողացել իրեն ինչպես շահույթ տրամադրել, այնպես էլ իր ներդրած գումարները վերադարձնել: Փոխադարձ հաշվարկի արդյունքում պարզել են, որ Կ.Բեգլարյանն իրեն պետք է վերադարձնի մոտ 10.600.000 դրամ, ինչը համարժեք է եղել 30.000 ԱՄՆ դոլարին: Թեև Կ.Բեգլարյանի խանութի արժեքը եղել է անհամեմատ ավելի բարձր, քան նրա ունեցած իրեն հանդեպ պարտավորության գումարը, սակայն որպես պարտավորությունը կատարելու երաշխիք՝ Վլադիմիր Բեգլարյանի առաջարկով նրա որդուն՝ ամբաստանյալին պատկանող Երևանի Շիրազի փողոցի 52 շենքի դիմաց գտնվող խանութը առքուվաճառքի պայմանագրով օտարվել է իրեն՝ պայմանով, որ պարտքը վերադարձնելու դեպքում խանութը կրկին կանվանափոխվի Կ.Բեգլարյանի կամ խանութի գնորդի անվամբ: Այդ ժամանակ, խանութը նույնիսկ հասցե չի ունեցել և ինքը զբաղվել է նաև այդ հարցերով, որից հետո միայն՝

26.12.2007թ. Կ.Բեգլարյանի հետ խանութի առուվաճառքի պայմանագիր են կնքել: Դրանից հետո, Կ.Բեգլարյանի ասածի համաձայն, ինքը երկու անգամ Ճամբարակից՝ ուր բնակվում է, եկել է Երևան և միասնական տեղեկանք է վերցրել կադաստրից խանութը վաճառելու նպատակով, սակայն գործարք չի կնքվել, քանի որ գնորդները ըստ Կ.Բեգլարյանի հրաժարվել են խանութը գնելուց: 2008թ. ապրիլի վերջին, վերջինս իրեն ասել է, որ Ռուսաստանից գնորդ կա, որը բեհ է տվել և խանութը պետք է գնի: Ինքը նրան հայտնել է, որ գումարները վերցնի, նոր իրեն տեղյակ պահի, քանի որ իր համար դժվար է յուրաքանչյուր անգամ 120 կմ ճանապարհ կտրել, հասնել Երևան, գումար վճարել տեղեկանքը կադաստրից ստանալու համար ու վերջում իմանալ, որ գործարքը չի կայանալու: Դրանից հետո, Կ.Բեգլարյանն իրեն չի զանգահարել և, ինքը տեղյակ չի եղել, որ նա 2008թ. ապրիլ-հունիս ամիսներին խանութը վաճառելու համար ստացել է 44.000 ԱՄՆ դոլար գումար, այդ մասին իրեն հայտնի է դարձել նախաքննության ընթացքում՝ քննիչից: Կ.Բեգլարյանը իրեն երբևէ գումար չի տվել /դատական նիստի արձանագրություն/:
Վկա Գևորգ Փաշոյանը ցուցմունք է տվել այն մասին, որ զբաղվում է անշարժ գույքի առքուվաճառքով և բանկերից վարկի տրամադրման գործերով: 2008թ. մայիս ամսին, կոնկրետ օրը չի հիշում, իրեն է զանգահարել մի տղամարդ, ով ներկայացել է Կարեն անունով և հարցրել՝ զբաղվում է արդյոք վարկի տրամադրման գործերով, ինքը մանրամասները քննարկելու համար նրա հետ հանդիպել է իր կողմից Դավթաշենում վարձակալած բնակարանի շենքի բակում և ծանոթացել Կարեն Բեգլարյանի հետ, ով իրեն ասել է, որ իր ծանոթներից մեկի տունն է ուզում գրավադնել, որոնք իրեն գումար են պարտք, բացի այդ ցանկանում էր իր <<Ֆոլկսվագեն>> ավտոմեքենան և հացի փուռը գրավադնել: Ինքը նրան հայտնել է, որ վարկի գումարի 16%-ը պետք է տրամադրվի իրեն որպես միջնորդավճար: Դրանից մի քանի օր անց, վերջինս հեռախոսով հայտնել է, որ խոսել է տունը գրավ դնող անձանց հետ և պետք է սկսել գործընթացը: Այնուհետև ինքը վերջինիս հետ գնացել է Դավթաշենում գտնվող Միքայելի բնակարան, նրա հետ խոսել է՝ Մ.Սարդարյանը համաձայնվել է վարկի գումարի 16%-ը տրամադրել որպես միջնորդավճար: Հաջորդ օրն ինքը վերջինիս տուն է տարել բնակարան գնահատողներին և բոլոր փաստաթղթերը հավաքելուց հետո դրանք ներկայացրել ՎՏԲ բանկի Ավանի մասնաճյուղ: Միքայել Սարդարյանի և նրա ընտանիքի անդամների ՌԴ քաղաքացիներ լինելու պատճառով, ինքը համաձայնվել է վարկը ձևակերպել քրոջ՝ Շուշանիկ Ռուշանյանի անվամբ: Հետագայում՝ նոտարի մոտ պայմանագիրը կնքելու ժամանակ, Միքայել Սարդարյանը տեղեկացել է, որ ամբողջ վարկը 10.000.000 դրամի չափով պետք է ձևակերպվի իրենց բնակարանի գրավադրմամբ և սկսել է վիճել Կ.Բեգլարյանի հետ, ինքը նրանց խոսակցությունից հասկացել է, որ բնակարանի գրավադրմամբ պետք է 18.000 ԱՄՆ դոլարի չափով վարկ վերցվեր, իսկ մնացած 12.000 ԱՄՆ դոլարի դիմաց վերջինս պետք է ավտոմեքենա գրավադներ: Կ.Բեգլարյանի հետ առանձին խոսելուց հետո, Մ.Սարդարյանը ասել է, որ համաձայն է վարկի նման պայմաններին: Հինգ օր անց, քրոջ հետ գնացել է բանկ, որտեղ տեսել է Կ.Բեգլարյանին, Մ.Սարդարյանին նրա կնոջը և աղջկան: Էդգար Ղազարյանը, ով բանկի աշխատակից էր և իրեն օգնել է վարկը ձևակերպելու հարցում, վերցրել է իրենց հասանելիք 1.600.000 դրամը, իսկ մնացած՝ 8.400.000 դրամը իրենք տվել են Կ.Բեգլարյանին, ով Մ.Սարդարյանի հետ նստած է եղել իր ավտոմեքենայում, նրանք երկուսով հաշվել են գումարները, որից հետո ինքը Կ.Բեգլարյանի առաջարկով Մ.Սարդարյանի ընտանիքին իր ավտոմեքենայով տարել է տուն: Ճանապարհին Մ.Սարդարյանի և նրա կնոջ խոսակցությունից հասկացել է, որ նրանք վարկից 4.000.000 դրամը տվել են Կ.Բեգլարյանին՝ ինչ-որ խանութ են ուզում գնել և որ մնացած գումարը պայմանավորվել են տալ առուվաճառքի պայմանագիրը կնքելուց հետո /գ.թ.135-138/:

Գ.Փաշոյանը Կ.Բեգլարյանի հետ առերես հարցաքննվելիս հիմնականում պնդել է իր ցուցմունքը, սակայն հայտնել է նաև այլ տեղեկություններ, որոնք էապես հակասում են իր նախորդ ցուցմունքին, մասնավորապես. նշել է, որ Կ.Բեգլարյանը ցանկացել է 100.000 ԱՄՆ դոլարի չափով վարկ վերցնել՝ գրավադրելով իր ավտոմեքենան, հացի փուռը և բնակարան, ինքը պատասխանել է, որ վարկը տրամադրելու դեպքում դրա 10%-ը պետք է իրեն հատկացվի որպես միջնորդավճար: Հետո պայմանավորվել են, որ գրավադրվելու է միայն բնակարանը: Նոտարական գրասենյակում պայմանագիրը կնքելուց հետո, Մ.Սարդարյանը վիճել է Կ.Բեգլարյանի հետ կապված, թե վարկի գումարի չափի մասին, թե այլ անձի անվամբ վարկը ձևակերպելու մասին և թե Կ.Բեգլարյանի ավտոմեքենան գրավի առարկա չդարձնելու հանգամանքի վերաբերյալ: Դրան ականատես են եղել նաև բանկի ներկայացուցիչը և էդգար Ղազարյանը, վերջինս ասել է, որ տեսնելով Կ.Բեգլարյանի և Մ.Սարդարյանի խոսակցությունը՝ բանկի ներկայացուցիչը որոշել է չեղյալ համարել պայմանագիրը, իսկ որպես խնդրի շտկում առաջարկել է միջնորդավճար տրամադրել ոչ թե վարկի գումարի 10%-ը, այլ 16%-ը: Ինքն այդ մասին տեղեկացրել է Կ.Բեգլարյանին, որից հետո իրեն է զանգահարել Մ.Սարդարյանը և ասել, որ համաձայն է վարկի գումարի 16%-ը տրամադրել որպես միջնորդավճար: Վարկը ստանալու օրը, ինքը քրոջ հետ գնացել է բանկ, այնտեղ հանդիպել է Կ.Բեգլարյանին, Մ.Սարդարյանին, նրա կնոջը և դստերը: Իր քույրը ստացել է 10.000.000 դրամ վարկի գումարը, որից հետո էդգար Ղազարյանը վերցրել է 1.600.000 դրամ իրենց միջնորդավճարը, իսկ մնացած 8.400.000 դրամը տվել է իրեն, ինքը քրոջ հետ դուրս է եկել բանկից և գումարը փոխանցել է Մ.Սարդարյանին, ով նստել է Կ.Բեգլարյանի ավտոմեքենան և նրանք հաշվել են գումարը /գ.թ. 143-145/:
Վկա Նատալյա Գրիգորյանը ցուցմունք է տվել այն մասին, որ 2008թ. իր ծնողները՝ Միքայել Սարդարյանը և Մարինա Մխիթարյանը, որոշել են խանութ գնել և բրոքեր Սերգեյ Ղազարյանի միջոցով ծանոթացել են Կարեն Բեգլարյանի հետ, ով Երևանի Շիրազի 52-րդ հասցեում խանութ էր վաճառում: Ինքը ծնողների խոսակցություններից լսել է, որ Կ.Բեգլարյանն առաջարկել է վարկ ձևակերպել 18.000 ԱՄՆ դոլարի չափով, քանի որ նրանց գումարները բավարար չեն եղել 48.000 ԱՄՆ դոլար արժեքով խանութը ձեռք բերելու համար: Գործարքը կնքելիս՝ նոտարական գրասենյակում, իրենց հայտնի է դարձել, որ իրենց բնակարանի դիմաց տրամադրվող վարկը 30.000 ԱՄՆ դոլար է, իրենք վրդովվել են, քանի որ նախապես գիտեին որ վարկը լինելու է 18.000 ԱՄՆ դոլարի չափով, սակայն իր ծնողները խորհրդակցելուց հետո համաձայնվել են՝ մտածելով, որ միևնույն է պետք է խանութի ամբողջ գումարը տան և ավելի լավ է այդ չափով վարկը ստանալ այն վճարել և խանութը անվանափոխել իրենց անվամբ: Վարկը ստանալու օրը, բանկի աշխատակիցը դուրս է բերել գումարը և տարել Կ.Բեգլարյանի ավտոմեքենայի մեջ, որտեղ վերջինս հաշվել է որոշակի գումար, իսկ մյուս մասը տվել է իր հորը: Հետագայում հորից իմացել է, որ բանկից դուրս են բերել ընդամենը 8.400.000 դրամ՝ 10.000.000 դրամի փոխարեն, որից Կ.Բեգլարյանն իրեն է պահել 4.000.000 դրամ, իսկ 4.400.000 տվել է իր հորը: Նույն օրը, մի քանի ժամ անց, վերջինս եկել է իրենց տուն և խնդրել տրամադրել մնացած գումարը, նա ասել է, որ ամեն ինչը կնշի ստացականի մեջ՝ նշելով խանութի վերաձևակերպման ամսաթիվը ու շեշտել, որ դա ունի իրավաբանական ուժ: Այդ պահին իրենց մտքով անգամ չէր անցնում, որ նա պատրաստվում է իրենց խաբել: Գումարը վերցնելուց հետո, Կ.Բեգլարյանը ստացականում նշել է և պարտավորվել 16.06.2008թ. խանութը վերաձևակերպել իրենց անվամբ: Մինչ գնալը, նա առաջարկել է նաև նոտարական վավերացմամբ պայմանագիր կնքել, պատճառաբանելով՝ որ իրենք չանհանգստանան, որ գումարը գտնվում է իր մոտ: Երկու օր անց, Կ.Բեգլարյանը եկել է իրենց հետևից և ինքը հոր հետ միասին գնացել

են նոտարական գրասենյակ պայմանագիրը կնքելու: Պայմանագրի մեջ նշված գումարի չափը՝ 15.000.000 դրամը, նույնպես առաջարկել է Կ.Բեգլարյանը: Խանութը ձևակերպելու օրը՝ 16.06.2008 թ-ից հետո, իր ծնողների մոտ խնդիրներ են առաջացել՝ իր հայրը ամեն օր գնում էր նրա գրասենյակ և ամեն օր Կ.Բեգլարյանը ինչ-որ պատճառաբանություններ է բերել ձևակերպումը հետաձգելու համար: Ինքն ականատես է եղել այդ երեք տարիների ընթացքում իր ծնողներն ինչպես են տանջվել, նույնիսկ իր հայրը սրտի նոպաներ է ունեցել, ինքը ստիպված է եղել առավոտից երեկո աշխատել, որպեսզի կարողանա կերակրել իր երեխային: Հայտնել է նաև, որ խանութը այլ անձին պատկանելու մասին տեղեկացել են միայն այն ժամանակ, երբ իր հայրը Կ.Բեգլարյանի դեմ հայցով դիմել է դատարան և հակադիր կատարողները պարզել են, որ խանութը դեռևս 2007թ. վաճառվել է: Նշել է նաև, որ խանութը ձեռք բերելու համար իր հայրը նախատեսում էր վաճառել ՌԴ-ում իրենց պատկանող բնակարանը և միգուցե վաճառքի գումարով պետք է մարեր վերցրած վարկը /դատական նիստի արձանագրություն/:
Նախաքննական մարմինը 25.04.2011թ. որոշում է կայացրել ապացույց ճանաչել ստացականը, համաձայն որի այն գրվել է 16.08.2008թ Կարեն Բեգլարյանի և Միքայել Սարդարյանի կոմից, Սերգեյ Ղազարյանի ներկայությամբ, ձեռագիր տեքստով: Նշված ստացականի համաձայն, Կ.Բեգլարյանը Միքայել Սարդարյանից վերցրել է 5.000 Եվրոին համարժեք դրամ՝ նախավճարի տեսքով Երևանի Շիրազի 52-րդ հասցեում գտնվող անշարժ գույքի վաճառքի դիմաց, որի ամբողջ գինը կազմում է 48.000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ: Միքայել Սարդարյանը պարտավորվել է մնացած գումարը վճարել երկու ամսվա ընթացքում՝ սեփականության իրավունքը ձեռք բերելու համար: Կ.Բեգլարյանը պարտավորվել է մնացած գումարը ստանալու պահին նոտարական վավերացմամբ որպես սեփականատեր ճանաչել և տալ սեփականության իրավունքը Միքայել Սարդարյանին: Կազմված փաստաթղթի հակառակ էջում կատարվել են լրացումներ, համաձայն որոնց 18.04.2008, 24.04.2008 և 26.04.2008 թվականներին Կ.Բեգլարյանը ստացել է համապատասխանաբար 500 Եվրոին համաժեք 245.000 դրամ, 1.000 ԱՄՆ դոլար, 8.800 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ: 26.04.2008թ. դրությամբ. ընդհանուր վերցրած գումարի չափը կազմել է 5.794.000 դրամ: Այնուհետև առկա է հետևյալ նշումը՝ <<Ես Բեգլարյան Կարենս ստացա Միքայել Սարդարյանից ևս 8.000.000 դրամ խանութի դիմաց և պահանջ չունեմ պարտավորվում եմ մինչև 16.06.2008թ. խանութի սեփականության իրավունքը հանձնել Միքայել Սարդարյանին, հակառակ դեպքում վերադարձնել ամբողջ գումարը իմ կողմից վերցրած, որը նշված է տվյալ ստացականի մեջ. 09.06.2008թ. գրված է իմ ձեռքով, որի համար ստորագրում եմ և կրում եմ պատասխանատվություն Բեգլարյան Կարեն /ստորագրություն/ 09.06.2008թ.>> /գ.թ. 7/:
Երևանի Աջափնյակ և Դավթաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 16.10.2009թ. թիվ ԵԱԴԴ 0231/02/09 գործով կայացված վճռի համաձայն, Կարեն Բեգլարյանից հօգուտ Միխաիլ Սարդարյանի որոշվել է բռնագանձել 44.214 ԱՄՆ դոլարին համարժեք 13.794.000 դրամ /գ.թ.17-19/:
11.06.2008թ Նատալյա Գրիգորյանի և Կարեն Բեգլարյանի միջև նոտարական վավերացմամբ կնքվել է փոխառության պայմանագիր, ըստ որի Կ.Բեգլարյանը Ն.Գրիգորյանից փոխառությամբ՝ մեկ ամիս ժամկետով վերցրել է 15.000.000 դրամ գումար /գ.թ.64/:
Նախաքննական մարմինը 25.02.2011թ. որոշմամբ /գ.թ.121/ որպես ապացույց է ճանաչել նաև քրեական գործի 73-ից 76-րդ էջերում առկա <<դիմում>> վերտառությամբ փաստաթուղթը՝ նշելով, որ այն Մաշտոցի քննչական բաժին է ուղարկել Միքայել Սարդարյանը ու պատճառաբանել, որ այդ դիմումով հաստատվում են քրեական գործի համար կարևոր նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ:
Առաջին ատյանի դատարանում ամբաստանյալի շահերի

պաշտպանը միջնորդություն է ներկայացրել ապացույց ճանաչված դիմումը անթույլատրելի ապացույց ճանաչելու վերաբերյալ՝ պատճառաբանելով, որ քննիչի կողմից որոշումը կայացնելիս խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 126 հոդվածը, չի ստուգվել այդ փաստաթղթի ծեռք բերման աղբյուրը, եթե նույնիսկ այդ փաստաթուղթը կեղծված չէ և գրված է Միքայել Սարդարյանի կողմից, ապա այն ապացուցողական նշանակություն չի կարող ունենալ, դրանով խախտվում են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6 հոդվածի 3-րդ մասի <<դ>> կետը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 216 հոդվածի 1-ին մասը, 65 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը և 126 հոդվածը, ուստի նույն օրենսգրքի 105 հոդվածի 1-ին մասի 2-րդ և 5-րդ կետերի ուժով այն պետք է հանել քրեական գործով ապացույցների շրջանակից:
Տուժող Մարինա Մխիթարյանը առաջին ատյանի դատարանում խնդրել է միջնորդությունը մերժել՝ նշելով, որ ապացույց ճանաչված դիմումը գրել է իր ամուսինը և ՌԴ-ից ուղարկել քննիչին ֆաքսի միջոցով, իր ամուսինը այն գրել է ռուսերեն լեզվով, այն թարգմանվել է հայերեն արտոնագիր ունեցող թարգմանչի կողմից, որից հետո իր ամուսինը ստորագրել է և ուղարկել:

Մեղադրողը միջնորդության դեմ առարկել է նշելով, որ պաշտպանական կողմը շփոթել է ապացույցների տեսակները՝ վկայի ցուցմունքը որպես ապացույցի տեսակ և այլ փաստաթուղթը որպես ապացույցի տեսակ: Պաշտպանի վկայակոչած դրույթները վերաբերում են վկայի ցուցմունքին որպես ապացույցի տեսակի և քանի որ Մ.Սարդարյանից ցուցմունք չի վերցվել հետևաբար նրա հետ առերես հարցաքննվելու կամ նրան հարցեր տալու իրավունք Կ.Բեգլարյանը ծեռք չի բերել, ուստի դրա խախտման մասին խոսք լինել չի կարող: Քննիչը որպես ապացույց է ճանաչել Մ.Սարդարյանի կողմից ուղարկված դիմումը, որպես այլ փաստաթուղթ և այն ինքնուրույն ապացույցի տեսակ է: Իսկ ծեռք բերման աղբյուրը հայտնի է տուժողը հայտնեց, որ այն ուղարկել է իր ամուսինը:
Խնդրեց միջնորդությունը մերժել:
Առաջին ատյանի դատարանը, քննության առնելով ներկայացված միջնորդությունը, իրավացիորեն գտել է, որ այն ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.
ՀՀ Սահմանադրության 19 հոդվածի համաձայն, <<Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք (…)>>:
ՀՀ Սահմանադրության 22 հոդվածի համաձայն <<(…) Արգելվում է օրենքի խախտմամբ ծեռք բերված ապացույցների օգտագործումը (…)>>:
<<Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին>> եվրոպական կոնվենցիայի 6 հոդվածի 1-ին կետի համաձայն, <<Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք (…) >>:
ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 104 հոդվածի 1-ին մասի համաձայն <<Քրեական գործով ապացույցներ են ցանկացած փաստական տվյալները, որոնց հիման վրա օրենքով որոշված կարգով հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը պարզում են քրեական օրենսգրքով նախատեսված արարքի առկայությունը կամ բացակայությունը, այդ արարքը կասկածյալի կամ մեղադրյալի կողմից կատարելը կամ չկատարելը և մեղադրյալի մեղավորությունը կամ անմեղությունը, ինչպես նաև

գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ>>:
ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105 հոդվածի 1-ին մասի 2-րդ և 5-րդ կետերի համաձայն <<1. Քրեական գործով վարույթում մեղադրանքի հիմքում չեն կարող դրվել և որպես ապացույց օգտագործվել այն նյութերը, որոնք ձեռք են բերվել՝ (…)
2) կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքի, դատավարության լեզվին չտիրապետող անձանց իրավունքների՝ սույն օրենսգրքով նախատեսված լրացուցիչ երաշխիքների էական խախտմամբ. (…)
5) քննչական կամ այլ դատավարական գործողության կատարման կարգի էական խախտմամբ. (…) »:
ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105 հոդվածի 2-րդ մասի համաձայն, <<Ապացույցներ ձեռք բերելիս էական են այն խախտումները, որոնք, դրսևորվելով մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների կամ սույն օրենսգրքի որևէ պահանջի խախտմամբ, դատավարության մասնակիցներին՝ օրենքով երաշխավորված իրավունքների զրկմամբ կամ սահմանափակմամբ կամ որևէ այլ կերպ ազդել են կամ կարող էին ազդել ստացված փաստական տվյալների հավաստիության վրա>>: Նշված իրավադրույթներից հետևում է, որ որպես քրեական օրենսգրքով նախատեսված արարքի առկայությունը կամ բացակայությունը, այդ արարքը կասկածյալի կամ մեղադրյալի կողմից կատարելը կամ չկատարելը և մեղադրյալի մեղավորությունը կամ անմեղությունը, ինչպես նաև գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքները պարզելու միջոց կարող են օգտագործվել միայն այնպիսի ապացույցներ, որոնք ձեռք են բերվել, ամրագրվել և գործին կցվել քրեադատավարական օրենքով սահմանված և թույլատրելի համարվող կարգով: Ապացույցների ձեռքբերման և ամրագրման թույլատրելիությունը կարգավորող նորմերից հետևում է, որ որպես ապացույց չեն կարող օգտագործվել քննչական կամ այլ դատավարական գործողության կատարման կարգի էական խախտմամբ ձեռք բերված փաստական տվյալները, հատկապես եթե դրանք իրենց հերթին հանգեցրել են դատավարության մասնակիցների իրավունքների էական խախտման, ազդել են կամ կարող էին ազդել ստացված փաստական տվյալների հավաստիության վրա:
Այսպիսով, ապացույցների հավաքմանը և ստուգմանն ուղղված դատավարական գործողությունների կատարման ընթացքում պետք է ապահովվի անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Հակառակ դեպքում, կատարված դատավարական գործողության արդյունքում ստացված փաստական տվյալը, անկախ գործի համար ունեցած նշանակությունից, կորցնում է իր իրավական ուժը, ապացուցողական նշանակությունը և չի կարող ընդգրկվել կոնկրետ քրեական գործով ապացույցների համակցության մեջ և դրվել մեղադրանքի հիմքում:
Կոնկրետ դեպքում առաջին ատյանի դատարանը իրավացիորեն գտել է, որ չի ստուգվել ապացույց ճանաչված փաստաթղթի ձեռք բերման աղբյուրը: Ինչպես ապացույց ճանաչելու որոշման մեջ, այնպես էլ ողջ քրեական գործի նյութերում չկա որևէ նշում թե երբ, ում կողմից, ինչ ճանապարհով է վարույթն իրականացնող մարմնին տրամադրվել Մ.Սարդարյանի դիմումը, որը ճանաչվել է որպես ապացույց, նույնիսկ հայտնի չէ այդ դիմումի հեղինակն իրոք Մ.Սարդարյանն է թե ոչ, ում վստահությունը չարաշահելու մեջ մեղադրվում է Կ.Բեգլարյանը: Այսինքն, նախաքննական մարմինը անհայտ ծագումով դիմումը ճանաչել է որպես ապացույց, ուստի այդ ապացույցը թույլատրելի չէ:
Ավելին՝ համաձայն <<Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին>> եվրոպական կոնվենցիայի 6 հոդվածի 3-րդ կետի, <<դ>> ենթակետի, քրեական

հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները (...) հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության,(…):
Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, կիրառելով և մեկնաբանելով կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի <<դ>> ենթակետը, եկել է այն ընդհանուր հետևության, որ եթե մեղադրյալին դատավարության որևէ փուլում հնարավորություն չի տրվել հարցեր ուղղելու իր դեմ ցուցմունք տված անձին, ապա նա զրկվում է արդար դատաքննության իրավունքից /Ռինտերպերտինգերն ընդդեմ Ավստրիայի, գանգատ թիվ 9120/80, 1986թ. նոյեմբերի 24-ի վճիռ, 31-33 կետեր/: Իսկ Սադակը և ուրիշներն ընդդեմ Թուրքիայի /թիվ 1/ գործով վճռում Եվրոպական դատարանը զարգացրել է Ռինտերպերտինգերի գործով ձևակերպված իրավական դիրքորոշումը և սահմանել, որ անձի դատապարտումը չի կարող ամբողջապես կամ վճռական չափով հիմնվել այնպիսի անձի հայտնած տվյալների վրա, որի հարցեր ուղղելու համարժեք հնարավորություն պաշտպանության կողմը չի ունեցել /գանգատներ թիվ 29900/96 և այլն, 17.07.2001թ. վճիռ, կետ 65/:
Ռինտերպերտինգերի և Սադակի գործերով Եվրոպական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները ոչ թե կոնկրետ գործի փաստերով պայմանավորված դատողություններն են, այլ Եվրոպական դատարանի կայուն նախադեպային պրակտիկայի արտահայտություն: Դրա մասին է վկայում այն, որ նշված իրավական դիրքորոշումները հետագայում բազմիցս վերահաստատվել ու կիրառվել են, մասնավորապես, հետևյալ գործերով. Հուլկի Գյունեշն ընդդեմ Թուրքիայի, գանգատ թիվ 28490/95, 19.06.2003թ. վճիռ, 53-54 կետեր, Գոսսան ընդդեմ Լեհաստանի, գանգատ թիվ 47986/99, 09.01.2007թ. վճիռ, 54-55 կետեր, Բալսիտե-Լիդեիկյենեն ընդդեմ Լիտվայի, գանգատ թիվ 72596/01, 04.11.2008թ. վճիռ, կետ 86, Չական ընդդեմ Ալբանիայի, գանգատ թիվ 44023/02, 08.12.2009թ. վճիռ, կետ 102, Խամեշինն ընդդեմ Ռուսաստանի, գանգատ թիվ 18487/03, 04.03.2010թ. վճիռ, կետ 32, Ա.Ս.-ն ընդդեմ Ֆինլանդիայի, գանգատ թիվ 40156/07, 28.09.2010թ. վճիռ, կետ 62, և այլն:
Ընդ որում, Եվրոպական դատարանի նշված վճիռներում խոսքը վերաբերում է ոչ թե ցուցմունքներին, այլ հայտնած տվյալներին: Այլ կերպ՝ էական չէ, թե ներպետական իրավունքում ինչպես կանվանվեն տվյալների ձևակերպման դատավարական միջոցները՝ ցուցմունք, այլ փաստաթուղթ, բացատրություն, թե այլ կերպ: Անհրաժեշտ է միայն, որ այդպիսի տվյալները ներկայացվեն դատարանին, իսկ դատարանը ձեռնամուխ լինի այդ փաստական տվյալները թույլատրելիության տեսանկյունից գնահատելուն, ուստի մեղադրողի այն պատճառաբանությունը, որ Կ.Բեգլարյանի որևէ իրավունք չի խախտվել և որպես այլ փաստաթուղթ ճանաչված դիմումը ունի ապացուցողական ուժ, անհիմն է:
Վերը նշված թույլատրելի ապացույցների հիման վրա դատարանը պետք է իրավական գնահատական տա այն հարցին, թե Կարեն Բեգլարյանի արարքն արդյոք համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներին, թե ոչ:
ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդվածի համաձայն՝ խարդախությունը՝ խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով ուրիշի գույքի զգալի չափերով հափշտակությունն է կամ ուրիշի գույքի նկատմամբ իրավունք ձեռք բերելն է:
ՀՀ վճռաբեկ դատարանը Լիա Ավետիսյանի վերաբերյալ թիվ ԵԿԴ/0176/01/09 քրեական գործով 24.02.2011թ. որոշմամբ արտահայտել է իրավական դիրքորոշում, համաձայն որի խարդախությունը կատարվում է միայն ուղղակի դիտավորության մեղքի ձևով, հանցավորը պետք է գիտակցի, որ խաբեության կամ վստահությունը չարաշահելու միջոցով հափշտակում է ուրիշի գույքը, ինչպես նաև պետք է նախատեսի և ցանկանա դա:

Խարդախության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է նաև շահադիտական նպատակի առկայությամբ, այսինքն՝ մինչև գույքը վերցնելը կամ գույքին տիրանալը հանցավորն ի սկզբանե նպատակ է ունենում հափշտակելու այն, չվերադարձնելու գույքը, չկատարելու խոստումը կամ պայմանագրային պարտավորությունները: Հակառակ դեպքում, երբ գույքը չվերադարձնելու, խոստումը կամ պարտավորությունները չկատարելու դիտավորությունն առաջանում է գույքը վերցնելուց հետո անկախ շարժառիթից, խարդախության հանցակազմը բացակայում է: Խարդախության միջոցով ուրիշի գույքը հափշտակելու ուղղակի դիտավորության և գույքը հափշտակելու շահադիտական նպատակի առկայության կամ բացակայության մասին դատարանի հետևությունները պետք է հիմնված լինեն գործով ձեռք բերված ապացույցների համակցության վրա: Նշված ապացույցների գնահատման արդյունքում դատարանը յուրաքանչյուր դեպքում պետք է հաստատված համարի, որ անձն ի սկզբանե նպատակ է ունեցել խարդախության միջոցով հափշտակել ուրիշի գույքը, և եթե ապացուցվի, որ ունեցել է, ապա խարդախության հանցակազմն առկա է: Ընդ որում, եթե ապացույցների բավարար համակցությամբ և հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշով չի հիմնավորվում, որ շահադիտական նպատակը ծագել է համապատասխան գործարքի կնքումից առաջ, ապա նման դեպքերում խարդախության հանցակազմ առկա չէ:
Ներքին համոզմունք ձևավորելու համար դատարանը պատճառաբանված կերպով հատկանշական է համարել նաև այն, որ կողմերի միջև խանութի վաճառքի վերաբերյալ գործարք կնքելու համաձայնությունը կայացվել է 2008թ. ապրիլ ամսին, իսկ ամբաստանյալին գումարի տրամադրումը տեղի է ունեցել նույն թվականի ապրիլ-հունիս ամիսներին, սակայն հանցագործության մասին հաղորդում է ներկայացվել միայն 2010թ. նոյեմբերին: Դատարանը իրավացիորեն արձանագրել նաև, որ մինչև Մարինա Մխիթարյանի կողմից հաղորդում ներկայացնելը, նրա ամուսինը քաղաքացիական հայց է ներկայացրել Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան ընդդեմ Կարեն Բեգլարյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին: Դատարանը բավարարել է քաղաքացիական հայցը և հօգուտ Միխաիլ Սարդարյանի Կարեն Բեգլարյանից բռնագանձել է 13.794.800 դրամ՝ այնքան գումար ինչքան սույն քրեական գործի մեղադրանքի ծավալն է, այսինքն՝ հանցագործության օբյեկտիվ կողմը նույնական է նույն անձանց միջև հարուցված քաղաքացիական հայցի առարկայի հետ:
Վստահությունը չարաշահելու առումով հատկանշական է ՀՀ վճռաբեկ դատարանի վերը նշված որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումը նաև այն մասին, որ թեև խարդախության պարագայում առկա է գույքի սեփականատիրոջ կողմից հանցագործին գույքը կամ դրա նկատմամբ իրավունքները փոխանցելու կամային ակտ, սակայն գույքը կամ դրա նկատմամբ իրավունքները փոխանցելու ակտի կամային բնույթը սեփականատիրոջ գիտակցության և կամքի վրա հանցագործի ունեցած ներգործության հետևանք է: Այս կապակցությամբ էական նշանակություն կարող է ունենալ, թե գույքն ուրիշին հանձնելու գործում ով է նախաձեռնություն դրսևորել: Արդյոք գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքները հանձնելու տուժողի մտադրությունն առաջացել է հանցավորի կողմից նրան համոզելու և հորդորելու արդյունքում: Վստահությունը չարաշահելն ուրիշի գույքին տիրանալու կամ դրա նկատմամբ իրավունք ձեռք բերելու նպատակով հանցավորի կողմից, նրա և գույքի սեփականատիրոջ կամ գույքը տիրապետողի միջև ձևավորված վստահության հարաբերությունների օգտագործումն է: Արարքը խարդախություն որակելու համար բավարար չէ, որ անձն իր արարքներով կամ որոշակի հանգամանքների բերումով տուժողի մոտ վստահություն վայելի, այլ անհրաժեշտ է, որպեսզի վերջինս համոզի տուժողին

իրեն փոխանցել գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքները: Կոնկրետ քրեական գործով հիմնավորվել և հաստատվել է, որ ամբաստանյալը Մ.Սարդարյանի հետ ծանոթացել է վերջինիս նախաձեռնությամբ՝ Երևանի Շիրազի փողոցի 52/6 հասցեում գտնվող խանութը վաճառելու կապակցությամբ, ընդ որում Մ.Սարդարյանն է Կ.Բեգլարյանին առաջարկել և սակարկելով գինը՝ պայմանավորվածություն ձեռք բերել, որ խանութի համար պատրաստ է վճարել 48.000 ԱՄՆ դոլար գումար՝ երկու ամսվա ընթացքում և հակառակը՝ ձեռք չի բերվել որևէ ապացույց, որ խանութը Մ.Սարդարյանին վաճառելու նախաձեռնությունը եղել է Կ.Բեգլարյանինը, ու վերջինս մինչև Մ.Սարդարյանից գումարները վերցնելն ի սկզբանե նպատակ է ունենցել հափշտակել դրանք և չկատարել խոստումը կամ ստանձնած պարտավորությունը:
Ավելին, գործի քննությամբ հիմնավորվել է, որ Կ.Բեգլարյանը խանութը վաճառելու բանակցությունները վարել է հենց Մ.Սարդարյանի հետ, այլ ոչ թե նրա կնոջ, ի դեպ նախաքննական մարմինը նույնպես հաստատված է համարել այդ փաստը, քանի որ մեղադրանքի որոշման մեջ ուղղակի արձանագրել է, որ Կ.Բեգլարյանը չարաշահել է Մ.Սարդարյանի վստահությունը:
Հատկանշական է նաև, որ գործի քննությամբ հիմնավորվել է, որ Կ.Բեգլարյանը տուժող ճանաչված Մ.Մխիթարյանին հանդիպել է միայն վարկը տրամադրելու օրը՝ 09.06.2008թ., երբ արդեն Մ.Սարդարյանը նրան հանձնած է եղել ընդհանուր առմամբ 18.000 ԱՄՆ դոլար գումար և պայմանավորվածություն է ձեռք բերվել ստացած վարկը Կ.Բեգլարյանին հանձնելու հարցում: Փաստորեն, նախաքննական մարմնի կողմից վերջինիս առաջադրված մեղադրանքի հիմքում դրված ապացույցները եթե ոչ բացառապես, ապա մեծամասամբ կառուցված են մի անձի ցուցմունքի վրա, ով ներկա չի գտնվել ամբաստանյալի և Մ.Սարդարյանի միջև տեղի ունեցող պայմանավորվածությունների ձեռք բերման գործընթացին:
Այդուհանդերձ, վերլուծելով Մ.Մխիթարյանի կողմից գործի նախաքննության և առաջին ատյանի դատարանում տրված ցուցմունքներն, Դատարանն իրավացիորեն ակնհայտ է համարել, որ վերջինս կամ տեղյակ չի եղել իր ամուսնու և Կ.Բեգլարյանի ձեռք բերված պայմանավորվածությունների մասին և փորձում է հիմնավորել հակառակը, կամ էլ տեղյակ է եղել, սակայն ներկայումս փորձում է խեղաթյուրել դրանք:
Այսպես՝ քրեական գործի քննության ընթացքում տուժողը մշտապես պնդել է, որ իր ամուսինն իրեն տեղեկացրել է Կ.Բեգլարյանի հետ ձեռք բերված պայմանավորվածությունների մասին, սակայն գործի քննության տարբեր ժամանակաշրջանում տվել է միմյանց հակասող և իրարամերժ ցուցմունքներ:
Գործի նախաքննության ընթացքում տուժողը ցուցմունք է տվել, որ Կ.Բեգլարյանը խանութի ձևակերպումը չկատարելուց հետո իր ամուսնուն է տվել երկու անգամ 600.000-ական դրամ: Առաջին ատյանի դատարանում չժխտելով նույն հանգամանքը՝ տուժողը հայտնել է, որ Կ.Բեգլարյանը այդ կերպ փորձել է պատրանք ստեղծել, որ հափշտակություն չի կատարել և իր ամուսնուն առաջարկել է անձամբ մարել վարկի բանկային տոկոսները:
Տուժողի այս ցուցմունքը հակասում է իր իսկ տրված այլ ցուցմունքներին, քանի որ ըստ նրա բանկին վճարվելիք գումարները յուրաքանչյուր ամիս կազմել են մոտ 300.000 դրամ, այդ թվում մայր գումարի ու տոկոսի մարումը և եթե ամբաստանյալը խոստում է տվել մարել վարկի տոկոսները, ապա նա պետք է վճարեր միայն տոկոսները, այլ ոչ թե ամսական 600.000 դրամ, ինչը անհամեմատ մեծ է յուրաքանչյուր ամիս բանկին վճարվող վարկի մայր գումարի և տոկոսների հանրագումարից, բացի այդ, տուժողը նշել է, որ իրենք մարել են վարկը ժամանակացույցին համապատասխան և ամբաստանյալի տված գումարներն ամբողջությամբ չեն ուղղել վարկի մարմանը: Ամբաստանյալի ցուցմունքը, որ Մ.Սարդարյանն է հրաժարվել խանութը ձեռք բերելուց և իրեն առաջարկել է յուրաքանչյուր ամիս վճարել 2.000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ՝

մինչև տրված ամբողջ գումարի վերադարձը և այն փաստը, որ նա վճարել է երկու ամիս 600.000-ական դրամ ոչ միայն հերքում է տուժողի պատճառաբանությունը, որ նա խոստացել է մարել վարկի տոկոսները, այլ նաև հաստատում, որ եղել է պայմանավորվածություն ամսական 600.000 դրամ վճարելու: Առաջին ատյանի դատարանում տուժողն ընդունել է, որ Կ.Բեգլարյանն իր ամուսնուն է տրամադրել նաև ինքնաթիռի տոմս, որի արժեքը, ըստ իրեն, կարող էր կազմել 400-ից 500 ԱՄՆ դոլար, նշել է, որ տեղյակ չէ հետադարձ տոմսը Կ.Բեգլարյանը նույնպես տրամադրել է թե ոչ, նշել է նաև, որ տեղեկություն չունի՝ Կ.Բեգլարյանը ճանապարհածախսի գումար տվել է իր ամուսնուն, թե ոչ: Այսինքն ամբաստանյալի պատճառաբանությունը, որ հինգ ամիսների ընթացքում ինքը Մ.Սարդարյանին է տվել ընդհանուր առմամբ 2.850.000 դրամ գումար, որի մեջ ներառված է նաև ինքնաթիռի տոմսերի արժեքը չի հերքվել, սակայն Դատարանը չի էլ կարող հաստատված համարել, որ ամբաստանյալը այդ չափով գումար է վերադարձրել: Հատկանշական է, որ 26.04.2008թ. դրությամբ խանութի դիմաց չվճարված գումարը կազմել է 30.000 ԱՄՆ դոլար ինչը հենց համարժեք էր 10.000.000 դրամին, որի չափով էլ վարկ է ձևակերպվել, հետևաբար տուժողի այն պնդումը, որ մինչ ամբաստանյալին իր ամուսնու կողմից կանխավճար տրամադրելը, Կ.Բեգլարյանն է համոզել, որ իրենք վարկ վերցնեն որևէ հիմնավորում ունենալ չի կարող, առավել ևս այն դեպքում, երբ տուժողը հայտնեց, որ իրենք ՌԴ-ում ունեին բնակարան, որը պետք է վաճառեին և այդ գումարով էին պատրաստվում խանութ գնել և գումարը երկու ամսում վճարելու պայմանավորվածությունը ձեռք է բերվել բնակարանը այդ ընթացքում վաճառելու ակնկալիքով: Մ.Մխիթարյանը նշել է, որ իրենք ի սկզբանե չեն իմացել, որ 1.600.000 դրամ պետք է որպես միջնորդավճար տրամադրեն Գ.Փաշոյանին և այդ մասին տեղեկացել են միայն այն ժամանակ, երբ բանկի աշխատակիցը բանկից դուրս է բերել ընդամենը 8.400.000 դրամ, ինչի կապակցությամբ իր ամուսինը զարմանք է արտահայտել: Մինչդեռ նախաքննության ընթացքում հայտնել է հակառակը՝ <<Կ.Բեգլարյանը ամուսնուս ասել էր, որ 10.000.000 դրամ վարկից 1.600.000 դրամ պետք է տրվի կամ Գևորգին կամ բանկի աշխատողին, ես կոնկրետ չեմ հիշում, որպես միջնորդավճար: 09.06.2008թ. մենք <<ՎՏԲ>> բանկից Ավանի ստացանք 10.000.000 դրամ վարկը, որից հետո մեքենայի մեջ իմ և ամուսնուս ներկայությամբ Կ.Բեգլարյանը մեքենայի մեջ 1.600.000 դրամ հաշվեց և տվեց ինչքան հիշում եմ Գևորգին>>: Մ.Մխիթարյանն իր ցուցմունքների այս էական հակասությունը որևէ կերպ չի կարողացել բացատրել՝ մի դեպքում նշել է, որ գումարը հաշվել են ավտոմեքենայի մեջ, ինքն այնտեղ չի գտնվել և չէր կարող տեսնել, թե ինչքան են գումար բերել և ով ում որքան գումար է տվել, հետո նշել է, որ քննիչն է սխալ արձանագրել, ինքը նման բան չի նշել, մյուս դեպքում հայտնել է, որ հայերեն լեզվին լավ չի տիրապետում, ինչի արդյունքում այդպես է արձանագրվել: Ուշագրավ է նաև, որ նախաքննության ժամանակ ցուցմունք տալիս /գ.թ. 47-50/ տուժողն իր ձեռքով գրել է <<Ես տիրապետում եմ հայերեն և ռուսերեն գրավոր լեզուներին, ավելի վարժ գրում եմ ռուսերեն, սակայն հայերեն կարդում և գրում եմ և թարգմանչի կարիք չունեմ: Խնդրում եմ ցուցմունքս արձանագրի քննիչը>>, ցուցմունքի վերջում ավելացրել <<ցուցմունքս կարդացի, գրված է իմ պատմածից, ճիշտ է որի համար ստորագրում եմ>>: Նշվածը հրապարակելուց հետո տուժողը հայտնել է <<թող լինի այդպես, որ ի սկզբանե իմացել ենք, որ պետք է 1.600.000 տրվի որպես միջնորդավճար, ինձ դա չի հետաքրքրում իմացել ենք թե ոչ, իմ ցանկությունն է որպեսզի մեր գումարը վերադարձվի>>: Նույն ցուցմունքով տուժողը նշել է, որ բանկից գումարը ստանալուց և Կ.Բեգլարյանին այն տրամադրելուց հետո, պետք է նրան պարտք մնայն 4.000 ԱՄՆ դոլար, ինչը նույնպես հաստատում է, որ Մ.Մխիթարյանը մինչև գումարը ստանալը տեղյակ է եղել, որ

ստացվող գումարի 16% պետք է տրամադրեին միջնորդին: Իսկ առաջին ատյանի դատարանում նա հետևողականորեն պնդել է, որ ոչ միայն չեն իմացել միջնորդավճարի մասին, այլև բանկից գումարը դուրս բերելուց այն արդեն իսկ եղել է 8.400.000 դրամ:
Մ.Մխիթարյանը նախաքննության ընթացքում հայտնել է՝ <<Նշեմ նաև, որ 1.600.000 դրամը ամուսինս Կ.Բեգլարյանի հետ պայմանավորվել էր, որ եթե խանութը անվանափոխվի, ապա այդ գումարը կմարենք մենք, իսկ եթե գործարքը չստացվի, ապա այդ գումարը պետք է տար Կ.Բեգլարյանը>>: Այս արտահայտությամբ Մ.Մխիթարյանն ուղղակի ընդունել է, որ իր ամուսնու և Կ.Բեգլարյանի միջև բանակցություններ են ընթացել գործարքի հնարավոր ձախողման մասին, ինչը նա մշտապես հերքել է ասելով, որ գարծարքի կնքումից միակողմանի հրաժարվել է Կ.Բեգլարյանը:
Մ.Մխիթարյանն ընունել է նաև, որ վարկը ստանալու օրը, երբ վերջինս եկել է իրենց տուն գումարը վերցնելու, իրենք նրան պարտք են մնացած եղել 4.000 ԱՄՆ դոլար և պարտավորվել են այն վճարել մինչև աշուն, բայց նա ստացականում այդ մասին առանց նշելու, պարտավորվել է խանութը հինգ օր անց ձևակերպել իրենց անվամբ, դրանից հետո իր ամուսինը հանդիպել է Կ.Բեգլարյանին և պահանջել է անվանափոխել խանութը, սակայն վերջինս ասել է, որ խանութն իր անունով չէ, այն 20.000 ԱՄՆ դոլար պարտքի դիմաց անվանափոխել է ոմն Սերգեյի անունով, ով բնակվում է Կրասնոսելսկում:
Ի հակառակ իր կողմից նախաքննության ընթացքում տրված ցուցմունքի, առաջին ատյանի դատարանում Մ.Մխիթարյանը սկզբում հայտնել է, որ Ս.Դալլաքյանին խանութը պատկանելու վերաբերյալ տեղեկացել են քաղաքացիական հայցով դատարան դիմելուց հետո՝ հարկադիր կատարողներից, հետո նշել է, որ այդ մասին իր ամուսնուն ասել է Կ.Բեգլարյանը երկու ամիս 600.000-ական դրամ վճարելուց հետո:
Իր ցուցմունքների հակասության վերաբերյալ Մ.Մխիթարյանը մի դեպքում հայտնել է, որ քննիչն է սխալ արձանագրել, մյուս դեպքում, որ նախկինում դատարանների հետ չի առնչվել, ուստի նախաքննության ընթացքում իր տված ցուցմունքներում մանրամասը չի նշել իրադարձությունների ժամանակագրությունը:
Տուժողը հայտնել է նաև, որ Կ.Բեգլարյանը մինչև կանխավճարը տրամադրելու օրը, իր ամուսնուն համոզել է խանութը գնելու նպատակով վարկ ձևակերպել: Ուստի առաջին ատյանի դատարանը իրավացիորեն գտել է, որ Մ.Մխիթարյանը այդ կերպ փորձում է արհեստական հիմքեր ստեղծել Կ.Բեգլարյանի գործողություններում խարդախության հանցակազմը հիմնավորելու համար, իսկ պայմանավորվող կողմերի միջև վարկի ձևակերպման միջոցով խանութը ձեռք բերելու մասին խոսակցություն տեղի ունեցած չլինելու վերաբերյալ հայտնել է նաև Սերգեյ Ղազարյանը, ով ներկա է գտնվել ամբաստանյալի և Մ.Սարդարյանի հանդիպմանը՝ թե կանխավճարը տալու օրը և թե դրանից առաջ:
Որևէ հիմնավորում չունի նաև Մ.Սարդարյանի ընտանիքի անդամների այն պնդումը, որ վարկը ստանալուց հետո, նույն օրը Կ.Բեգլարյանը եկել է իրենց տուն և խնդրել իրեն տրամադրել ևս 4.000.000 դրամ, քանզի թե գործի նյութերի և թե Մ.Սարդարյանի կնոջ ու դստեր ցուցմունքների համաձայն, իրենք վարկը ձևակերպել են հենց այդ գումարը Կ.Բեգլարյանին տրամադրելու նպատակով, ուստի ինչու նա պետք է խնդրեր, որ իրեն տրամադրեին գումարը:
Առաջին ատյանի դատարանն անդրադառնալով, վկա Գ.Փաշոյանի ցուցմունքներում տեղ գտած հակասություններին, իրավացիորեն արձանագրել է, որ վերջինիս այն պնդումը, որ նոտարական գրասենյակում Մ.Սարդարյանը վիճել է Կ.Բեգլարյանի հետ, չի համապատասխանում իրականությանը հետևյալ պատճառաբանությամբ.
Կ.Բեգլարյանը ցուցմունք է տվել, որ պայմանագիրը կնքելիս ներկա չի գտնվել նոտակարական գրասենյակում և ինչպես Գ.Փաշոյանը, այնպես էլ Մ.Սարդարյանն իր հետ այնտեղից խոսել են հեռախոսով

ու վերջինիս անհագստության պատճառը եղել է ոչ թե նրա բնակարանի դիմաց տրամադրվող գումարի չափը, այլ վարկը այլ անձի անվամբ ձևակերպելու հանգամանքը: Տուժողը և նրա դուստրը թեև հայտնել են, որ նոտարական գրասենյակում են տեղեկացել, որ վարկը այլ անձի անվամբ է ձևակրպվում և որ այն պետք է հատկացվի 10.000.000 դրամի չափով, այնուամենայնիվ Կ.Բեգլարյանի ներկայությունը նոտարի մոտ չնշեցին:
Առաջին ատյանի դատարանը պատճառաբանված կերպով գտել է, որ Գ.Փաշոյանը փորձելով ընդգծել Կ.Բեգլարյանի և Մ.Սարդարյանի միջև առկա տարաձայնությունները, միտումնավոր նշել է, որ ամբաստանյալը ներկա է գտնվել նոտարական գրասենյակում՝ ցանկանալով հնարավորինս զերծ մնալ վարկը ձևակերպելու հարցում ունեցած իր դերակատարությունից: Միևնույն ժամանակ, Գ.Փաշոյանը հետևողականորեն պնդել է, որ Մ.Սարդարյանը մինչ պայմանագիրը կնքելը տեղյակ է եղել, որ ստացված վարկի գումարի մի մասը որպես միջնորդվճար պետք է տրամադրի իրեն սկզբում 10%-ի, հետագայում 16%-ի չափով, ինչը հիմնավորում է, որ Մ.Սարդարյանը տեղյակ է եղել թե ստացվող վարկի չափի և թե դրա դիմաց գրավադրվող գույքի վերաբերյալ, հետևաբար Կ.Բեգլարյանի և Մ.Սարդարյանի միջև խոսկցությունը կարող էր լինել միայն վարկն այլ անձի անվամբ ձևակերվելու կապացությամբ: Գ.Փաշոյանի նման ցուցմունքն ի նպաստ է Կ.Բեգլարյանին, քանի որ այս մասով նրանց երկուսի շահերն էլ համընկնում են, ու եթե Գ.Փաշոյանն այդ մասով չհայտներ իրականությունը, ապա կասկածի տակ կդներ նաև իր իսկ առնչությունը հնարավոր խարդախությանը: Գ.Փաշոյանի կողմից մասնակի ճիշտ ցուցմունքներ տալը պայմանավորված է այն հանգամանքով, որ վերջինս լինելով հինգ անգամ դատապարտված՝ ամեն կերպ փորձել է խուսափել կրկին քրեական պատասխանատվության ենթարկվելուց, ուստի և իր ցուցմունքներում Կ.Բեգլարյանին ձեռնտու հանգամանները հայտնելով չի վկայել նաև իր դեմ, ինչ վերաբերում է Կ.Բեգլարյանի դեմ տրված ցուցմունքի, ապա դրանք նույնպես միտված են հեռացնելու հնարավոր առնչությունն իր կատարված ենթադրյալ անօրինական գործողություններին:
Վկա Սերյոժա Դալլաքյանը ինչպես նախաքննական, այնպես էլ առաջին ատյանի դատարանում տրված ցուցմունքներում նշել է, որ ճիշտ է խանութը գրանցված է իր անունով, բայց իրականում խանութը պատկանում է Կարեն Բեգլարյանին, վերջինս պարտքի դիմաց այն ձևակերպել է իր անվամբ, սակայն իրենց մեջ պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ պարտքը վերադարձնելուց հետո խանութը կանվանափոխվի վերջինիս կամ այն գնող անձի անվամբ: Ավելին՝ Ս.Դալլաքյանի ցուցմունքով հիմնավորվում է նաև, որ ամբաստանյալն իրեն տեղյակ է պահել Մ.Սարդարյանի կոմից խանութի համար կանխավճար տալու մասին, նույնիսկ խնդրել է ԱԳԿ-ից տեղեկանք վերցնել այն վաճառելու համար:
Քրեական գործով հետազոտված ապացույցներով չեն հերքվել ամբաստանյալ Կ.Բեգլարյանի պատճառաբանություններն առ այն, որ Մ.Սարդարյանն է հրաժարվել գործարքը կնքելուց և որ խարդախության եղանակով հափշտակություն կատարելու նպատակ չի ունեցել, հափշտակություն չի կատարել, հակառակը, գործով ձեռք բերված ապացույցների ու փաստական տվյալների համադրումը հիմնավորում է ամբաստանյալի հայտնած տեղեկությունը:
Գործի ողջ տվյալներով առաջին ատյանի դատարանը հաստատված է համարել, որ ամբաստանյալ Կ.Բեգլարյանը Մ.Սարդարյանի հետ սկզբում պայամանվորվածություն է ձեռք բերել նրան վաճառելու Երևանի Շիրազի 52/6 հասցեում գտնվող խանութը 48.000 ԱՄՆ դոլար գումարով, որը վերջինս պետք է վճարեր երկու ամսվա ընթացքում մաս-մաս: Մ.Սարդարյանը Կ.Բեգլարյանին է տվել՝
1. 16.04.2008թ. 5.000 Եվրո գումար 2. 18.04.2008թ.՝ 500 Եվրո գումար 3. 24.04.2008թ. 1.000 ԱՄՆ դոլար 4. 26.04.2008թ. 8.800 ԱՄՆ

դոլար 5. 09.06.2008թ. 8.000.000 դրամ, վերցրած գումարները համարժեք են 44.214 ԱՄՆ դոլարին կամ 13.794.800 դրամին: Այսինքն Մ.Սարդարյանը չի կատարել 16.04.2008թ. ստանձնած իր պարտավորությունը 3.786 ԱՄՆ դոլարի չափով: Ամբաստանյալի այն պատճառաբանությունը, որ 10.06.2008թ. իր և Մ.Սարդարյանի միջև նոր պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ գործարքը չի կնքվում և իրեն տրված մոտ 44.000 ԱՄՆ դոլարի դիմաց ինքը պետք է յուրաքանչյուր ամիս 620.000 դրամ տոկոսներ վճարի, առաջին ատյանի դատարանում որևէ կերպ չի հերքվել: Բացի այդ, ամբաստանյալի այն պատճառաբանությունը, որ նա Մ.Սարդարյանին որպես տոկոսներ ընդհանուր առմամբ վճարել է 2.850.000 դրամ, թեև չի հաստատվել, սակայն նույնպես չի հերքվել, ավելին՝ տուժողը ընդունել է, որ ամբաստանյալն իր ամուսնուն բացի երկու ամիս անընդմեջ 600.000-ական դրամ տալուց, տվել է նաև այլ գումարներ /ճանապարհածախս և ինքնաթիռի տոմս/ որի չափը իրեն հայտնի չէ: Հատկանշական է, որ ժամանակագրական առումով հենց ամբաստանյալի կողմից նշված գումարները տալուց հետո, երբ չի կարողացել այլևս գումար տրամադրել ու ապարդյուն են անցել նաև իր երիկամը վաճառելու փորձերը, Մ.Սարդարյանը դիմել է դատարան գումարի բռնագանձման պահանջով:
Կ.Բեգլարյանի մոտ <<Հեպոտիտ-Շ>> հիվանդությունը ախտորոշվել է՝ 16.01.2009թ., որից հետո էլ Մ.Սարդարյանը դիմել է Դատարան:
Նման պայմաններում առաջին ատյանի դատարանը իրավացիորեն գտել է, որ Կ.Բեգլարյանի և Մ.Սարդարյանի միջև ծավալվել են քաղաքացիաիրավական հարաբերություններ՝ դրանից բխող բոլոր հետևանքներով:
ՀՀ Սահմանադրության 21 հոդվածի 2-րդ մասի համաձայն, մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը: Չփարատված կասկածները մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի: Նմանատիպ նորմեր նախատեսված են նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում: Նշված օրենսգրքի 18 հոդվածի 3-րդ մասի համաձայն, հանցանք գործելու մեջ անձի մեղավորության մասին հետևությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա, այն պետք է հաստատվի գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ: Իսկ նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ մեղադրանքն ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարատվել սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում, մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի կամ կասկածյալի:
Այսպիսով, առաջին ատյանի դատարանը, հետազոտելով դատաքննության ընթացքում ձեռք բերված ապացույցները, դրանցից յուրաքանչյուրը գնահատելով վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, իրավացիորեն հանգել է այն հետևության, որ ամբաստանյալ Կ.Բեգլարյանին առաջադրված մեղադրանքը հիմնավորված և հաստատված չէ գործին վերաբերող փոխկապակցված, հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ:
Նման պայմաններում Դատարանը եկել է այն հիմնավոր հետևության, որ չի ապացուցվել այն հանգամանքը, որ Կարեն Բեգլարյանը, տուժող Միքայել Սարդարյանի վստահությունը չարաշահելու եղանակով, խարդախությամբ, հափշտակել է գումար և իրավացիորեն գտել, որ Կարեն Բեգլարյանի արարքներում ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշները բացակայում են, ինչը ՀՀ քրեական դատավության օրենսգրքի 366 հոդվածի 2-րդ մասի և 35 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի ուժով հիմք է հանցակազմի բացակայությամբ արդարացման դատավճիռ կայացնելու համար: Հակառակ մոտեցումը խիստ կասկածելի է և նման հետևությունը հիմնված կլինի բացառապես ենթադրության վրա:

ՀՀ Վճռաբեկ դատարանը Լիա Ավետիսյանի վերաբերյալ գործով իր որոշման 28-31-րդ կետերում անդրադառնալով խարդախության հանցակազմը քաղաքացիաիրավական պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքերից սահմանազատելու հատկանիշներին՝ արձանագրել է հետևյալը՝
<<Տարբեր տեսակի գործարքների /առուվաճառք, գրավ, փոխառություն, այդ թվում վարկային պայմանագիր և այլն/ կատարման ժամանակ ծագող քաղաքացիական իրավահարաբերություններից խարդախության հանցակազմի սահմանազատման հիմնախնդրին Վճռաբեկ դատարանն անդրադառնում է ելնելով այն հանգամանքից, որ անձի կողմից իր գույքային պարտավորությունների չկատարումը դեռևս չի վկայում անձի մոտ հանցանքի կատարման դիտավորության առկայության մասին: Այլ կերպ՝ անձի կողմից քաղաքացիաիրավական պարտավորության չկատարումը դեռևս չի վկայում վերջինիս արարքում խարդախության հանցակազմի սուբյեկտիվ կողմի և հետևաբար, խարդախության հանցակազմի առկայության մասին տե՛ս սույն որոշման 26-րդ կետը:
Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ խարդախությունը քաղաքացիաիրավական պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքերից տարանջատելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ հանգամանքները. ա) խարդախության դեպքում տուժողին խաբելու կամ նրա վստահությունը չարաշահելու մտադրությունն անձի մոտ ծագում է նախքան գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքներ ձեռք բերելը. բ) խարդախության դեպքում անձի մոտ քաղաքացիաիրավական պայմանագրով ստանձնած պարտավորությունները (գույքը փոխանցել, կատարել վարկային պարտավորությունը, պարտքը վերադարձնել և այլն) չկատարելու դիտավորությունը ծագում է նախքան գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքներ ձեռք բերելը:
Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ եթե քաղաքացիաիրավական հարաբերության հենքը վերաբերում է կարգավորիչ գործառույթ իրականացնող իրավունքի ճյուղին, ապա քրեական իրավունքը և դատավարությունը, մարմնավորելով իրավունքի պահպանիչ գործառույթը, իրենց բնույթով ածանցյալ են իրավունքի տվյալ ճյուղերից, մասնավորապես քաղաքացիական իրավունքից և դատավարությունից: Այլ կերպ՝ ներգործության քրեաիրավական և քրեադատավարական միջոցները չպետք է այնպիսին լինեն, որ խաթարեն քաղաքացիաիրավական ու քաղաքացիադատավարական հարաբերությունների ներքին տրամաբանությունը, անորոշություն ու անկանխատեսելիություն ստեղծեն քաղաքացիաիրավական շրջանառության մեջ: Այս առումով անթույլատրելի է գործող քաղաքացիական օրենսդրության պահանջների անտեսմամբ բնականոն գույքային շրջանառությունը խաթարող գործարքներ կնքելու պրակտիկան: Այդ փաստերը կարող են խեղաթյուրել քաղաքացիաիրավական հարաբերությունները, սպառնալ իրավական անվտանգությանը, պայմաններ ստեղծել, որ անձինք խուսափեն հարկային պարտավորությունների կատարումից, ինչպես նաև այլ եղանակներով վնասել իրավաչափ հանրային շահերը:
Նման դեպքերում պետությունը պարտավոր չէ գործող քաղաքացիական օրենսդրության պահանջների անտեսմամբ գործարքներ կնքած քաղաքացիների գույքային և այլ իրավունքների վերականգնումը դիտել հանրային շահի տիրույթում և հանրային միջոցներ ծախսելով իրականացնել նշված մասնավոր շահերի քրեաիրավական պաշտպանություն: Այդ մասնավոր շահերի պաշտպանությունը, որպես ընդհանուր կանոն, պետք է կատարվի մասնավոր իրավունքի տիրույթում՝ քաղաքացիաիրավական և քաղաքացիադատավարական միջոցներով»:
<<Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին>> Եվրոպական կոնվենցիայի թիվ 4 արձանագրության 1-ին հոդվածի համաձայն, ոչ ոքի չի կարելի

ազատությունից զրկել միայն այն պատճառով, որ ի վիճակի չէ կատարելու պայմանագրային որևէ պարտավորություն:
<<Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին>> միջազգային դաշնագրի 11 հոդվածի համաձայն՝ ոչ ոք չի կարող ազատազրկվել միայն այն հիմքով, որ ի վիճակի չէ կատարելու պայմանագրային պարտավորությունը:
ՀՀ Սահմանադրության 16 հոդվածի համաձայն մարդուն չի կարելի ազատությունից զրկել միայն այն պատճառով, որ ի վիճակի չէ կատարելու քաղաքացիաիրավական պարտավորությունները:
ՀՀ քրեական օրենսգիրքը քրեական պատասխանատվություն չի նախատեսում քաղաքացիաիրավական, ինչպես նաև պայմանագրային պարտավորությունների կամ պարտականությունները չկատարելու համար: Հետևաբար վերոհիշյալ հիմնարար դրույթների ուժով անձը ոչ միայն ազատությունից զրկվել չի կարող, այլև նրա նկատմամբ քրեական հետապնդում չի կարող իրականացվել:
ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35 հոդվածի առաջին մասի 2-րդ կետի համաձայն՝ քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե՝ արարքի մեջ հանցակազմ չկա: Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ դատարանը հայտնաբերելով քրեական հետապնդումը բացառող հանգամանքներ, լուծում է ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու հարցը:
Նման պայմաններում Դատարանը իրավացիորեն հանգել է հետևության, որ Կարեն Բեգլարյանին մեղսագրվող արարքն ընդհանրապես տեղի չի ունեցել, չի եղել դեպքը, որը կարող էր դիտվել, որպես հանցագործություն, այսինքն՝ հանցավոր արարքի փաստ չի հայտնաբերվել, ուստի Դատարանը գտել է, որ Կարեն Բեգլարյանի գործողություններում ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված արարքը բացակայում է, այն է՝ արարքում հանցակազմ չկա:
Վերոգրյալ հիմքերի առկայության պայմաններում, Վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ սույն գործով թույլ չեն տրվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք կհանգեցնեին դատական սխալի, ուստի գտնում է, որ Դատարանի դատավճիռը Կարեն Բեգլարյանին արդարացնելու մասով, օրինական է ու հիմնավորված և այն բեկանելու, իսկ բերված վերաքննիչ բողոքները բավարարելու օբյեկտիվ հիմքեր առկա չեն:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 393, 394, հոդվածներով՝ ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

Մեղադրող Լ. Հովհաննիսյանի և տուժող Մ. Մխիթարյանի կողմից բերված վերաքննիչ բողոքները մերժել՝ Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 03.10.2011թ. դատավճիռն՝ ըստ մեղադրանքի Կարեն Վլադիմիրի Բեգլարյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, թողնելով օրինական ուժի մեջ:
Որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ Վճռաբեկ դատարանին՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

	Իսկականի հետ ճիշտ է՝ ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ՝ Կ. ՂԱԶԱՐՅԱՆ
Դատական ակտի ամսաթիվը:	06-12-2011

Դատական ակտ:	Գործ ԵԱԴԴ/0042/01/11 Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2011թ. դեկտեմբերի 06-ին Երևան ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ՝ ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ Կ. ՂԱԶԱՐՅԱՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐ Գ. ՄԵԼԻՔ-ՍԱՐԳՍՅԱՆ Հ. ՏԵՐ-ԱԴԱՄՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՄԲ՝ Մ. ՈՒԴՈՒՄՅԱՆԻ Մասնակցությամբ՝ ՄԵՂԱԴՐՈՂՆԵՐ՝ Լ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ, Ա. ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ՊԱՇՏՊԱՆ՝ Ա. ՍԱՐԳԱՐՅԱՆԻ ՏՈՒԺՈՂ՝ Մ. ՄԽԻԹԱՐՅԱՆԻ ԹԱՐԳՄԱՆ՝ Ա. ԽԱՆԻԿՅԱՆԻ ԱՄԱՍՏԱՆՅԱԼ՝ Կ. ԲԵԳԼԱՐՅԱՆԻ Դռնբաց դատական նիստում քննելով մեղադրող Լ. Հովհաննիսյանի և տուժող Մ. Մխիթարյանի վերաքննիչ բողոքները՝ քրեական գործով ըստ մեղադրանքի Կարեն Վլադիմիրի Բեգլարյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի /այսուհետ՝ Դատարան/ 03.10.2011թ. դատավճռի դեմ, Պ Ա Ր Զ Ե Ց Գործի դատավարական նախապատմությունը և փաստական հանգամանքները. 25.01.2011թ. ՀՀ ոստիկանության ՔԳՎ Երևան քաղաքի ՔՎ Մաշտոցի քննչական բաժնի քննիչ Հ.Խեդոյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել և վարույթ է ընդունվել թիվ 10100811 քրեական գործը: 18.02.2011թ. որոշում է կայացվել Կարեն Բեգլարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով մեղադրանք առաջադրելու մասին: 19.02.2011թ. վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց ընտվել է կալանավորումը և որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց կիրառվել գրավը: 21.02.2011թ. վճարվել է սահմանված գրավի՝ 1.500.000 դրամ գումարը և նույն օրը մեղադրյալը ազատ է արձակվել կալանքից: 24.05.2011թ. քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Դատարան և 07.06.2011թ. որոշում է կայացվել դատաքննության նշանակելու մասին:

Դատարանի 03.10.2011թ. դատավճռով ամբաստանյալ Կարեն Բեգլարյանը ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքում ճանաչվել է անպարտ և արդարացվել:
Խափանման միջոց գրավը՝ վերացվել է:
Վճռվել է Կարեն Բեգլարյանի համար <<ԱՐԴՇԻՆԻՆՎԵՍՏԲԱՆԿ>> ՓԲԸ-ն <<ՄԱՇՏՈՑԻ>> մասնաճյուղում Արմեն Հակոբյանի կողմից Երևանի թիվ 2 տեղական գանձապետական բաժանմունքի Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի արտաբյուջետային՝ 900053422011 հաշվին մուծված 1.500.000 դրամ գումարը վերադարձնել Արմեն Հակոբյանին:
Դատարանի 03.10.2011թ. դատավճռի դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել տուժող Մ. Մխիթարյանը և մեղադրող Լ. Հովհաննիսյանը:

2.Գործի փաստական հանգամանքները
Նախաքննական մարմնի կողմից Կարեն Բեգլարյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, խարդախությամբ, առանձնապես խոշոր չափի գույք հափշտակելու դիտավորությամբ, Սերյոժա Դալաքյանին սեփականությամբ պատկանող Երևանի Շիրազի փողոցի 52/6 հասցեում գտնվող խանութը, Միքայել Սարդարյանին 48.000 ԱՄՆ դոլարով վաճառելու պատրվակով, խաբեությամբ և վերջինիս վստահությունը չարաշահելով, 2008թ. ապրիլ-հունիս ամիսներին, Երևանի Պարոնյան 1 հասցեում գտնվող իր գրասենյակում և Դավթաշեն 2-րդ թաղամասի 32-րդ շենքի 23 բնակարանում, Ս.Սարդարյանից ստացել և խարդախությամբ հափշտակել է առանձնապես խոշոր չափ հանդիսացող 2.706.000 դրամին համարժեք 5.500 եվրո, 3.880.800 դրամին համարժեք 9.900 ԱՄՆ դոլար և 8.000.000 դրամ, ընդհանուրը՝ 13.794.800 դրամ՝ Միքայել Սարդարյանին և նրա կնոջը՝ Մարինա Մխիթարյանին պատճառելով առանձնապես խոշոր չափի գույքային վնաս:

2/. Վերաքննիչ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.
Վերաքննիչ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում, ներքոհիշյալ հիմնավորումներով:
1. Տուժող Մարինե Մխիթարյանը իր վերաքննիչ բողոքում նշել է, որ Դատարանը ապացույցների հետազոտման, գնահատման արդյունքում կատարել է սխալ իրավական վերլուծություն, քրեական գործի փաստական հանգամանքների վերաբերյալ եզրակացության հանգելիս թույլ է տվել ակնհայտ սխալ՝ իր ամուսնու՝ Միքայել Սարդարյանի դիմումը Մաշտոցի քննչական բաժին դիտելով որպես օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցի օգտագործում՝ պատճառաբանելով, որ խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 126 հոդվածը, 216 հոդվածի 1-ին մասը, Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի 6 հոդվածի 3-րդ մասի դ կետը և մի շարք այլ հոդվածներ:
Ապացույցների ոչ ճիշտ իրավական գնահատման արդյունքում Դատարանը գտել է, որ իր ամուսնու և Կարեն Բեգլարյանի միջև ծավալվել են քաղաքացիաիրավական հարաբերություններ և որ վերջինիս արարքներում բացակայում են ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշները:
Տվյալ պարագայում Կարեն Բեգլարյանը գույքին (դրամին) տիրանալու համար դիմել է խաբեության՝ իր ամուսնուն հայտնելով ոչ ճիշտ տեղեկություններ, ներկայանալով որպես Երևանի Շիրազի փողոցի 52 շենքի դիմաց գտնվող մթերային խանութի սեփականատեր, որը ինչպես պարզվեց հետագայում, դեռևս 2007թ. առ ու ծախի պայմանագրով վաճառվել է գործով վկա Սերյոժա Դալլաքյանին: Կ. Բեգլարյանը իր հանցավոր գործողությունները իրականացրել է

ստացականներ (09.06.2008թ. կազմված), 11.06.2008թ.

փոխառության պայմանագիր կազմելու եղանակով:
Դեռևս 16.04.2008թ., 5.000 Եվրո ստանալուց հետո 2 օր անց, իրենց հայտնել է, թե իբրև խանութը գնող այլ հաճախորդ կա, որը իրեն կվճարի արժեքը ամբողջությամբ, սակայն չի ցանկանում վաճառել նրանց, քանի որ խոստացել է իրենց՝ այդ եղանակով համոզելով և հորդորելով, ծուղակը գցելով՝ աստիճանաբար, 18.04.2008թ. ստացել 500 եվրո, 24.04.2008թ.՝ 1.000 ԱՄՆ դոլար, 26.04.2008թ. 8.900 ԱՄՆ դոլար, ընդհանուրը մինչև վարկի ձևակերպումը՝ խաբեությամբ իրենցից ստացել է 18.000 ԱՄՆ դոլար:
Կարեն Բեգլարյանը խաբեությամբ (իրենց հայտնել է, որ բացի մեր բնակարանից բանկում գրավ է դրվել նաև իր անվամբ գոյություն չունեցող ավտոմեքենաները) 18.000 ՍՄՆ դոլարի փոխարեն վարկ է ստացել 30 հազար ԱՄՆ դոլար, որը նա և բանկի աշխատակիցը՝ (1.600.000 դրամ) յուրացրել են:
Քրեական գործում նշված (գրավոր բոլոր) ապացույցների ճիշտ գնահատման արդյունքում ակնհայտ է դառնում, որ Կարեն Բեգլարյանն ի սկզբանե նպատակ է ունեցել խարդախության միջոցով հափշտակել ուրիշի գույքը:
ՀՀ Վճռաբեկ դատարանը թիվ ԵԿԴ/0176/01/09 քրեական գործով 24.02.2011թ. որոշմամբ արտահայտել է իրավական դիրքորոշում՝ խարդախության հանցակազմի սուբյեկտիվ կողմի դրսևորման վերաբերյալ, որը լիովին համապատասխանում Կարեն Բեգլարյանի կողմից կատարված արարքի հատկանիշներին:
Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376, 378, 379, 380, 381 հոդվածներով, 396 հոդվածի 1-ին, 2-րդ կետերով՝ բողոքաբերը խնդրել է բեկանել Դատարանի 03.10.2011թ. դատավճիռը, Կարեն Բեգլարյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և դատապարտել ազատազրկման օրենքով նախատեսված պատժաչափով /հաշվի առնելով իրենց պատճառված վնասի չափը/:
2. Մեղադրող Լ. Հովհաննիսյանն իր վերաքննիչ բողոքում նշել է, որ ապացույցների գնահատման և Դատարանի իրավական վերլուծության հետ անհամաձայնությունը կայանում է նրանում, որ առաջադրված մեղադրանքում ամբաստանյալ Կարեն Բեգլարյանն իրեն մեղավոր չի ճանաչել և ցուցմունք է տվել, որ ինքը տուժողներին չի խաբել, իրենց միջև առկա են քաղաքացիական իրավահարաբերություններ: Այս առումով նրա պատճառաբանությունները քրեական պատասխանատվությունից ու պատժից խուսափելու նպատակ են հետապնդում և հերքվել են Դատարանում հետազոտված այլ ապացույցներով, մասնավորապես տուժողի, վկաների ցուցմունքներով, գործով ապացույց այլ փաստաթղթերով: Չտալով իր գործողություններին քրեահրավական գնահատական՝ տուժողների հետ ունեցած փաստական հարաբերությունների մասին Կարեն Բեգլարյանի ցուցմունքներն ըստ էության մասնակիորեն խոստովանական էին, պարզապես գործի փաստական հանգամանքների շուրջ նրա ցուցմունքների իրավական գնահատման հարցում Դատարանը թույլ է տվել դատական սխալ:
Կ.Բեգլարանի ցուցմունքն այն մասին, որ խանութը պարտքի դիմաց Սերյոժա Դալլաքյանին պայմանագրով ի սեփականություն հանձնած լինելու և պարտքը վերադարձնելու դեպքում այն կրկին իր անվամբ վերաձևակերպելու պայմանավորվածության մասին Մ. Սարդարյանին հայտնել է իրենց ծանոթության և առուծախի շուրջ պայմանավորվածության հենց սկզբից, հերքեցին ոչ միայն տուժողն ու նրա դուստրը, այլև վկա Սերյոժա Ղազարյանը, ով հանդիսանալով որպես անշարժ գույքի գործակալ՝ ծանոթացրել է կողմերին, ներկա է գտնվել նրանց պայմանավորվածություններին, դատարանին հայտնեց, որ ինքը ևս տեղյակ չի եղել նշվածի մասին, այլապես իր իսկ բառերով՝ ,, ...հո հիմար չէի նման պայմաններում միջնորդ հանդես գայի..: Նա ցուցմունք տվեց, որ համոզված է եղել, որը խանութր պատկանում է Կ.Բեգլարյանին՝ դրա բանալիները

մշտապես գտնվել են նրա մոտ և տարիներ շարունակ իմացել է, որ խանութի սեփականատերը Կարեն Բեգլարյանն է: Հետագայում, երբ վերջինս խուսափել և թաքնվել է տուժողներից, ինքը նրան գտնելու համար ենթարկվելով տուժողների հետամուտին, ամիսներ անց նոր միայն իմացել է, որ խանութը Կարեն Բեգլարյանի անվամբ չի եղել: Վերջինս իր ցուցմունքներով չի հերքել, որ տուժողներից ստանալով 44 հազար ԱՄՆ դոլար գումար, Սերյոժա Դալլաքյանի 25 հազար դոլար պարտքը վերադարձնելու և խանութը իր կամ Մ. Աարդարյանի անվամբ վերաձևակեպելու ուղղությամբ ոչինչ չի արել, հայտնեց, որ այդ գումարը ծախսել է այլ նպատակներով, այդ թվում հոր գերեզմանն է սարքել:
Ամբաստանյալի ցուցմունքների իսկ համաձայն, նրա գործողությունների ողջ հաջորդականությունը միանշանակորեն հաստատում է ի սկզբանե նրա սուբյեկտիվ դիտավորությունը՝ խարդախությամբ հափշտակելու տուժողների գումարը:
Աբսուրդ է ամբաստանյալի այն պատճառաբանությունը, որ տուժողը վարկը վերցնելուց և 44 հազար դոլարը տալուց հետո, քանի որ մնացած 4000 դոլարը վճարել չէր կարող, հրաժարվեց ինչպես գործարքից, այնպես էլ գումարը ետ ստանալու իր առաջարկից, ասելով, որ իրեն գումար անհրաժեշտ չէ և պայմանվորվել են, որ Մ.Սարդարյանից վերցրած ամբողջ գումարի՝ 44.000 ԱՄՆ դոլարի դիմաց Մ.Սարդարյանին յուրաքանչյուր ամիս վճարի մոտ 2.000 ԱՄՆ դոլար գումար՝ որպես տոկոս: /Տուժող Մարինա Սխիթարյանի, վկաներ Նատալյա Գրիգորյանի, Սերյոժա Ղազարյանի, Սերյոժա Դալլաքյանի, Գևորգ Փաշոյանի ցուցմունքներ/ :
Դատարանը, հետազոտելով նախաքննական մարմնի 25.02.2011թ. որոշմամբ ապացույց ճանաչված և քրեական գործին կցված Միքայել Սարդարյանի կողմից Մաշտոցի քննչական բաժին ուղարկված դիմումը, որով հաստատվում են քրեական գործի համար կարևոր նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ, այդ փաստաթուղթը ճանաչել է անթույլատրելի ապացույց՝ պատճառաբանելով, որ չի ստուգվել այդ փաստաթղթի ձեռք բերման աղբյուրը, նախաքննական մարմինը անհայտ ծագումով դիմումը ճանաչել է որպես ապացույց:
Բողոքաբերը գտնում է, որ քննիչը ապացույց է ճանաչել Մ.Սարդարյանի կողմից ուղարկված դիմումը՝ որպես այլ փաստաթուղթ և նրա ձեռք բերման աղբյուրը հայտնի է եղել: Տուժողը Դատարանում հայտնել է, որ դիմումը գրել է իր ամուսինը ռուսերեն լեզվով, այն թարգմանվել է հայերեն արտոնագիր ունեցող թարգմանչի կողմից, որից հետո իր ամուսինը ստորագրել և ՈԴ-ից ուղարկել է քննիչին՝ ֆաքսի միջոցով: Ուստի Կ.Բեգլարյանի որևէ իրավունք չի խախտվել և որպես այլ փաստաթուղթ ճանաչված դիմումը ունի ապացուցողական նշանակություն իսկ դրա անթույլատրելի ճանաչելն անհիմն է: Քրեադատավարական օրենքի խախտումը տվյալ դեպքում էական է:
Գործով ձեռք բերված բավարար ապացույցների համակցության անկողմնակալ գնահատման արդյունքում միանշանակորեն հաստատվում է, որ Կ. Բեգլարյանը ի սկզբանե նպատակ է ունեցել խարդախության միջոցով հափշտակելու տուժողների գումարը, չվերադարձնելու այն, չկատարելու խոստումը կամ պայմանագրային պարտավորությունները, և շահադիտական նպատակի վրա հիմնված նրա գործողությունների ու անգործության ամբողջ ծավալը ապացուցում է, որ նրա արարքում առկա է խարդախության հանցակազմ:
Վերջինս խաբել է տուժողներին, նրանցից թաքցրել խանութն իրենը չլինելու փաստը, երբ վերջիններս հայտնել են, որ իրենք այդքան գումար չունեն, հորդորել է վարկ վերցնել, համոզել որ ինքը կօգնի նրանց վարկ վերցնելու, և հետագայում խանութը ամսեկան 2 հազար դոլարով վարձով տալու հարցում: Փաստորեն, ներգործել է տուժողների գիտակցության և կամքի վրա:
Դատարանի դատողությունները զուտ ապօրինի են, իրավական վերլուծությունը չի համապատասխանում քրեական օրենքի

իսկական իմաստին, վկայակոչելով ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումը, ի խախտումն այդ դիրքորոշման՝ գործի փաստական հանգամանքների վերաբերյալ սխալ հետևություններ է արել:
Դատարանը ջանք չի խնայել արհեստականորեն հակասական համարել տուժող Մարինա Մխիթարյանի, Սերյոժա Ղազարյանի, Գևորգ Փաշոյանի հայտնած տեղեկությունները՝ Կարեն Բեգլարյանի գործողությունների իրավական գնահատման հիմքում դնելով միայն նրա իսկ տված ցուցմունքները, առանց դրանք համադրելու այլ ապացույցների հետ:
Փոխառության պայմանագրի առկայությունը տվյալ դեպքում բացարձակապես չի խոսում քաղաքացիաիրավական հարաբերությունների առկայության մասին, ավելին այդ փաստաթղթի առկայությունը հաստատում է ամբաստանյալի կողմից մտածված, պլանավորված իր գործողություններին քաղաքացիական հարաբերությունների բնույթ տալու միտումը:
Տուժողներն արդեն իսկ ունեցել են գրավոր ստացական, կասկածներ չեն ունեցել Կ.Բեգլարյանի կողմից խաբվելու վերաբերյալ, այդպիսիք չեն բարձրաձայնել, գործարքի ձևակեպումն օրերի հարց էր և պայմանագրի կնքումը եղել է ամբաստանյալի նախաձեռնությունը:
Նման պայմաններում դատարանի հետևությունները չեն բխում գործի փաստական հանգամանքներից:
Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 54 հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով, 376, 380, 395 հոդվածներով՝ բողոքաբերը խնդրել է բեկանել Դատարանի 03.10.2011թ. դատավճիռը՝ ամբաստանյալ Կարեն Բեգլարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքում անպարտ ճանաչելու և արդարացնելու վերաբերյալ և կայացնել մեղադրական դատավճիռ:

3.Վերաքննիչ բողոքի դեմ բերված պատասխանը.
Ամբաստանյալ Կարեն Բեգլարյանի պաշտպանները վերաքննիչ բողոքի դեմ բերված իրենց պատասխանում նշել են, որ մեղադրողի կողմից գործի փասաակսւն հանգամանքների նման խեղաթյուրումը մեղմ ասած անհասկանալի է իրենց, քանի որ Դատարանում ապացուցվել է ճիշտ հակառակը:
Ինչ վերաբերում է Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների դատախազության կողմից բողոքի հետ ներկայացվող «նոր ապացույցին», ապա նախ բողոքում որևէ հիմնավորում ներկայացված չէ այն մասին, թե ինչ օբյեկտիվ հանգամանքների առկայության պայմաններում է, որ հնարավոր չի եղել այն ներկայացնել առաջին ատյանի դատարանում:
Բացի այդ, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381 հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, վերաքննիչ բողոքը պետք է բովանդակի՝ բողոքին կցվող նյութերի ցանկը, ինչը ներկայացված բողոքում բացակայում է, այսինքն ըստ էության խախտվել է նշված հոդվածի պահանջը և համաձայն նույն հոդվածի 2-րդ մասի՝ այն դեպքում, երբ վերաքննիչ բողոքը չի համապատասխանում սույն հոդվածով սահմանված պահանջներին, վերաքննիչ դատարանի որոշմամբ այն թողնվում է առանց քննության:
Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73 հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, 382 հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝ խնդրել է մերժել մեղադրող Լ. Հովհաննիսյանի և տուժող Մ. Մխիթարյանի վերաքննիչ բողոքները՝ Դատարանի դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ:

4/.Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները և

	եզրահանգումները. Վերաքննիչ բողոքում նշված հիմքերի ու հիմնավորումների սահմաններում վերլուծելով գործի նյութերը, լսելով մեղադրողի և տուժողի կողմից իրենց վերաքննիչ բողոքների հիմնավորումները, ամբաստանյալի բացատրությունը, պաշտպանի պատասխանը, ստուգելով քրեական գործով ձեռք բերված ապացույցները, ապացույցների ձեռքբերման աղբյուրները, քրեական գործով ձեռք բերված յուրաքանչյուր ապացույց ստուգելով թույլատրելիության, վերաբերելիության, ապացույցների ողջ համակցությունը՝ քրեական գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանը գտավ, որ տուժողի և մեղադրողի վերաքննիչ բողոքները պետք է մերժել, Դատարանի 03.10.2011թ դատավճիռը՝ քրեական գործով ըստ մեղադրանքի Կարեն Բեգլարյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդվածի 3-րդ մասի 1-ի և կետով, թողնելով օրինական ուժի մեջ՝ հետևյալ պատճառաբանությամբ: Առաջադրված մեղադրանքում ամբաստանյալ Կարեն Բեգլարյանն իրեն մեղավոր չի ճանաչել և ցուցմունք է տվել այն մասին, որ 2007թ-ից շահույթ ստանալու նպատակով Ծաղկաձորում իրականացրել է շինարարական աշխատանքներ, սակայն դրանք ձախողվել են հողերի սահմանության պատճառով և ինքը կանգնել է ֆինանսական խնդիրների առջև: Այդ աշխատանքները կատարելիս, օգտագործել է նաև իր հոր ընկերոջ՝ Սերյոժա Դալլաքյանից 2006-2007թթ. մաս-մաս վերցրած ընդհանուր առմամբ 25.000 ԱՄՆ դոլար գումարը և շինարարական աշխատանքների ձախողումից հետո, որպես գումարը վերադարձնելու երաշխիք, սեփականությամբ իրեն պատկանող Երևանի Շիրազի փողոցի 52-րդ շենքի դիմաց գտնվող մթերային խանութը 2007թ. դեկտեմբեր ամսին, առուվաճառքի պայմանագրով հանձնել է վերջինիս, պայմանով՝ երբ պարտքը վերադարձնի խանութը կվերաձևակերպվի: Տեսնելով, որ իր գործերը գնալով վատանում են՝ 2008թ. սկզբին, դեռ իր հոր կենդանության օրոք, որոշել է խանութը վաճառել 50.000 ԱՄՆ դոլարով /հայրը մահացել է 02.02.2008թ./ և այդ մասին ասել է անշարժ գույքի վաճառքով զբաղվող Սերգեյ Ղազարյանին, ում միջոցով էլ 2008թ. ապրիլին ծանոթացել է Միքայել Սարդարյանի հետ: Վերջինս համաձայնվել է խանութի դիմաց վճարել 48.000 ԱՄՆ դոլար ու ասել, որ պետք է խորհրդակցի իր ընտանիքի անդամների և ընկերների հետ, որոնք բնակվում են ՌԴ-ում, որպեսզի ճշտի, թե ինչ ժամկետում նրանք կուղարկեն այդ գումարը: Երկու-երեք օր անց, Մ.Սարդարյանը եկել է Երևանի Պարոնյան 1 հասցեում գտնվող իր կողմից վարձակալած գրասենյակ և պարտավորվել՝ երկու ամսվա ընթացքում վճարել նշված գումարը, իսկ ինքը պարտավորվել է ամբողջ գումարը ստանալուց հետո խանութը ձևակերպել վերջինիս անվամբ ու միաժամանակ նշել, որ խանութն այլ անձի անվամբ է գրանցված, ում ինքը պարտք է մոտ 10.000.000 դրամ և այն վերադարձնելուց հետո կարող է խանութը անվանափոխել իր անվամբ ու առաջարկել է գումարը վճարել երկու փուլով, ինչին նա համաձայնվել է: Երկու օր անց Մ.Սարդարյանն իր փեսայի ու Սերգեյ Ղազարյանի հետ եկել է իր գրասենյակ և որպես խանութը գնելու կանխավճար՝ իրեն տվել 5.000 Եվրո գումար, որի վերաբերյալ գրել է ստացական: Այնուհետև, Մ.Սարդարյանը ստացականում նշված օրերին իր գրասենյակում իրեն է տվել 500 Եվրո, 1.000 և 8.900 ԱՄՆ դոլար գումարներ, ընդհանուր առմամբ 26.04.2008թ. դրությամբ՝ 18.000 ԱՄՆ դոլար գումար: Մոտ տասնհինգ օր անց, Մ.Սարդարյանը իրեն հայտնել է, որ ճգնաժամի հետևանքով իր ընկերները չեն կարողանում ՌԴ-ից գումար ուղարկել և պատրաստվում է իր տունը գրավադրել բանկում և տալ խանութի մնացած գումարը, սակայն, քանի որ իրենք ՌԴ քաղաքացիներ են, բանկը վարկ չի տրամադրում և խնդրել է օգնել վարկ ձևակերպելու հարցում: Ինքը նրան ասել է, որ իր մոտ կա Գևորգ Փաշոյանի այցեքարտը, ով զբաղվում է վարկերի ձևակերպմամբ և կարող է դիմել նրան: Իրենք վերջինիս հետ հանդիպել են Մ.Սարդարյանի

շենքի բակում, ով վերցրել է Մ.Սարդարյանի բնակարանի և այլ փաստաթղթերը: Դրանց ծանոթանալուց հետո, Գ.Փաշոյանը զանգահարել է իրեն և հայտնել, որ կարող է 10.000.000 դրամի վարկ ձևակերպել իր քրոջ անունով, սակայն անհրաժեշտ է որպեսզի վարկի մարումները կանոնավոր կատարվի, որպեսզի վարկային պատմությունը չխեղաթյուրվի և որպես իր ծառայությունների վարձատրության գումար՝ պահանջել է վարկի գումարի 10%-ը տրամադրել իրեն: Ինքը ասել է, որ վարկի մարման երաշխիք պետք է տա Մ.Սարդարյանը և ոչ թե ինքը: Այնուհետև Մ.Սարդարյանը համաձայնվել է այդ պայմաններին և առանձին հանդիպել է Գ.Փաշոյանին գործարքի մանրամասները քննարկելու համար: Միևնույն ժամանակ, Մ.Սարդարյանն իրեն հայտնել է, որ քանի որ վարկի գումարից 1.000.000 դրամը պետք է հանձնի Գ.Փաշոյանին որպես միջնորդավճար, և հենց այդքան է պակասում վարկը ստանալուց հետո որ իրեն վճարի խանութի ողջ արժեքը, ապա տարբերությունը՝ 1.000.000 դրամն իրեն կտա մոտ հինգ օր անց: Մի քանի օր անց, իրեն է զանգահարել Գ.Փաշոյանը և հայտնել, որ Մ.Սարդարյանը նոտարական գրասենյակում հրաժարվել է գործարքը կնքելուց՝ իմանալով, որ վարկը ձևակերպվում է ոչ թե իր, այլ Գևորգ Փաշոյանի քրոջ անվամբ: Երեկոյան Մ.Սարդարյանը զանգահարել է իրեն և կրկին հայտնել, որ համաձայն է վարկի ձևակերպման հետ, սակայն Գ.Փաշոյանը հայտնել է, որ բանկի ներկայացուցիչը կասկածներ է հայտնել Մ.Սարդարյանի գործարքից հրաժարվելու կապակցությամբ և դրանք փարատելու համար միջնորդավճարը կկազմի վարկի գումարի 16%-ը: Ինքը զանգահարել է Մ.Սարդարյանին և տեղեկացրել նոր պայմանների մասին: Վերջինս մոտ մեկ ժամ անց զանգահարել է իրեն և հայտնել, որ համաձայն է, բայց վարկը ստանալուց հետո իրեն է հանձնելու 1.600.000 դրամ պակաս գումար, որը կտա մի քանի օր անց: Ինքը համաձայնվել է՝ ասելով, որ գործարքը կկնքեն գումարը ամբողջությամբ տալուց հետո: Մի քանի օր անց, Մ.Սարդարյանը զանգահարել է իրեն և հայտնել, որ գնում են բանկ գումարը ստանալու և խնդրել է իրեն ներկա գտնվել՝ պատճառաբանելով, որ Գ.Փաշոյանին լավ չի ճանաչում: Երբ գնացել է <<ՎՏԲ Հայաստան բանկ>>ՓԲԸ-ն Ավանի մասնաճյուղի մոտ, այնտեղ հանդիպել է Գ.Փաշոյանին, նրա քրոջը՝ Շուշանիկ Ռուշանյանին, Մ.Սարդարյանին իր կնոջ՝ Մարինա Մխիթարյանի և դստեր՝ Նատալյա Գրիգորյանի հետ: Ինքը սպասել է դրսում, իսկ Մ.Սարդարյանը Գ.Փաշոյանը և նրա քույրը մտել են բանկ: Նրանց վերադառնալուց հետո, Մ.Սարդարյանը և Գ.Փաշոյանը իր ավտոմեքենայում հաշվել են գումարը, որից հետո Մ.Սարդարյանն իրեն է տվել 4.000.000 դրամ, որից հետո ինքը գնացել է իր գործերով, իսկ Գ.Փաշոյանը Մ.Սարդարյանին և նրա ընտանիքի անդամներին տարել է տուն: Նույն օրը՝ 09.06.2008թ., երեկոյան, պայմանավորվածության համաձայն, գնացել է Մ.Սարդարյանի բնակարան և վերջինս կնոջ ու դստեր ներկայությամբ իրեն տվել ևս 4.000.000 դրամ և ասել, որ գումարի մնացած մասը՝ մոտ 4.000 ԱՄՆ դոլարը, կտա մի քանի օր անց, քանի որ 10.000.000 դրամից 1.600.000 դրամը տվել է Գ.Փաշոյանին, 8.000.000 դրամը իրեն, իսկ 400.000 դրամն իրեն ներկայումս անհրաժեշտ է: Ինքը կրկին ստացական է գրել, որում նշել է, որ որևէ պահանջ այլևս չունի և խանութը կձևակերպի 16.06.2008թ., քանի որ Մ.Սարդարյանը պարտավորվել էր պարտք մնացած 4.000 ԱՄՆ դոլարը վճարել հինգ օր անց՝ 16.06.2008թ.: Հաջորդ օրը՝ առավոտյան ժամը 10-ի սահմաններում, գնացել է իր գրասենյակ, ուր մուտքի մոտ տեսել է Միքայել Սարդարյանին: Վերջինս զրույցի ընթացքում հայտնել է, որ չի կարող տալ մնացած 4.000 ԱՄՆ դոլարը, բացի այդ հրաժարվում է խանութը գնելուց, քանի որ իրեն մոտ 15.000 ԱՄՆ դոլար գումար է անհրաժեշտ խանութը աշխատացնելու համար, իսկ աշխատացնելու դեպքում էլ իր հաշվարկներով խանութի ստացած եկամուտով չի կարողանա մարել վարկը և հոգալ իր կարիքները: Ինքը առաջարկել է նրան վերադարձնել 9.000.000 դրամ /8.000.000 դրամ վարկից

իրեն տրված գումարը և 1.000.000 դրամ ունեցել է գրասենյակի դրամարկղում/, իսկ մնացած գումարները հետագայում, քանի որ դրանք ծախսել է իր հոր գերեզմանի կառուցման համար: Մ.Սարդարյանը հայտնել է, որ իրեն գումար անհրաժեշտ չէ, իրեն գործ է պետք, որ ընտանիքը պահի, քանի որ որոշել է մշտական բնակություն հաստատել Հայաստանում: Ի վերջո իրենք պայմանավորվել են, որ վերջինիս տրված 8.000.000 դրամը մնա իր մոտ և ինքը նրանից վերցրած ամբողջ գումարի՝ 44.000 ԱՄՆ դոլարի դիմաց նրան յուրաքանչյուր ամիս վճարի մոտ 2.000 ԱՄՆ դոլար գումար որպես տոկոս, ինչը այն ժամանակ համարժեք էր 620.000 դրամին՝ մինչև ամբողջ գումարի վերադարձը: Հաջորդ օրը Մ.Սարդարյանի առաջարկով, վերջինիս և նրա դստեր հետ գնացել են նոտարական գրասենյակ, որտեղ իր և Նատալյա Գրիգորյանի միջև կնքվել է փոխառության պայմանագիր, ըստ որի ինքը վերջինիցս փոխառությամբ մեկ ամիս ժամկետով վերցրել է 15.000.000 դրամ գումար: Գումարի չափը իր վերցրած գումարից 1.000.000 դրամով ավել և փոխառությունը մեկ ամիս ժամկետով ձևակերպելը եղել է Մ.Սարդարյանի պահանջը, վերջինս պատճառաբանել է, որ եթե պայմանավորվածության համաձայն չկատարի ստանձնած պարտավորությունը, ապա նման դեպքում ինքը հնարավորություն կունենա ցանկացած պահի դիմել դատարան՝ ամբողջ գումարի բռնագանձման պահանջով: Ինքն օգոստոս ամսին Մ.Սարդարյանին է տվել 450.000 դրամ, սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին 620.000-ական դրամ, իսկ նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ընդհանուր առմամբ 965.000 դրամ, որի մեջ ներառված է եղել Մ.Սարդարյանի ինքնաթիռի տոմսի արժեքը Երևան-Եկարտիրնբուրգ և հետադարձ ուղղություններով, ինչպես նաև ճանապարհածախսը: Հունվար և փետրվար ամիսներին վերջինիս վճարել է ընդամենը 172.000 դրամ, ինչի կապակցությամբ վերջինս դժգոհել է, ասելով որ խնամքին թոռնիկ ունի և չի կարողանում հոգալ ընտանիքի ծախսերը: Ինքը Մ.Սարդարյանի պարտքը վերադարձնելու պարտավորությունից դրդված, ճարահատյալ նույնիսկ փորձել է վաճառել իր երիկամը, և այդ նպատակով մի քանի լաբարատոր հետազոտությունների է ենթարկվել, սակայն վերջին հետազոտության ընթացքում պարզվել է, որ ինքը տառապում է <<Հեպոտիտ C>> հիվանդությամբ, ուստի իր երիկամը պիտանի չէ փոխպատվաստման համար: Նշեց, որ ինքը խարդախություն չի կատարել և Մ.Սարդարյանի գումարները հափշտակելու մտադրություն չի ունեցել, ուղղակի հանգամանքների բերումով և վերջինիս գործարքից հրաժարվելու կապակցությամբ ընկել է անելանելի վիճակի մեջ Մ.Սարդարյանից վերցված 44.000 ԱՄՆ դոլարից կարողացել է վերադարձնել ընդամենը 2.850.000 դրամ և չի հրաժարվում, որ նրա հանդեպ ունի պարտավորություններ և գումար ունենալու դեպքում պատրաստ է հետ վերադարձնել պարտքը /դատական նիստի արձանագրություն/: Տուժող Մարինա Մխիթարյանը ցուցմունք է տվել, որ 2008թ. ամբողջ ընտանիքով Եկատիրինբուրգից տեղափոխվել են Երևան: Իրենք ունեցել են մի փոքր խնայողություններ, որով ցանկացել են Երևանում խանութ գնել, աշխատել, որպեսզի օգնեն իրենց դստերը մեծացնելու նրա փոքր երեխային, ով հոր մահից հետո կորցրել էր կերակրողին: Այդ նպատակով իրենք դիմել են մի քանի անշարժ գույքի գործակալների, այդ թվում նաև Սերգեյ Ղազարյանին: Վերջինիս առաջարկել է 50.000 ԱՄՆ դոլարով գնել Երևանի Շիրազի փողոցի 52 շենքի դիմաց գտնվող խանութը, որը իրենք տեսնելով հավանել են: Դրանից հետո Սերգեյ Ղազարյանն իր ամուսնուն ծանոթացրել է Կարեն Բեգլարյանի հետ, ով այն ժամանակ զբաղվում էր ավիոտոմսերի վաճառքով, կրում էր փողկապ, վարում էր <<Տուառեգ>> ավտոմեքենա և զբաղվում էր ավտոմեքենաներ վարձակալության հանձնելով ու թողնում էր պարկեշտ մարդու տպավորություն: Իր ամուսինը համաձայնության է եկել վերջինիս հետ խանութը 48.000 ԱՄՆ դոլարով գնելու հարցում: Իր ամուսինը մի քանի անգամ Կարեն Բեգլարյանին և Սերյոժա Ղազարյանին

հարցրել է, թե խանութի փաստաթղթերը ինչ վիճակում են, նրանք երկուսն էլ պատասխանել են, որ դրանք նորմալ են, խանութը պատկանում է Կարեն Բեգլարյանին և խանութի բանալիները մշտապես գտնվել են վերջինիս մոտ: Վերջինս համոզել է իր ամուսնուն վարկ վերցնել՝ գրավադրելով իրենց բնակարանը, իրենք գումարը պետք է տրամադրեին երկու ամսվա ընթացքում: Կ.Բեգլարյանը պարտավորվել էր վարկը ստանալուց հետո խանութը անվանափոխել իր ամուսնու անվամբ: 16.04.2008թ. իր ամուսինը Սերգեյ Ղազարյանի ներկայությամբ Երևանի Պարոնյան 1 հասցեում գտնվող Կ.Բեգլարյանի գրասենյակում նրան է տվել 5.000 Եվրո՝ որպես խանութի գնման կանխավճար: Այդ մասին գրվել է ստացական: Դրանից հետո նույն վայրում 18.04.2008թ. տվել է 500 Եվրո, 24.04.2008թ.՝ 1.000 ԱՄՆ դոլար, 26.04.2008թ.՝ 8.900 ԱՄՆ դոլար: Մինչ վարկի ձևակերպումն իր ամուսինը, որպես կանխավճար ամբաստանյալին է տվել իրենց մոտ առկա ամբողջ գումարը՝ ընդհանուր առմամբ 18.000 ԱՄՆ դոլարի չափով, իսկ վերջինս գրել է սատացական՝ ասելով, որ դա ունի իրավաբանական ուժ: Այնուհետև, 04.06.2008թ. իրենք գնացել են նոտարական գրասենյակ՝ վարկ ձևակերպելու, այն ձևակերպում էր Կ.Բեգլարյանի ծանոթ Գևորգ Փաշոյանն իր քրոջ՝ Շուշանիկ Ռուշանյանի անունով: Գ.Փաշոյանը ասել է, որ իրենց հետ որևէ գործ չունի, գործ ունի միայն Կ.Բեգլարյանի հետ: Վարկը ձևակերպվել էր Շ.Ռուշանյանի անվամբ, քանի որ դրա համար անհրաժեշտ էր ՀՀ քաղաքացու անձնագիր, իսկ իրենք այդ ժամանակահատվածում նման անձնագրեր չեն ունեցել: Իրենց որևէ մեկը չի ասել, որ անհրաժեշտ է հայկական անձնագիր, հակառակ դեպքում իրենք շատ ազգականներ ունեին ՀՀ-ում և վարկը կձևակերպեին իրենց ազգականների անվամբ: Գործարքը կնքելուց հետո, բանկի աշխատակիցն իրենց ասել է, որ իրենց բնակարանի դիմաց տրամադրվել է 30.000 ԱՄՆ դոլար վարկ, իրենք անակնկալի են եկել, քանի որ նախապես գիտեին, թե տրամադրվելու է ընդամենը 18.000 ԱՄՆ դոլար: Խորհրդակցելուց հետո, իրենք համաձայնվել են այդ գումարի չափին, քանի որ հենց այդքան գումար պետք է տային Կ.Բեգլարյանին ու մտածել, որ միևնույն է խանութն իրենց անվամբ ձևակերպվելուց հետո կաշխատեն և աստիճանաբար կմարեն տոկոսները: Իր ամուսինը զանգահարել է վերջինիս, հետաքրքրվել, թե ինչու է 30.000 ԱՄՆ դոլար վարկ տրամադրվում, իսկ վերջինս ասել է, որ իր ավտոմեքենանել է գրավադրված 12.000 ԱՄՆ դոլարի դիմաց: 09.06.2008թ. իրենք գնացել են ՎՏԲ բանկի Ավանի մասնաճյուղ վարկը ստանալու: Բանկի աշխատակիցը պոլիէթիլենային տոպրակով դուրս է բերել գումարը և տարել Կ.Բեգլարյանի ավտոմեքենայի մեջ: Գումարը, ոչ թե 10.000.000 դրամ էր, ինչպես նշված էր պայմանագրում, այլ 8.400.000 դրամ: Իր ամուսինը վրդովվել է գումարը պակաս լինելու կապակցությամբ, իսկ Կ.Բեգլարյանը ասել է, որ 1.600.000 դրամ գումարը տվել է որպես պարգևատրում և ինքը մեզ կվճարի այն: Ավտոմեքենայի մեջ Կ.Բեգլարյանը հաշվել և իրեն է պահել 4.000.000 դրամը՝ մնացածը հանձնել է իր ամուսնուն և հեռացել: Երկու ժամ անց, ամբաստանյալը եկել է իրենց տուն և սկսել պահանջել մնացած գումարը՝ ասելով, որ ամեն ինչ կգրի ստացականում, որը իրավաբանական ուժ ունի և գրել, որ 16.06.2008թ. խանութը կձևակերպի իրենց անվամբ: Տանից դուրս գալու պահին, նա ասել է, որ իրենք չանհանգստանան և որ ամբողջ գումարը նրա մոտ է և այդ ամենը կձևակերպվի նաև նոտարական կարգով: 11.06.2008թ. ամբաստանյալը եկել է իր ամուսնու և դստեր հետևից, նրանց տարել նոտարի մոտ և ձևակերպել 15.000.000 դրամի չափով պարտք: 16.06.2008թ.-ից հետո իրենք կանգնել են մեծ բարդությունների առջև, քանի որ Կ.Բեգլարյանը խանութը չէր ձևակերպում և իր ամուսնուն մշտապես խաբում էր ասելով՝ <<վաղը արի, մյուս օրը արի, երեքշաբթի արի, չորեքշաբթի արի>>՝ամեն անգամ հետաձգելով խանութի ձևակերպումը: Վարկի օրը մոտենում էր, իսկ խանութը դեռ չէր ձևակերպվել իրենց անվամբ: Դրանից հետո,

Կ.Բեգլարյանը ասել է, որ վարկի տոկոսներն ինքը կմարի: Երկու ամիս նա տվել է 600.000 դրամ, քանի որ երկրորդ ամիսն էր, որ խանութը իրենց անվամբ չէր ձևակերպված: Ամբաստանյալը մշտապես խաբում էր՝ ասելով, որ խանութը վերահասցեավորվում է և պետք է սպասել: Հետո Կ.Բեգլարյանը հայտնել է, որ խանութի փաստաթղթերը գտնվում են Սերգեյ Դալլաքյանի մոտ, ով բնակվում է Կրասնոսելսկում և նրան ինքը 15.000 կամ 20.000 ԱՄՆ դոլար է պարտք և պետք է վերադարձնի, որպեսզի նա տրամադրի խանութի փաստաթղթերը: Դրանից հետո, նա հայտնել է, որ Ս.Դալլաքյանի կինը քաղցկեղով հիվանդ է և ներկայումս նա ժամանակ և տրամադրություն չունի: Իրենք խնդրել են ծանոթացնել իրենց Ս.Դալլաքյանի հետ, որպեսզի համոզվեն իրականում այդպիսի անձնավորություն գոյություն ունի թե ոչ, բայց ծանոթությունը այդպես էլ տեղի չի ունեցել: Հետո իր ամուսինը պահանջել է իր տված գումարները՝ ցանկանալով այլ խանութ գնել, սակայն ամբաստանյալը միշտ հետաձգել է գումարների վերադարձը՝ ասելով <<10 օրից Ռուսաստանից կուղարկեն, 15 օրից՝ Ֆրանսիայից, 20 օրից Ամերիկայից>>: Հնարավոր է, որ նրան ուղարկել են այդ գումարները, բայց դրանք իրնեց չեն հասել: Հետո նա ասել է, որ վաճառում է իր երիկամը՝ 25.000 ԱՄՆ դոլարով գնորդներ կան և այդ անձինք իրեն են տվել 5.000 ԱՄՆ դոլար հետազոտություններ անցնելու համար: Որոշ ժամանակ անց, իբր պարզվեց, որ նրա երիկամը փչացած է, բայց եթե նա ցանկություն ունենար վերադարձնելու գումարները, ապա կարող էր վաճառել իր մոր կամ երեխաների կամ բարեկամների երիկամները: Դրանից հետո, ամբաստանյալը հեռախոսին չէր պատասխանում կամ անհասանելի էր և այդպես ձգվեց ութ ամիս: Իր ամուսինը Կ.Բեգլարյանին ասել է, որ կդիմի դատարան, իսկ նա խնդրել է, որ դիմի ոչ թե քրեական դատարան, այլ քաղաքացիական՝ ասելով, որ մնալով ազատության մեջ, հնարավորություն կունենա աշխատել և վերադարձնել գումարը: 2009թ. փետրվարին իր ամուսինը դիմել է դատարան, այդ ժամանակ իրենք արդեն Կ.Բեգլարյանի հետ կապը կորցրել էին: Դատական գործի քննության ընթացքում իրենց հայտն է դարձել, որ վերջինիս անվամբ որևէ գույք հաշվառված չէ, բացառությամբ 1980թ. արտադրության մի հին ավտոմեքենայի, իսկ խանութը նա օտարել էր դեռևս 2007թ.-ին, փաստորեն նա վաճառում էր մի գույք, որը նրան չէր պատկանում: 16.10.2009թ. դատարանը գործի քննությունն ավարտեց նրա բացակայությամբ և բավարելով իրենց հայցը՝ Կ.Բեգլարյանից իրենց օգտին վճռվել է բռնագանձել 44.214 ԱՄՆ դոլար գումար՝ այդ գումարի վրա հաշվարկելով ամսական 1% մինչև գումարի մարումը: Դրանից հետո, մոտ մեկ տարի անց, իրեն հաջողվել է հեռախոսազրույց ունենալ նրա հետ, ում ասել է, որ եթե նա չվերադարձնի իրենց գումարները կամ չձևակերպի իրենց անվամբ խանութը, ապա ինքը կդիմի իրավապահ մարմիններին: Կ.Բեգլարյանն իրեն ասել է, որ ինքը հաշվեհամար բացի և նա քիչ-քիչ կմարի իրենց գումարը, սակայն այլևս իրեն չի զանգահարել: Իր կարծիքով վերջինս և Ս.Ղազարյանը նախնական համաձայնության են եկել իրենցից առանձնապես խոշոր չափի գումարներ հափշտակելու հարցում և գործել են համատեղ /դատական նիստի արձանագրություն/:
Վկա Սերյոժա Ղազարյանը ցուցմունք է տվել այն մասին, որ մանուկ հասակից ճանաչում է Կարեն Բեգլարյանին և իմացել է, որ նա իրենց շենքի դիմաց խանութ ունի: 2008թ. զբաղվել է անշարժ գույքի առքուվաճառքով, այդ ընթացքում նրանից տեղեկացել է, որ խանութը վաճառում է: Մի քանի ամիս անց՝ ապրիլին, իրեն է դիմել իր ծանոթներից Էմման, ով զբաղվում է պատճեննահանությամբ Աջափնյակի նոտարական գրասենյակում և ասել, որ իր բարեկամը՝ Միքայել Սարդարյանը ցանկանում է խանութ ձեռք բերել: Վերջինս իրեն հայտնել է, որ գույքի դիմաց կարող է վճարել 50.000 ԱՄՆ դոլար գումարի սահմաններում: Ինքը նրան է ցույց տվել Կ.Բեգլարյանի խանութը և Մ.Սարդարյանը այն տեսնելով՝ հավանել է: Դրանից հետո, իրենք հանդիպել են Կ.Բեգլարյանին:

Ամբաստանյալը խանութը վաճառում էր 50.000 ԱՄՆ դոլարով, իսկ Մ.Սարդարյանը սակարկում էր այդ գումարը՝ ասելով, որ պատրաստ է վճարել 48.000 ԱՄՆ դոլար է: Կ.Բեգլարյանը չէր համաձայնվում խանութի արժեքը նվազեցնելու առաջարկին՝ մտածելով, որ իրեն՝ որպես անշարժ գույքի գործակալի, պետք է գումար տրամադրի: Տեսնելով, որ կողմերն ընդհանուր հայտարարի չեն գալիս՝ ինքը հաշվի առնելով, որ Մ.Սարդարյանը հրաժարվում էր միջնորդվճարից՝ ասելով, որ այն պետք է վճարի վաճառողը և որ Կ.Բեգլարյանը ուներ գումարային խնդիրներ, հայտնել է, որ իրեն գումար պետք չէ: Դրանից հետո, Մ.Սարդարյանը և Կ.Բեգլարյանը պայմանավորվել են, որ խանութի գինը 48.000 ԱՄՆ դոլար: Երկու օր անց, Մ.Սարդարյանը զանգահարել է իրեն և խնդրել ներկա գտնվել կանխավճարի տրամադրման ժամանակ: Այնուհետև, իր ներկայությամբ, Երևանի Պարոնյան 1 հասցեում գտնվող գրասենյակում Մ.Սարդարյանը Կ.Բեգլարյանին տվել է 5.000 Եվրո՝ որպես կանխավճար, Մ.Սարդարյանը խոստացել է մնացած գումարը վճարել մաս-մաս երկու ամսվա ընթացքում: Այս ամենի վերաբերյալ գրվել է ստացական, որը ստորագրել է նաև ինքը: Դրանից հետո այլևս Մ.Սարդարյանին չի հանդիպել: Նշել է նաև, որ ինքն երբեք հավաստիացումներ չի տվել, որ խանութի փաստաթղթերը նորմալ վիճակում են և չէր էլ կարող տալ, քանի որ դրանք չի տեսել, ուղղակի համոզված է եղել, որը խանութը պատկանում է Կ.Բեգլարյանին՝ դրա բանալիները գտնվել են նրա մոտ և տարիներ շարունակ իմացել է, որ խանութի սեփականատերը հենց Կ.Բեգլարյանն է: Հայտնել է, որ Կ.Բեգլարյանի և Մ.Սարդարյանի միջև վարկ վերցնելու խոսակցություն չի եղել, իսկ Կ.Բեգլարյանի կողմից Մ.Սարդարյանից բացի իր ներկայությամբ տրված կանխավճարից այլ գումարներ վերցնելու մասին իմացել է միայն այն ժամանակ, երբ իրեն կանչել են ՀՀ ոստիկանության 6-րդ վարչություն: Մինչ այդ, իրեն մի քանի անգամ զանգահարել է Մ.Մխիթարյանը Կ.Բեգլարյանի հետ կապ հաստատելու խնդրանքով, ինքը սկզբում օգնել նրան և գտել է Կ.Բեգլարյանին, հետագայում Մ.Մխիթարյանը սկսել է վիրավորել իրեն, որից հետո ինքը չի ցանկացել խոսել նրա հետ: Այդ ընթացքում Կ.Բեգլարյանին հարցրել է, թե ինչու խանութը չի ձևակերպել Մ.Սարդարյանի անվամբ, իսկ վերջինս պատասխանել է, որ գումարն ամբողջությամբ չեն վճարել, հետո Կ.Բեգլարյանից տեղեկացել է, որ խանութը պարտքի դիմաց գրավադրվել է և այն վերադարձնելուց հետո միայն կարող է ձևակերպել գնորդի անվամբ, իսկ ավելի ուշ նոր միայն իրեն հայտի է դարձել, որ խանութը ոչ թե կալանքի տակ է, այլ անվանափոխվել է Ս.Դալլաքյանի անվամբ: Հայտնեց նաև, որ ներկա չի գտնվել Կ.Բեգլարյանի կողմից Մ.Սարդարյանին գումար վերադարձնելուն, սակայն ականատես է եղել նրան, որ Կ.Բեգլարյանը նրան է փոխանցել ինքնաթիռի տոմս, որի գումարը Կ.Բեգլարյանը վճարել է երկու օր անց /դատական նիստի արձանագրություն/:
Վկա Սերյոժա Դալլաքյանը ցուցմունք է տվել այն մասին, որ 1988թ.-ից ճանաչել է ներկայումս հանգուցյալ Վլադիմիր Բեգլարյանին, ով ամբաստանյալի հայրն է: 2006-2007թթ. ինքը Կ.Բեգլարյանի հետ եղել է գործնական հարաբերությունների մեջ և գումարներ է ներդրել նրա բիզնեսում շահույթ ստանալու նպատակով: 2007թ. վերջին Կ.Բեգլարյանի ձեռնարկված գործերը հաջողությամբ չեն պսակվել և նա այլևս չի կարողացել իրեն ինչպես շահույթ տրամադրել, այնպես էլ իր ներդրած գումարները վերադարձնել: Փոխադարձ հաշվարկի արդյունքում պարզել են, որ Կ.Բեգլարյանն իրեն պետք է վերադարձնի մոտ 10.600.000 դրամ, ինչը համարժեք է եղել 30.000 ԱՄՆ դոլարին: Թեև Կ.Բեգլարյանի խանութի արժեքը եղել է անհամեմատ ավելի բարձր, քան նրա ունեցած իրեն հանդեպ պարտավորության գումարը, սակայն որպես պարտավորությունը կատարելու երաշխիք՝ Վլադիմիր Բեգլարյանի առաջարկով նրա որդուն՝ ամբաստանյալին պատկանող Երևանի Շիրազի փողոցի 52 շենքի դիմաց գտնվող խանութը առքուվաճառքի պայմանագրով օտարվել է իրեն՝ պայմանով, որ պարտքը վերադարձնելու դեպքում

խանութը կրկին կանվանափոխվի Կ.Բեգլարյանի կամ խանութի գնորդի անվամբ: Այդ ժամանակ, խանութը նույնիսկ հասցե չի ունեցել և ինքը զբաղվել է նաև այդ հարցերով, որից հետո միայն՝ 26.12.2007թ. Կ.Բեգլարյանի հետ խանութի առուվաճառքի պայմանագիր են կնքել: Դրանից հետո, Կ.Բեգլարյանի ասածի համաձայն, ինքը երկու անգամ Ճամբարակից՝ ուր բնակվում է, եկել է Երևան և միասնական տեղեկանք է վերցրել կադաստրից խանութը վաճառելու նպատակով, սակայն գործարք չի կնքվել, քանի որ գնորդները ըստ Կ.Բեգլարյանի հրաժարվել են խանութը գնելուց: 2008թ. ապրիլի վերջին, վերջինս իրեն ասել է, որ Ռուսաստանից գնորդ կա, որը բեհ է տվել և խանութը պետք է գնի: Ինքը նրան հայտնել է, որ գումարները վերցնի, նոր իրեն տեղյակ պահի, քանի որ իր համար դժվար է յուրաքանչյուր անգամ 120 կմ ճանապարհ կտրել, հասնել Երևան, գումար վճարել տեղեկանքը կադաստրից ստանալու համար ու վերջում իմանալ, որ գործարքը չի կայանալու: Դրանից հետո, Կ.Բեգլարյանն իրեն չի զանգահարել և, ինքը տեղյակ չի եղել, որ նա 2008թ. ապրիլ-հունիս ամիսներին խանութը վաճառելու համար ստացել է 44.000 ԱՄՆ դոլար գումար, այդ մասին իրեն հայտնի է դարձել նախաքննության ընթացքում՝ քննիչից: Կ.Բեգլարյանը իրեն երբևէ գումար չի տվել /դատական նիստի արձանագրություն/:
Վկա Գևորգ Փաշոյանը ցուցմունք է տվել այն մասին, որ զբաղվում է անշարժ գույքի առքուվաճառքով և բանկերից վարկի տրամադրման գործերով: 2008թ. մայիս ամսին, կոնկրետ օրը չի հիշում, իրեն է զանգահարել մի տղամարդ, ով ներկայացել է Կարեն անունով և հարցրել՝ զբաղվում է արդյոք վարկի տրամադրման գործերով, ինքը մանրամասները քննարկելու համար նրա հետ հանդիպել է իր կողմից Դավթաշենում վարձակալած բնակարանի շենքի բակում և ծանոթացել Կարեն Բեգլարյանի հետ, ով իրեն ասել է, որ իր ծանոթներից մեկի տունն է ուզում գրավադնել, որոնք իրեն գումար են պարտք, բացի այդ ցանկանում էր իր <<Ֆոլկսվագեն>> ավտոմեքենան և հացի փուռը գրավադնել: Ինքը նրան հայտնել է, որ վարկի գումարի 16%-ը պետք է տրամադրվի իրեն որպես միջնորդավճար: Դրանից մի քանի օր անց, վերջինս հեռախոսով հայտնել է, որ խոսել է տունը գրավ դնող անձանց հետ և պետք է սկսել գործընթացը: Այնուհետև ինքը վերջինիս հետ գնացել է Դավթաշենում գտնվող Միքայելի բնակարան, նրա հետ խոսել է՝ Մ.Սարդարյանը համաձայնվել է վարկի գումարի 16%-ը տրամադրել որպես միջնորդավճար: Հաջորդ օրն ինքը վերջինիս տուն է տարել բնակարան գնահատողներին և բոլոր փաստաթղթերը հավաքելուց հետո դրանք ներկայացրել ՎՏԲ բանկի Ավանի մասնաճյուղ: Միքայել Սարդարյանի և նրա ընտանիքի անդամների ՌԴ քաղաքացիներ լինելու պատճառով, ինքը համաձայնվել է վարկը ձևակերպել քրոջ՝ Շուշանիկ Ռուշանյանի անվամբ: Հետագայում՝ նոտարի մոտ պայմանագիրը կնքելու ժամանակ, Միքայել Սարդարյանը տեղեկացել է, որ ամբողջ վարկը 10.000.000 դրամի չափով պետք է ձևակերպվի իրենց բնակարանի գրավադրմամբ և սկսել է վիճել Կ.Բեգլարյանի հետ, ինքը նրանց խոսակցությունից հասկացել է, որ բնակարանի գրավադրմամբ պետք է 18.000 ԱՄՆ դոլարի չափով վարկ վերցվեր, իսկ մնացած 12.000 ԱՄՆ դոլարի դիմաց վերջինս պետք է ավտոմեքենա գրավադներ: Կ.Բեգլարյանի հետ առանձին խոսելուց հետո, Մ.Սարդարյանը ասել է, որ համաձայն է վարկի նման պայմաններին: Հինգ օր անց, քրոջ հետ գնացել է բանկ, որտեղ տեսել է Կ.Բեգլարյանին, Մ.Սարդարյանին նրա կնոջը և աղջկան: Էդգար Ղազարյանը, ով բանկի աշխատակից էր և իրեն օգնել է վարկը ձևակերպելու հարցում, վերցրել է իրենց հասանելիք 1.600.000 դրամը, իսկ մնացած՝ 8.400.000 դրամը իրենք տվել են Կ.Բեգլարյանին, ով Մ.Սարդարյանի հետ նստած է եղել իր ավտոմեքենայում, նրանք երկուսով հաշվել են գումարները, որից հետո ինքը Կ.Բեգլարյանի առաջարկով Մ.Սարդարյանի ընտանիքին իր ավտոմեքենայով տարել է տուն: Ճանապարհին Մ.Սարդարյանի և նրա կնոջ խոսակցությունից հասկացել է, որ նրանք վարկից

4.000.000 դրամը տվել են Կ.Բեգլարյանին՝ ինչ-որ խանութ են ուզում գնել և որ մնացած գումարը պայմանավորվել են տալ առուվաճառքի պայմանագիրը կնքելուց հետո /գ.թ.135-138/:
Գ.Փաշոյանը Կ.Բեգլարյանի հետ առերես հարցաքննվելիս հիմնականում պնդել է իր ցուցմունքը, սակայն հայտնել է նաև այլ տեղեկություններ, որոնք էապես հակասում են իր նախորդ ցուցմունքին, մասնավորապես. նշել է, որ Կ.Բեգլարյանը ցանկացել է 100.000 ԱՄՆ դոլարի չափով վարկ վերցնել՝ գրավադրելով իր ավտոմեքենան, հացի փուռը և բնակարան, ինքը պատասխանել է, որ վարկը տրամադրելու դեպքում դրա 10%-ը պետք է իրեն հատկացվի որպես միջնորդավճար: Հետո պայմանավորվել են, որ գրավադրվելու է միայն բնակարանը: Նոտարական գրասենյակում պայմանագիրը կնքելուց հետո, Մ.Սարդարյանը վիճել է Կ.Բեգլարյանի հետ կապված, թե վարկի գումարի չափի մասին, թե այլ անձի անվամբ վարկը ձևակերպելու մասին և թե Կ.Բեգլարյանի ավտոմեքենան գրավի առարկա չդարձնելու հանգամանքի վերաբերյալ: Դրան ականատես են եղել նաև բանկի ներկայացուցիչը և էդգար Ղազարյանը, վերջինս ասել է, որ տեսնելով Կ.Բեգլարյանի և Մ.Սարդարյանի խոսակցությունը՝ բանկի ներկայացուցիչը որոշել է չեղյալ համարել պայմանագիրը, իսկ որպես խնդրի շտկում առաջարկել է միջնորդավճար տրամադրել ոչ թե վարկի գումարի 10%-ը, այլ 16%-ը: Ինքն այդ մասին տեղեկացրել է Կ.Բեգլարյանին, որից հետո իրեն է զանգահարել Մ.Սարդարյանը և ասել, որ համաձայն է վարկի գումարի 16%-ը տրամադրել որպես միջնորդավճար: Վարկը ստանալու օրը, ինքը քրոջ հետ գնացել է բանկ, այնտեղ հանդիպել է Կ.Բեգլարյանին, Մ.Սարդարյանին, նրա կնոջը և դստերը: Իր քույրը ստացել է 10.000.000 դրամ վարկի գումարը, որից հետո էդգար Ղազարյանը վերցրել է 1.600.000 դրամ իրենց միջնորդավճարը, իսկ մնացած 8.400.000 դրամը տվել է իրեն, ինքը քրոջ հետ դուրս է եկել բանկից և գումարը փոխանցել է Մ.Սարդարյանին, ով նստել է Կ.Բեգլարյանի ավտոմեքենան և նրանք հաշվել են գումարը /գ.թ. 143-145/:
Վկա Նատալյա Գրիգորյանը ցուցմունք է տվել այն մասին, որ 2008թ. իր ծնողները՝ Միքայել Սարդարյանը և Մարինա Մխիթարյանը, որոշել են խանութ գնել և բրոքեր Սերգեյ Ղազարյանի միջոցով ծանոթացել են Կարեն Բեգլարյանի հետ, ով Երևանի Շիրազի 52-րդ հասցեում խանութ էր վաճառում: Ինքը ծնողների խոսակցություններից լսել է, որ Կ.Բեգլարյանն առաջարկել է վարկ ձևակերպել 18.000 ԱՄՆ դոլարի չափով, քանի որ նրանց գումարները բավարար չեն եղել 48.000 ԱՄՆ դոլար արժեքով խանութը ձեռք բերելու համար: Գործարքը կնքելիս՝ նոտարական գրասենյակում, իրենց հայտնի է դարձել, որ իրենց բնակարանի դիմաց տրամադրվող վարկը 30.000 ԱՄՆ դոլար է, իրենք վրդովվել են, քանի որ նախապես գիտեին որ վարկը լինելու է 18.000 ԱՄՆ դոլարի չափով, սակայն իր ծնողները խորհրդակցելուց հետո համաձայնվել են՝ մտածելով, որ միևնույն է պետք է խանութի ամբողջ գումարը տան և ավելի լավ է այդ չափով վարկը ստանալ այն վճարել և խանութը անվանափոխել իրենց անվամբ: Վարկը ստանալու օրը, բանկի աշխատակիցը դուրս է բերել գումարը և տարել Կ.Բեգլարյանի ավտոմեքենայի մեջ, որտեղ վերջինս հաշվել է որոշակի գումար, իսկ մյուս մասը տվել է իր հորը: Հետագայում հորից իմացել է, որ բանկից դուրս են բերել ընդամենը 8.400.000 դրամ՝ 10.000.000 դրամի փոխարեն, որից Կ.Բեգլարյանն իրեն է պահել 4.000.000 դրամ, իսկ 4.400.000 տվել է իր հորը: Նույն օրը, մի քանի ժամ անց, վերջինս եկել է իրենց տուն և խնդրել տրամադրել մնացած գումարը, նա ասել է, որ ամեն ինչը կնշի ստացականի մեջ՝ նշելով խանութի վերաձևակերպման ամսաթիվը ու շեշտել, որ դա ունի իրավաբանական ուժ: Այդ պահին իրենց մտքով անգամ չէր անցնում, որ նա պատրաստվում է իրենց խաբել: Գումարը վերցնելուց հետո, Կ.Բեգլարյանը ստացականում նշել է և պարտավորվել 16.06.2008թ. խանութը վերաձևակերպել իրենց անվամբ: Մինչ գնալը, նա առաջարկել է նաև նոտարական

վավերացմամբ պայմանագիր կնքել, պատճառաբանելով՝ որ իրենք չանհանգստանան, որ գումարը գտնվում է իր մոտ: Երկու օր անց, Կ.Բեգլարյանը եկել է իրենց հետևից և ինքը հոր հետ միասին գնացել են նոտարական գրասենյակ պայմանագիրը կնքելու: Պայմանագրի մեջ նշված գումարի չափը՝ 15.000.000 դրամը, նույնպես առաջարկել է Կ.Բեգլարյանը: Խանութը ձևակերպելու օրը՝ 16.06.2008 թ-ից հետո, իր ծնողների մոտ խնդիրներ են առաջացել՝ իր հայրը ամեն օր գնում էր նրա գրասենյակ և ամեն օր Կ.Բեգլարյանը ինչ-որ պատճառաբանություններ է բերել ձևակերպումը հետաձգելու համար: Ինքն ականատես է եղել այդ երեք տարիների ընթացքում իր ծնողներն ինչպես են տանջվել, նույնիսկ իր հայրը սրտի նոպաներ է ունեցել, ինքը ստիպված է եղել առավոտից երեկո աշխատել, որպեսզի կարողանա կերակրել իր երեխային: Հայտնել է նաև, որ խանութը այլ անձին պատկանելու մասին տեղեկացել են միայն այն ժամանակ, երբ իր հայրը Կ.Բեգլարյանի դեմ հայցով դիմել է դատարան և հակադիր կատարողները պարզել են, որ խանութը դեռևս 2007թ. վաճառվել է: Նշել է նաև, որ խանութը ձեռք բերելու համար իր հայրը նախատեսում էր վաճառել ՌԴ-ում իրենց պատկանող բնակարանը և միգուցե վաճառքի գումարով պետք է մարեր վերցրած վարկը /դատական նիստի արձանագրություն/:
Նախաքննական մարմինը 25.04.2011թ. որոշում է կայացրել ապացույց ճանաչել ստացականը, համաձայն որի այն գրվել է 16.08.2008թ Կարեն Բեգլարյանի և Միքայել Սարդարյանի կոմից, Սերգեյ Ղազարյանի ներկայությամբ, ձեռագիր տեքստով: Նշված ստացականի համաձայն, Կ.Բեգլարյանը Միքայել Սարդարյանից վերցրել է 5.000 Եվրոին համարժեք դրամ՝ նախավճարի տեսքով Երևանի Շիրազի 52-րդ հասցեում գտնվող անշարժ գույքի վաճառքի դիմաց, որի ամբողջ գինը կազմում է 48.000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ: Միքայել Սարդարյանը պարտավորվել է մնացած գումարը վճարել երկու ամսվա ընթացքում՝ սեփականության իրավունքը ձեռք բերելու համար: Կ.Բեգլարյանը պարտավորվել է մնացած գումարը ստանալու պահին նոտարական վավերացմամբ որպես սեփականատեր ճանաչել և տալ սեփականության իրավունքը Միքայել Սարդարյանին: Կազմված փաստաթղթի հակառակ էջում կատարվել են լրացումներ, համաձայն որոնց 18.04.2008, 24.04.2008 և 26.04.2008 թվականներին Կ.Բեգլարյանը ստացել է համապատասխանաբար 500 Եվրոին համաժեք 245.000 դրամ, 1.000 ԱՄՆ դոլար, 8.800 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ: 26.04.2008թ. դրությամբ. ընդհանուր վերցրած գումարի չափը կազմել է 5.794.000 դրամ: Այնուհետև առկա է հետևյալ նշումը՝ <<Ես Բեգլարյան Կարենս ստացա Միքայել Սարդարյանից ևս 8.000.000 դրամ խանութի դիմաց և պահանջ չունեմ պարտավորվում եմ մինչև 16.06.2008թ. խանութի սեփականության իրավունքը հանձնել Միքայել Սարդարյանին, հակառակ դեպքում վերադարձնել ամբողջ գումարը իմ կողմից վերցրած, որը նշված է տվյալ ստացականի մեջ. 09.06.2008թ. գրված է իմ ձեռքով, որի համար ստորագրում եմ և կրում եմ պատասխանատվություն Բեգլարյան Կարեն /ստորագրություն/ 09.06.2008թ.>> /գ.թ. 7/:
Երևանի Աջափնյակ և Դավթաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 16.10.2009թ. թիվ ԵԱԴԴ 0231/02/09 գործով կայացված վճռի համաձայն, Կարեն Բեգլարյանից հօգուտ Միխաիլ Սարդարյանի որոշվել է բռնագանձել 44.214 ԱՄՆ դոլարին համարժեք 13.794.000 դրամ /գ.թ.17-19/:
11.06.2008թ Նատալյա Գրիգորյանի և Կարեն Բեգլարյանի միջև նոտարական վավերացմամբ կնքվել է փոխառության պայմանագիր, ըստ որի Կ.Բեգլարյանը Ն.Գրիգորյանից փոխառությամբ՝ մեկ ամիս ժամկետով վերցրել է 15.000.000 դրամ գումար /գ.թ.64/:
Նախաքննական մարմինը 25.02.2011թ. որոշմամբ /գ.թ.121/ որպես ապացույց է ճանաչել նաև քրեական գործի 73-ից 76-րդ էջերում առկա <<դիմում>> վերտառությամբ փաստաթուղթը՝ նշելով, որ այն Մաշտոցի քննչական բաժին է ուղարկել Միքայել Սարդարյանը ու պատճառաբանել, որ այդ դիմումով հաստատվում են քրեական

գործի համար կարևոր նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ:
Առաջին ատյանի դատարանում ամբաստանյալի շահերի պաշտպանը միջնորդություն է ներկայացրել ապացույց ճանաչված դիմումը անթույլատրելի ապացույց ճանաչելու վերաբերյալ՝ պատճառաբանելով, որ քննիչի կողմից որոշումը կայացնելիս խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 126 հոդվածը, չի ստուգվել այդ փաստաթղթի ծեռք բերման աղբյուրը, եթե նույնիսկ այդ փաստաթուղթը կեղծված չէ և գրված է Միքայել Սարդարյանի կողմից, ապա այն ապացուցողական նշանակություն չի կարող ունենալ, դրանով խախտվում են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6 հոդվածի 3-րդ մասի <<դ>> կետը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 216 հոդվածի 1-ին մասը, 65 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը և 126 հոդվածը, ուստի նույն օրենսգրքի 105 հոդվածի 1-ին մասի 2-րդ և 5-րդ կետերի ուժով այն պետք է հանել քրեական գործով ապացույցների շրջանակից:
Տուժող Մարինա Մխիթարյանը առաջին ատյանի դատարանում խնդրել է միջնորդությունը մերժել՝ նշելով, որ ապացույց ճանաչված դիմումը գրել է իր ամուսինը և ՌԴ-ից ուղարկել քննիչին ֆաքսի միջոցով, իր ամուսինը այն գրել է ռուսերեն լեզվով, այն թարգմանվել է հայերեն արտոնագիր ունեցող թարգմանչի կողմից, որից հետո իր ամուսինը ստորագրել է և ուղարկել:

Մեղադրողը միջնորդության դեմ առարկել է նշելով, որ պաշտպանական կողմը շփոթել է ապացույցների տեսակները՝ վկայի ցուցմունքը որպես ապացույցի տեսակ և այլ փաստաթուղթը որպես ապացույցի տեսակ: Պաշտպանի վկայակոչած դրույթները վերաբերում են վկայի ցուցմունքին որպես ապացույցի տեսակի և քանի որ Մ.Սարդարյանից ցուցմունք չի վերցվել հետևաբար նրա հետ առերես հարցաքննվելու կամ նրան հարցեր տալու իրավունք Կ.Բեգլարյանը ծեռք չի բերել, ուստի դրա խախտման մասին խոսք լինել չի կարող: Քննիչը որպես ապացույց է ճանաչել Մ.Սարդարյանի կողմից ուղարկված դիմումը, որպես այլ փաստաթուղթ և այն ինքնուրույն ապացույցի տեսակ է: Իսկ ծեռք բերման աղբյուրը հայտնի է տուժողը հայտնեց, որ այն ուղարկել է իր ամուսինը:
Խնդրեց միջնորդությունը մերժել:
Առաջին ատյանի դատարանը, քննության առնելով ներկայացված միջնորդությունը, իրավացիորեն գտել է, որ այն ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.
ՀՀ Սահմանադրության 19 հոդվածի համաձայն, <<Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք (…)>>:
ՀՀ Սահմանադրության 22 հոդվածի համաձայն <<(…) Արգելվում է օրենքի խախտմամբ ծեռք բերված ապացույցների օգտագործումը (…)>>:
<<Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին>> եվրոպական կոնվենցիայի 6 հոդվածի 1-ին կետի համաձայն, <<Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք (…) >>:
ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 104 հոդվածի 1-ին մասի համաձայն <<Քրեական գործով ապացույցներ են ցանկացած փաստական տվյալները, որոնց հիման վրա օրենքով որոշված կարգով հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը պարզում են քրեական օրենսգրքով նախատեսված

	արարքի առկայությունը կամ բացակայությունը, այդ արարքը կասկածյալի կամ մեղադրյալի կողմից կատարելը կամ չկատարելը և մեղադրյալի մեղավորությունը կամ անմեղությունը, ինչպես նաև գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ>>: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105 հոդվածի 1-ին մասի 2-րդ և 5-րդ կետերի համաձայն <<1. Քրեական գործով վարույթում մեղադրանքի հիմքում չեն կարող դրվել և որպես ապացույց օգտագործվել այն նյութերը, որոնք ձեռք են բերվել՝ (…) 2) կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքի, դատավարության լեզվին չտիրապետող անձանց իրավունքների՝ սույն օրենսգրքով նախատեսված լրացուցիչ երաշխիքների էական խախտմամբ. (…) 5) քննչական կամ այլ դատավարական գործողության կատարման կարգի էական խախտմամբ. (…) »: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105 հոդվածի 2-րդ մասի համաձայն, <<Ապացույցներ ձեռք բերելիս էական են այն խախտումները, որոնք, դրսևորվելով մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների կամ սույն օրենսգրքի որևէ պահանջի խախտմամբ, դատավարության մասնակիցներին՝ օրենքով երաշխավորված իրավունքների զրկմամբ կամ սահմանափակմամբ կամ որևէ այլ կերպ ազդել են կամ կարող էին ազդել ստացված փաստական տվյալների հավաստիության վրա>>: Նշված իրավադրույթներից հետևում է, որ որպես քրեական օրենսգրքով նախատեսված արարքի առկայությունը կամ բացակայությունը, այդ արարքը կասկածյալի կամ մեղադրյալի կողմից կատարելը կամ չկատարելը և մեղադրյալի մեղավորությունը կամ անմեղությունը, ինչպես նաև գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքները պարզելու միջոց կարող են օգտագործվել միայն այնպիսի ապացույցներ, որոնք ձեռք են բերվել, ամրագրվել և գործին կցվել քրեադատավարական օրենքով սահմանված և թույլատրելի համարվող կարգով: Ապացույցների ձեռքբերման և ամրագրման թույլատրելիությունը կարգավորող նորմերից հետևում է, որ որպես ապացույց չեն կարող օգտագործվել քննչական կամ այլ դատավարական գործողության կատարման կարգի էական խախտմամբ ձեռք բերված փաստական տվյալները, հատկապես եթե դրանք իրենց հերթին հանգեցրել են դատավարության մասնակիցների իրավունքների էական խախտման, ազդել են կամ կարող էին ազդել ստացված փաստական տվյալների հավաստիության վրա: Այսպիսով, ապացույցների հավաքմանը և ստուգմանն ուղղված դատավարական գործողությունների կատարման ընթացքում պետք է ապահովվի անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Հակառակ դեպքում, կատարված դատավարական գործողության արդյունքում ստացված փաստական տվյալը, անկախ գործի համար ունեցած նշանակությունից, կորցնում է իր իրավական ուժը, ապացուցողական նշանակությունը և չի կարող ընդգրկվել կոնկրետ քրեական գործով ապացույցների համակցության մեջ և դրվել մեղադրանքի հիմքում: Կոնկրետ դեպքում առաջին ատյանի դատարանը իրավացիորեն գտել է, որ չի ստուգվել ապացույց ճանաչված փաստաթղթի ձեռք բերման աղբյուրը: Ինչպես ապացույց ճանաչելու որոշման մեջ, այնպես էլ ողջ քրեական գործի նյութերում չկա որևէ նշում թե երբ, ում կողմից, ինչ ճանապարհով է վարույթն իրականացնող մարմնին տրամադրվել Մ.Սարդարյանի դիմումը, որը ճանաչվել է որպես ապացույց, նույնիսկ հայտնի չէ այդ դիմումի հեղինակն իրոք Մ.Սարդարյանն է թե ոչ, ում վստահությունը չարաշահելու մեջ մեղադրվում է Կ.Բեգլարյանը: Այսինքն, նախաքննական մարմինը անհայտ ծագումով դիմումը ճանաչել է որպես ապացույց, ուստի այդ ապացույցը թույլատրելի չէ:

Ավելին՝ համաձայն <<Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին>> եվրոպական կոնվենցիայի 6 հոդվածի 3-րդ կետի, <<դ>> ենթակետի, քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները (...) հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության,(…):
Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, կիրառելով և մեկնաբանելով կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի <<դ>> ենթակետը, եկել է այն ընդհանուր հետևության, որ եթե մեղադրյալին դատավարության որևէ փուլում հնարավորություն չի տրվել հարցեր ուղղելու իր դեմ ցուցմունք տված անձին, ապա նա զրկվում է արդար դատաքննության իրավունքից /Ռինտերպերտինգերն ընդդեմ Ավստրիայի, գանգատ թիվ 9120/80, 1986թ. նոյեմբերի 24-ի վճիռ, 31-33 կետեր/: Իսկ Սադակը և ուրիշներն ընդդեմ Թուրքիայի /թիվ 1/ գործով վճռում Եվրոպական դատարանը զարգացրել է Ռինտերպերտինգերի գործով ձևակերպված իրավական դիրքորոշումը և սահմանել, որ անձի դատապարտումը չի կարող ամբողջապես կամ վճռական չափով հիմնվել այնպիսի անձի հայտնած տվյալների վրա, որի հարցեր ուղղելու համարժեք հնարավորություն պաշտպանության կողմը չի ունեցել /գանգատներ թիվ 29900/96 և այլն, 17.07.2001թ. վճիռ, կետ 65/:
Ռինտերպերտինգերի և Սադակի գործերով Եվրոպական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները ոչ թե կոնկրետ գործի փաստերով պայմանավորված դատողություններն են, այլ Եվրոպական դատարանի կայուն նախադեպային պրակտիկայի արտահայտություն: Դրա մասին է վկայում այն, որ նշված իրավական դիրքորոշումները հետագայում բազմիցս վերահաստատվել ու կիրառվել են, մասնավորապես, հետևյալ գործերով. Հուլկի Գյունեշն ընդդեմ Թուրքիայի, գանգատ թիվ 28490/95, 19.06.2003թ. վճիռ, 53-54 կետեր, Գոսսան ընդդեմ Լեհաստանի, գանգատ թիվ 47986/99, 09.01.2007թ. վճիռ, 54-55 կետեր, Բալսիտե-Լիդեիկյենեն ընդդեմ Լիտվայի, գանգատ թիվ 72596/01, 04.11.2008թ. վճիռ, կետ 86, Չական ընդդեմ Ալբանիայի, գանգատ թիվ 44023/02, 08.12.2009թ. վճիռ, կետ 102, Խամեշինն ընդդեմ Ռուսաստանի, գանգատ թիվ 18487/03, 04.03.2010թ. վճիռ, կետ 32, Ա.Ս.-ն ընդդեմ Ֆինլանդիայի, գանգատ թիվ 40156/07, 28.09.2010թ. վճիռ, կետ 62, և այլն:
Ընդ որում, Եվրոպական դատարանի նշված վճիռներում խոսքը վերաբերում է ոչ թե ցուցմունքներին, այլ հայտնած տվյալներին: Այլ կերպ՝ էական չէ, թե ներպետական իրավունքում ինչպես կանվանվեն տվյալների ձևակերպման դատավարական միջոցները՝ ցուցմունք, այլ փաստաթուղթ, բացատրություն, թե այլ կերպ: Անհրաժեշտ է միայն, որ այդպիսի տվյալները ներկայացվեն դատարանին, իսկ դատարանը ձեռնամուխ լինի այդ փաստական տվյալները թույլատրելիության տեսանկյունից գնահատելուն, ուստի մեղադրողի այն պատճառաբանությունը, որ Կ.Բեգլարյանի որևէ իրավունք չի խախտվել և որպես այլ փաստաթուղթ ճանաչված դիմումը ունի ապացուցողական ուժ, անհիմն է:
Վերը նշված թույլատրելի ապացույցների հիման վրա դատարանը պետք է իրավական գնահատական տա այն հարցին, թե Կարեն Բեգլարյանի արարքն արդյոք համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներին, թե ոչ:
ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդվածի համաձայն՝ խարդախությունը՝ խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով ուրիշի գույքի զգալի չափերով հափշտակությունն է կամ ուրիշի գույքի նկատմամբ իրավունք ձեռք բերելն է:
ՀՀ վճռաբեկ դատարանը Լիա Ավետիսյանի վերաբերյալ թիվ ԵԿԴ/0176/01/09 քրեական գործով 24.02.2011թ. որոշմամբ արտահայտել է իրավական դիրքորոշում, համաձայն որի խարդախությունը կատարվում է միայն ուղղակի դիտավորության

մեղքի ձևով, հանցավորը պետք է գիտակցի, որ խաբեության կամ վստահությունը չարաշահելու միջոցով հափշտակում է ուրիշի գույքը, ինչպես նաև պետք է նախատեսի և ցանկանա դա: Խարդախության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է նաև շահադիտական նպատակի առկայությամբ, այսինքն՝ մինչև գույքը վերցնելը կամ գույքին տիրանալը հանցավորն ի սկզբանե նպատակ է ունենում հափշտակելու այն, չվերադարձնելու գույքը, չկատարելու խոստումը կամ պայմանագրային պարտավորությունները: Հակառակ դեպքում, երբ գույքը չվերադարձնելու, խոստումը կամ պարտավորությունները չկատարելու դիտավորությունն առաջանում է գույքը վերցնելուց հետո անկախ շարժառիթից, խարդախության հանցակազմը բացակայում է: Խարդախության միջոցով ուրիշի գույքը հափշտակելու ուղղակի դիտավորության և գույքը հափշտակելու շահադիտական նպատակի առկայության կամ բացակայության մասին դատարանի հետևությունները պետք է հիմնված լինեն գործով ձեռք բերված ապացույցների համակցության վրա: Նշված ապացույցների գնահատման արդյունքում դատարանը յուրաքանչյուր դեպքում պետք է հաստատված համարի, որ անձն ի սկզբանե նպատակ է ունեցել խարդախության միջոցով հափշտակել ուրիշի գույքը, և եթե ապացուցվի, որ ունեցել է, ապա խարդախության հանցակազմն առկա է: Ընդ որում, եթե ապացույցների բավարար համակցությամբ և հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշով չի հիմնավորվում, որ շահադիտական նպատակը ծագել է համապատասխան գործարքի կնքումից առաջ, ապա նման դեպքերում խարդախության հանցակազմ առկա չէ:
Ներքին համոզմունք ձևավորելու համար դատարանը պատճառաբանված կերպով հատկանշական է համարել նաև այն, որ կողմերի միջև խանութի վաճառքի վերաբերյալ գործարք կնքելու համաձայնությունը կայացվել է 2008թ. ապրիլ ամսին, իսկ ամբաստանյալին գումարի տրամադրումը տեղի է ունեցել նույն թվականի ապրիլ-հունիս ամիսներին, սակայն հանցագործության մասին հաղորդում է ներկայացվել միայն 2010թ. նոյեմբերին: Դատարանը իրավացիորեն արձանագրել նաև, որ մինչև Մարինա Մխիթարյանի կողմից հաղորդում ներկայացնելը, նրա ամուսինը քաղաքացիական հայց է ներկայացրել Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան ընդդեմ Կարեն Բեգլարյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին: Դատարանը բավարարել է քաղաքացիական հայցը և հօգուտ Միխաիլ Սարդարյանի Կարեն Բեգլարյանից բռնագանձել է 13.794.800 դրամ՝ այնքան գումար ինչքան սույն քրեական գործի մեղադրանքի ծավալն է, այսինքն՝ հանցագործության օբյեկտիվ կողմը նույնական է նույն անձանց միջև հարուցված քաղաքացիական հայցի առարկայի հետ:
Վստահությունը չարաշահելու առումով հատկանշական է ՀՀ վճռաբեկ դատարանի վերը նշված որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումը նաև այն մասին, որ թեև խարդախության պարագայում առկա է գույքի սեփականատիրոջ կողմից հանցագործին գույքը կամ դրա նկատմամբ իրավունքները փոխանցելու կամային ակտ, սակայն գույքը կամ դրա նկատմամբ իրավունքները փոխանցելու ակտի կամային բնույթը սեփականատիրոջ գիտակցության և կամքի վրա հանցագործի ունեցած ներգործության հետևանք է: Այս կապակցությամբ էական նշանակություն կարող է ունենալ, թե գույքն ուրիշին հանձնելու գործում ով է նախաձեռնություն դրսևորել: Արդյոք գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքները հանձնելու տուժողի մտադրությունն առաջացել է հանցավորի կողմից նրան համոզելու և հորդորելու արդյունքում: Վստահությունը չարաշահելն ուրիշի գույքին տիրանալու կամ դրա նկատմամբ իրավունք ձեռք բերելու նպատակով հանցավորի կողմից, նրա և գույքի սեփականատիրոջ կամ գույքը տիրապետողի միջև ձևավորված վստահության հարաբերությունների օգտագործումն է: Արարքը խարդախություն

որակելու համար բավարար չէ, որ անձն իր արարքներով կամ որոշակի հանգամանքների բերումով տուժողի մոտ վստահություն վայելի, այլ անհրաժեշտ է, որպեսզի վերջինս համոզի տուժողին իրեն փոխանցել գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքները:
Կոնկրետ քրեական գործով հիմնավորվել և հաստատվել է, որ ամբաստանյալը Մ.Սարդարյանի հետ ծանոթացել է վերջինիս նախաձեռնությամբ՝ Երևանի Շիրազի փողոցի 52/6 հասցեում գտնվող խանութը վաճառելու կապակցությամբ, ընդ որում Մ.Սարդարյանն է Կ.Բեգլարյանին առաջարկել և սակարկելով գինը՝ պայմանավորվածություն ձեռք բերել, որ խանութի համար պատրաստ է վճարել 48.000 ԱՄՆ դոլար գումար՝ երկու ամսվա ընթացքում և հակառակը՝ ձեռք չի բերվել որևէ ապացույց, որ խանութը Մ.Սարդարյանին վաճառելու նախաձեռնությունը եղել է Կ.Բեգլարյանինը, ու վերջինս մինչև Մ.Սարդարյանից գումարները վերցնելն ի սկզբանե նպատակ է ունենցել հափշտակել դրանք և չկատարել խոստումը կամ ստանձնած պարտավորությունը:
Ավելին, գործի քննությամբ հիմնավորվել է, որ Կ.Բեգլարյանը խանութը վաճառելու բանակցությունները վարել է հենց Մ.Սարդարյանի հետ, այլ ոչ թե նրա կնոջ, ի դեպ նախաքննական մարմինը նույնպես հաստատված է համարել այդ փաստը, քանի որ մեղադրանքի որոշման մեջ ուղղակի արձանագրել է, որ Կ.Բեգլարյանը չարաշահել է Մ.Սարդարյանի վստահությունը:
Հատկանշական է նաև, որ գործի քննությամբ հիմնավորվել է, որ Կ.Բեգլարյանը տուժող ճանաչված Մ.Մխիթարյանին հանդիպել է միայն վարկը տրամադրելու օրը՝ 09.06.2008թ., երբ արդեն Մ.Սարդարյանը նրան հանձնած է եղել ընդհանուր առմամբ 18.000 ԱՄՆ դոլար գումար և պայմանավորվածություն է ձեռք բերվել ստացած վարկը Կ.Բեգլարյանին հանձնելու հարցում: Փաստորեն, նախաքննական մարմնի կողմից վերջինիս առաջադրված մեղադրանքի հիմքում դրված ապացույցները եթե ոչ բացառապես, ապա մեծամասամբ կառուցված են մի անձի ցուցմունքի վրա, ով ներկա չի գտնվել ամբաստանյալի և Մ.Սարդարյանի միջև տեղի ունեցող պայմանավորվածությունների ձեռք բերման գործընթացին:
Այդուհանդերձ, վերլուծելով Մ.Մխիթարյանի կողմից գործի նախաքննության և առաջին ատյանի դատարանում տրված ցուցմունքներն, Դատարանն իրավացիորեն ակնհայտ է համարել, որ վերջինս կամ տեղյակ չի եղել իր ամուսնու և Կ.Բեգլարյանի ձեռք բերված պայմանավորվածությունների մասին և փորձում է հիմնավորել հակառակը, կամ էլ տեղյակ է եղել, սակայն ներկայումս փորձում է խեղաթյուրել դրանք:
Այսպես՝ քրեական գործի քննության ընթացքում տուժողը մշտապես պնդել է, որ իր ամուսինն իրեն տեղեկացրել է Կ.Բեգլարյանի հետ ձեռք բերված պայմանավորվածությունների մասին, սակայն գործի քննության տարբեր ժամանակաշրջանում տվել է միմյանց հակասող և իրարամերժ ցուցմունքներ:
Գործի նախաքննության ընթացքում տուժողը ցուցմունք է տվել, որ Կ.Բեգլարյանը խանութի ձևակերպումը չկատարելուց հետո իր ամուսնուն է տվել երկու անգամ 600.000-ական դրամ: Առաջին ատյանի դատարանում չժխտելով նույն հանգամանքը՝ տուժողը հայտնել է, որ Կ.Բեգլարյանը այդ կերպ փորձել է պատրանք ստեղծել, որ հափշտակություն չի կատարել և իր ամուսնուն առաջարկել է անձամբ մարել վարկի բանկային տոկոսները:
Տուժողի այս ցուցմունքը հակասում է իր իսկ տրված այլ ցուցմունքներին, քանի որ ըստ նրա բանկին վճարվելիք գումարները յուրաքանչյուր ամիս կազմել են մոտ 300.000 դրամ, այդ թվում մայր գումարի ու տոկոսի մարումը և եթե ամբաստանյալը խոստում է տվել մարել վարկի տոկոսները, ապա նա պետք է վճարեր միայն տոկոսները, այլ ոչ թե ամսական 600.000 դրամ, ինչը անհամեմատ մեծ է յուրաքանչյուր ամիս բանկին վճարվող վարկի մայր գումարի և տոկոսների հանրագումարից, բացի այդ, տուժողը նշել է, որ իրենք մարել են վարկը ժամանակացույցին համապատասխան և ամբաստանյալի տված գումարներն ամբողջությամբ չեն ուղղել

վարկի մարմանը: Ամբաստանյալի ցուցմունքը, որ Մ.Սարդարյանն է հրաժարվել խանութը ձեռք բերելուց և իրեն առաջարկել է յուրաքանչյուր ամիս վճարել 2.000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ՝ մինչև տրված ամբողջ գումարի վերադարձը և այն փաստը, որ նա վճարել է երկու ամիս 600.000-ական դրամ ոչ միայն հերքում է տուժողի պատճառաբանությունը, որ նա խոստացել է մարել վարկի տոկոսները, այլ նաև հաստատում, որ եղել է պայմանավորվածություն ամսական 600.000 դրամ վճարելու: Առաջին ատյանի դատարանում տուժողն ընդունել է, որ Կ.Բեգլարյանն իր ամուսնուն է տրամադրել նաև ինքնաթիռի տոմս, որի արժեքը, ըստ իրեն, կարող էր կազմել 400-ից 500 ԱՄՆ դոլար, նշել է, որ տեղյակ չէ հետադարձ տոմսը Կ.Բեգլարյանը նույնպես տրամադրել է թե ոչ, նշել է նաև, որ տեղեկություն չունի՝ Կ.Բեգլարյանը ճանապարհածախսի գումար տվել է իր ամուսնուն, թե ոչ: Այսինքն ամբաստանյալի պատճառաբանությունը, որ հինգ ամիսների ընթացքում ինքը Մ.Սարդարյանին է տվել ընդհանուր առմամբ 2.850.000 դրամ գումար, որի մեջ ներառված է նաև ինքնաթիռի տոմսերի արժեքը չի հերքվել, սակայն Դատարանը չի էլ կարող հաստատված համարել, որ ամբաստանյալը այդ չափով գումար է վերադարձրել: Հատկանշական է, որ 26.04.2008թ. դրությամբ խանութի դիմաց չվճարված գումարը կազմել է 30.000 ԱՄՆ դոլար ինչը հենց համարժեք էր 10.000.000 դրամին, որի չափով էլ վարկ է ձևակերպվել, հետևաբար տուժողի այն պնդումը, որ մինչ ամբաստանյալին իր ամուսնու կողմից կանխավճար տրամադրելը, Կ.Բեգլարյանն է համոզել, որ իրենք վարկ վերցնեն որևէ հիմնավորում ունենալ չի կարող, առավել ևս այն դեպքում, երբ տուժողը հայտնեց, որ իրենք ՌԴ-ում ունեին բնակարան, որը պետք է վաճառեին և այդ գումարով էին պատրաստվում խանութ գնել և գումարը երկու ամսում վճարելու պայմանավորվածությունը ձեռք է բերվել բնակարանը այդ ընթացքում վաճառելու ակնկալիքով: Մ.Մխիթարյանը նշել է, որ իրենք ի սկզբանե չեն իմացել, որ 1.600.000 դրամ պետք է որպես միջնորդավճար տրամադրեն Գ.Փաշոյանին և այդ մասին տեղեկացել են միայն այն ժամանակ, երբ բանկի աշխատակիցը բանկից դուրս է բերել ընդամենը 8.400.000 դրամ, ինչի կապակցությամբ իր ամուսինը զարմանք է արտահայտել: Մինչդեռ նախաքննության ընթացքում հայտնել է հակառակը՝ <<Կ.Բեգլարյանը ամուսնուս ասել էր, որ 10.000.000 դրամ վարկից 1.600.000 դրամ պետք է տրվի կամ Գևորգին կամ բանկի աշխատողին, ես կոնկրետ չեմ հիշում, որպես միջնորդավճար: 09.06.2008թ. մենք <<ՎՏԲ>> բանկից Ավանի ստացանք 10.000.000 դրամ վարկը, որից հետո մեքենայի մեջ իմ և ամուսնուս ներկայությամբ Կ.Բեգլարյանը մեքենայի մեջ 1.600.000 դրամ հաշվեց և տվեց ինչքան հիշում եմ Գևորգին>>: Մ.Մխիթարյանն իր ցուցմունքների այս էական հակասությունը որևէ կերպ չի կարողացել բացատրել՝ մի դեպքում նշել է, որ գումարը հաշվել են ավտոմեքենայի մեջ, ինքն այնտեղ չի գտնվել և չէր կարող տեսնել, թե ինչքան են գումար բերել և ով ում որքան գումար է տվել, հետո նշել է, որ քննիչն է սխալ արձանագրել, ինքը նման բան չի նշել, մյուս դեպքում հայտնել է, որ հայերեն լեզվին լավ չի տիրապետում, ինչի արդյունքում այդպես է արձանագրվել: Ուշագրավ է նաև, որ նախաքննության ժամանակ ցուցմունք տալիս /գ.թ. 47-50/ տուժողն իր ձեռքով գրել է <<Ես տիրապետում եմ հայերեն և ռուսերեն գրավոր լեզուներին, ավելի վարժ գրում եմ ռուսերեն, սակայն հայերեն կարդում և գրում եմ և թարգմանչի կարիք չունեմ: Խնդրում եմ ցուցմունքս արձանագրի քննիչը>>, ցուցմունքի վերջում ավելացրել <<ցուցմունքս կարդացի, գրված է իմ պատմածից, ճիշտ է որի համար ստորագրում եմ>>: Նշվածը հրապարակելուց հետո տուժողը հայտնել է <<թող լինի այդպես, որ ի սկզբանե իմացել ենք, որ պետք է 1.600.000 տրվի որպես միջնորդավճար, ինձ դա չի հետաքրքրում իմացել ենք թե ոչ, իմ ցանկությունն է որպեսզի մեր գումարը վերադարձվի>>: Նույն ցուցմունքով տուժողը նշել է, որ բանկից գումարը ստանալուց և

Կ.Բեգլարյանին այն տրամադրելուց հետո, պետք է նրան պարտք մնայն 4.000 ԱՄՆ դոլար, ինչը նույնպես հաստատում է, որ Մ.Մխիթարյանը մինչև գումարը ստանալը տեղյակ է եղել, որ ստացվող գումարի 16% պետք է տրամադրեին միջնորդին: Իսկ առաջին ատյանի դատարանում նա հետևողականորեն պնդել է, որ ոչ միայն չեն իմացել միջնորդավճարի մասին, այլև բանկից գումարը դուրս բերելուց այն արդեն իսկ եղել է 8.400.000 դրամ:
Մ.Մխիթարյանը նախաքննության ընթացքում հայտնել է՝ <<Նշեմ նաև, որ 1.600.000 դրամը ամուսինս Կ.Բեգլարյանի հետ պայմանավորվել էր, որ եթե խանութը անվանափոխվի, ապա այդ գումարը կմարենք մենք, իսկ եթե գործարքը չստացվի, ապա այդ գումարը պետք է տար Կ.Բեգլարյանը>>: Այս արտահայտությամբ Մ.Մխիթարյանն ուղղակի ընդունել է, որ իր ամուսնու և Կ.Բեգլարյանի միջև բանակցություններ են ընթացել գործարքի հնարավոր ձախողման մասին, ինչը նա մշտապես հերքել է ասելով, որ գարծարքի կնքումից միակողմանի հրաժարվել է Կ.Բեգլարյանը:
Մ.Մխիթարյանն ընունել է նաև, որ վարկը ստանալու օրը, երբ վերջինս եկել է իրենց տուն գումարը վերցնելու, իրենք նրան պարտք են մնացած եղել 4.000 ԱՄՆ դոլար և պարտավորվել են այն վճարել մինչև աշուն, բայց նա ստացականում այդ մասին առանց նշելու, պարտավորվել է խանութը հինգ օր անց ձևակերպել իրենց անվամբ, դրանից հետո իր ամուսինը հանդիպել է Կ.Բեգլարյանին և պահանջել է անվանափոխել խանութը, սակայն վերջինս ասել է, որ խանութն իր անունով չէ, այն 20.000 ԱՄՆ դոլար պարտքի դիմաց անվանափոխել է ոմն Սերգեյի անունով, ով բնակվում է Կրասնոսելսկում:
Ի հակառակ իր կողմից նախաքննության ընթացքում տրված ցուցմունքի, առաջին ատյանի դատարանում Մ.Մխիթարյանը սկզբում հայտնել է, որ Ս.Դալլաքյանին խանութը պատկանելու վերաբերյալ տեղեկացել են քաղաքացիական հայցով դատարան դիմելուց հետո՝ հարկադիր կատարողներից, հետո նշել է, որ այդ մասին իր ամուսնուն ասել է Կ.Բեգլարյանը երկու ամիս 600.000-ական դրամ վճարելուց հետո:
Իր ցուցմունքների հակասության վերաբերյալ Մ.Մխիթարյանը մի դեպքում հայտնել է, որ քննիչն է սխալ արձանագրել, մյուս դեպքում, որ նախկինում դատարանների հետ չի առնչվել, ուստի նախաքննության ընթացքում իր տված ցուցմունքներում մանրամասը չի նշել իրադարձությունների ժամանակագրությունը:
Տուժողը հայտնել է նաև, որ Կ.Բեգլարյանը մինչև կանխավճարը տրամադրելու օրը, իր ամուսնուն համոզել է խանութը գնելու նպատակով վարկ ձևակերպել: Ուստի առաջին ատյանի դատարանը իրավացիորեն գտել է, որ Մ.Մխիթարյանը այդ կերպ փորձում է արհեստական հիմքեր ստեղծել Կ.Բեգլարյանի գործողություններում խարդախության հանցակազմը հիմնավորելու համար, իսկ պայմանավորվող կողմերի միջև վարկի ձևակերպման միջոցով խանութը ձեռք բերելու մասին խոսակցություն տեղի ունեցած չլինելու վերաբերյալ հայտնել է նաև Սերգեյ Ղազարյանը, ով ներկա է գտնվել ամբաստանյալի և Մ.Սարդարյանի հանդիպմանը՝ թե կանխավճարը տալու օրը և թե դրանից առաջ:
Որևէ հիմնավորում չունի նաև Մ.Սարդարյանի ընտանիքի անդամների այն պնդումը, որ վարկը ստանալուց հետո, նույն օրը Կ.Բեգլարյանը եկել է իրենց տուն և խնդրել իրեն տրամադրել ևս 4.000.000 դրամ, քանզի թե գործի նյութերի և թե Մ.Սարդարյանի կնոջ ու դստեր ցուցմունքների համաձայն, իրենք վարկը ձևակերպել են հենց այդ գումարը Կ.Բեգլարյանին տրամադրելու նպատակով, ուստի ինչու նա պետք է խնդրեր, որ իրեն տրամադրեին գումարը:
Առաջին ատյանի դատարանն անդրադառնալով, վկա Գ.Փաշոյանի ցուցմունքներում տեղ գտած հակասություններին, իրավացիորեն արձանագրել է, որ վերջինիս այն պնդումը, որ նոտարական գրասենյակում Մ.Սարդարյանը վիճել է Կ.Բեգլարյանի հետ, չի համապատասխանում իրականությանը հետևյալ պատճառաբանությամբ.

Կ.Բեգլարյանը ցուցմունք է տվել, որ պայմանագիրը կնքելիս ներկա չի գտնվել նոտակարական գրասենյակում և ինչպես Գ.Փաշոյանը, այնպես էլ Մ.Սարդարյանն իր հետ այնտեղից խոսել են հեռախոսով ու վերջինիս անհագստության պատճառը եղել է ոչ թե նրա բնակարանի դիմաց տրամադրվող գումարի չափը, այլ վարկը այլ անձի անվամբ ձևակերպելու հանգամանքը: Տուժողը և նրա դուստրը թեև հայտնել են, որ նոտարական գրասենյակում են տեղեկացել, որ վարկը այլ անձի անվամբ է ձևակրպվում և որ այն պետք է հատկացվի 10.000.000 դրամի չափով, այնուամենայնիվ Կ.Բեգլարյանի ներկայությունը նոտարի մոտ չնշեցին:
Առաջին ատյանի դատարանը պատճառաբանված կերպով գտել է, որ Գ.Փաշոյանը փորձելով ընդգծել Կ.Բեգլարյանի և Մ.Սարդարյանի միջև առկա տարաձայնությունները, միտումնավոր նշել է, որ ամբաստանյալը ներկա է գտնվել նոտարական գրասենյակում՝ ցանկանալով հնարավորինս զերծ մնալ վարկը ձևակերպելու հարցում ունեցած իր դերակատարությունից: Միևնույն ժամանակ, Գ.Փաշոյանը հետևողականորեն պնդել է, որ Մ.Սարդարյանը մինչ պայմանագիրը կնքելը տեղյակ է եղել, որ ստացված վարկի գումարի մի մասը որպես միջնորդվճար պետք է տրամադրի իրեն սկզբում 10%-ի, հետագայում 16%-ի չափով, ինչը հիմնավորում է, որ Մ.Սարդարյանը տեղյակ է եղել թե ստացվող վարկի չափի և թե դրա դիմաց գրավադրվող գույքի վերաբերյալ, հետևաբար Կ.Բեգլարյանի և Մ.Սարդարյանի միջև խոսկցությունը կարող էր լինել միայն վարկն այլ անձի անվամբ ձևակերվելու կապացությամբ: Գ.Փաշոյանի նման ցուցմունքն ի նպաստ է Կ.Բեգլարյանին, քանի որ այս մասով նրանց երկուսի շահերն էլ համընկնում են, ու եթե Գ.Փաշոյանն այդ մասով չհայտներ իրականությունը, ապա կասկածի տակ կդներ նաև իր իսկ առնչությունը հնարավոր խարդախությանը: Գ.Փաշոյանի կողմից մասնակի ճիշտ ցուցմունքներ տալը պայմանավորված է այն հանգամանքով, որ վերջինս լինելով հինգ անգամ դատապարտված՝ ամեն կերպ փորձել է խուսափել կրկին քրեական պատասխանատվության ենթարկվելուց, ուստի և իր ցուցմունքներում Կ.Բեգլարյանին ձեռնտու հանգամանները հայտնելով չի վկայել նաև իր դեմ, ինչ վերաբերում է Կ.Բեգլարյանի դեմ տրված ցուցմունքի, ապա դրանք նույնպես միտված են հեռացնելու հնարավոր առնչությունն իր կատարված ենթադրյալ անօրինական գործողություններին:
Վկա Սերյոժա Դալլաքյանը ինչպես նախաքննական, այնպես էլ առաջին ատյանի դատարանում տրված ցուցմունքներում նշել է, որ ճիշտ է խանութը գրանցված է իր անունով, բայց իրականում խանութը պատկանում է Կարեն Բեգլարյանին, վերջինս պարտքի դիմաց այն ձևակերպել է իր անվամբ, սակայն իրենց մեջ պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ պարտքը վերադարձնելուց հետո խանութը կանվանափոխվի վերջինիս կամ այն գնող անձի անվամբ: Ավելին՝ Ս.Դալլաքյանի ցուցմունքով հիմնավորվում է նաև, որ ամբաստանյալն իրեն տեղյակ է պահել Մ.Սարդարյանի կոմից խանութի համար կանխավճար տալու մասին, նույնիսկ խնդրել է ԱԳԿ-ից տեղեկանք վերցնել այն վաճառելու համար:
Քրեական գործով հետազոտված ապացույցներով չեն հերքվել ամբաստանյալ Կ.Բեգլարյանի պատճառաբանություններն առ այն, որ Մ.Սարդարյանն է հրաժարվել գործարքը կնքելուց և որ խարդախության եղանակով հափշտակություն կատարելու նպատակ չի ունեցել, հափշտակություն չի կատարել, հակառակը, գործով ձեռք բերված ապացույցների ու փաստական տվյալների համադրումը հիմնավորում է ամբաստանյալի հայտնած տեղեկությունը:
Գործի ողջ տվյալներով առաջին ատյանի դատարանը հաստատված է համարել, որ ամբաստանյալ Կ.Բեգլարյանը Մ.Սարդարյանի հետ սկզբում պայամանվորվածություն է ձեռք բերել նրան վաճառելու Երևանի Շիրազի 52/6 հասցեում գտնվող խանութը 48.000 ԱՄՆ դոլար գումարով, որը վերջինս պետք է վճարեր երկու ամսվա ընթացքում մաս-մաս: Մ.Սարդարյանը Կ.Բեգլարյանին է

տվել՝
1. 16.04.2008թ. 5.000 Եվրո գումար 2. 18.04.2008թ.՝ 500 Եվրո գումար 3. 24.04.2008թ. 1.000 ԱՄՆ դոլար 4. 26.04.2008թ. 8.800 ԱՄՆ դոլար 5. 09.06.2008թ. 8.000.000 դրամ, վերցրած գումարները համարժեք են 44.214 ԱՄՆ դոլարին կամ 13.794.800 դրամին:
Այսինքն Մ.Սարդարյանը չի կատարել 16.04.2008թ. ստանձնած իր պարտավորությունը 3.786 ԱՄՆ դոլարի չափով: Ամբաստանյալի այն պատճառաբանությունը, որ 10.06.2008թ. իր և Մ.Սարդարյանի միջև նոր պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ գործարքը չի կնքվում և իրեն տրված մոտ 44.000 ԱՄՆ դոլարի դիմաց ինքը պետք է յուրաքանչյուր ամիս 620.000 դրամ տոկոսներ վճարի, առաջին ատյանի դատարանում որևէ կերպ չի հերքվել: Բացի այդ, ամբաստանյալի այն պատճառաբանությունը, որ նա Մ.Սարդարյանին որպես տոկոսներ ընդհանուր առմամբ վճարել է 2.850.000 դրամ, թեև չի հաստատվել, սակայն նույնպես չի հերքվել, ավելին՝ տուժողը ընդունել է, որ ամբաստանյալն իր ամուսնուն բացի երկու ամիս անընդմեջ 600.000-ական դրամ տալուց, տվել է նաև այլ գումարներ /ճանապարհածախս և ինքնաթիռի տոմս/ որի չափը իրեն հայտնի չէ: Հատկանշական է, որ ժամանակագրական առումով հենց ամբաստանյալի կողմից նշված գումարները տալուց հետո, երբ չի կարողացել այլևս գումար տրամադրել ու ապարդյուն են անցել նաև իր երիկամը վաճառելու փորձերը, Մ.Սարդարյանը դիմել է դատարան գումարի բռնագանձման պահանջով:
Կ.Բեգլարյանի մոտ <<Հեպոտիտ-Շ>> հիվանդությունը ախտորոշվել է՝ 16.01.2009թ., որից հետո էլ Մ.Սարդարյանը դիմել է Դատարան:
Նման պայմաններում առաջին ատյանի դատարանը իրավացիորեն գտել է, որ Կ.Բեգլարյանի և Մ.Սարդարյանի միջև ծավալվել են քաղաքացիաիրավական հարաբերություններ՝ դրանից բխող բոլոր հետևանքներով:
ՀՀ Սահմանադրության 21 հոդվածի 2-րդ մասի համաձայն, մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը:
Չփարատված կասկածները մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի:
Նմանատիպ նորմեր նախատեսված են նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում: Նշված օրենսգրքի 18 հոդվածի 3-րդ մասի համաձայն, հանցանք գործելու մեջ անձի մեղավորության մասին հետևությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա, այն պետք է հաստատվի գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ: Իսկ նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ մեղադրանքն ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարատվել սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում, մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի կամ կասկածյալի:
Այսպիսով, առաջին ատյանի դատարանը, հետազոտելով դատաքննության ընթացքում ձեռք բերված ապացույցները, դրանցից յուրաքանչյուրը գնահատելով վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, իրավացիորեն հանգել է այն հետևության, որ ամբաստանյալ Կ.Բեգլարյանին առաջադրված մեղադրանքը հիմնավորված և հաստատված չէ գործին վերաբերող փոխկապակցված, հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ:
Նման պայմաններում Դատարանը եկել է այն հիմնավոր հետևության, որ չի ապացուցվել այն հանգամանքը, որ Կարեն Բեգլարյանը, տուժող Միքայել Սարդարյանի վստահությունը չարաշահելու եղանակով, խարդախությամբ, հափշտակել է գումար և իրավացիորեն գտել, որ Կարեն Բեգլարյանի արարքներում ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշները բացակայում են, ինչը ՀՀ քրեական դատավության օրենսգրքի 366 հոդվածի 2-րդ մասի և 35 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի ուժով հիմք է հանցակազմի բացակայությամբ արդարացման

դատավճիռ կայացնելու համար: Հակառակ մոտեցումը խիստ կասկածելի է և նման հետևությունը հիմնված կլինի բացառապես ենթադրության վրա:
ՀՀ Վճռաբեկ դատարանը Լիա Ավետիսյանի վերաբերյալ գործով իր որոշման 28-31-րդ կետերում անդրադառնալով խարդախության հանցակազմը քաղաքացիաիրավական պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքերից սահմանազատելու հատկանիշներին՝ արձանագրել է հետևյալը՝ <<Տարբեր տեսակի գործարքների /առուվաճառք, գրավ, փոխառություն, այդ թվում վարկային պայմանագիր և այլն/ կատարման ժամանակ ծագող քաղաքացիական իրավահարաբերություններից խարդախության հանցակազմի սահմանազատման հիմնախնդրին Վճռաբեկ դատարանն անդրադառնում է ելնելով այն հանգամանքից, որ անձի կողմից իր գույքային պարտավորությունների չկատարումը դեռևս չի վկայում անձի մոտ հանցանքի կատարման դիտավորության առկայության մասին: Այլ կերպ՝ անձի կողմից քաղաքացիաիրավական պարտավորության չկատարումը դեռևս չի վկայում վերջինիս արարքում խարդախության հանցակազմի սուբյեկտիվ կողմի և հետևաբար, խարդախության հանցակազմի առկայության մասին տե՛ս սույն որոշման 26-րդ կետը:
Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ խարդախությունը քաղաքացիաիրավական պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքերից տարանջատելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ հանգամանքները. ա) խարդախության դեպքում տուժողին խաբելու կամ նրա վստահությունը չարաշահելու մտադրությունն անձի մոտ ծագում է նախքան գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքներ ձեռք բերելը. բ) խարդախության դեպքում անձի մոտ քաղաքացիաիրավական պայմանագրով ստանձնած պարտավորությունները (գույքը փոխանցել, կատարել վարկային պարտավորությունը, պարտքը վերադարձնել և այլն) չկատարելու դիտավորությունը ծագում է նախքան գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքներ ձեռք բերելը:
Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ եթե քաղաքացիաիրավական հարաբերության հենքը վերաբերում է կարգավորիչ գործառույթ իրականացնող իրավունքի ճյուղին, ապա քրեական իրավունքը և դատավարությունը, մարմնավորելով իրավունքի պահպանիչ գործառույթը, իրենց բնույթով ածանցյալ են իրավունքի տվյալ ճյուղերից, մասնավորապես քաղաքացիական իրավունքից և դատավարությունից: Այլ կերպ՝ ներգործության քրեաիրավական և քրեադատավարական միջոցները չպետք է այնպիսին լինեն, որ խաթարեն քաղաքացիաիրավական ու քաղաքացիադատավարական հարաբերությունների ներքին տրամաբանությունը, անորոշություն ու անկանխատեսելիություն ստեղծեն քաղաքացիաիրավական շրջանառության մեջ: Այս առումով անթույլատրելի է գործող քաղաքացիական օրենսդրության պահանջների անտեսմամբ բնականոն գույքային շրջանառությունը խաթարող գործարքներ կնքելու պրակտիկան: Այդ փաստերը կարող են խեղաթյուրել քաղաքացիաիրավական հարաբերությունները, սպառնալ իրավական անվտանգությանը, պայմաններ ստեղծել, որ անձինք խուսափեն հարկային պարտավորությունների կատարումից, ինչպես նաև այլ եղանակներով վնասել իրավաչափ հանրային շահերը:
Նման դեպքերում պետությունը պարտավոր չէ գործող քաղաքացիական օրենսդրության պահանջների անտեսմամբ գործարքներ կնքած քաղաքացիների գույքային և այլ իրավունքների վերականգնումը դիտել հանրային շահի տիրույթում և հանրային միջոցներ ծախսելով իրականացնել նշված մասնավոր շահերի քրեաիրավական պաշտպանություն: Այդ մասնավոր շահերի պաշտպանությունը, որպես ընդհանուր կանոն, պետք է կատարվի մասնավոր իրավունքի տիրույթում՝ քաղաքացիաիրավական և քաղաքացիադատավարական միջոցներով»:

<<Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին>> Եվրոպական կոնվենցիայի թիվ 4 արձանագրության 1-ին հոդվածի համաձայն, ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել միայն այն պատճառով, որ ի վիճակի չէ կատարելու պայմանագրային որևէ պարտավորություն:
<<Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին>> միջազգային դաշնագրի 11 հոդվածի համաձայն՝ ոչ ոք չի կարող ազատազրկվել միայն այն հիմքով, որ ի վիճակի չէ կատարելու պայմանագրային պարտավորությունը:
ՀՀ Սահմանադրության 16 հոդվածի համաձայն մարդուն չի կարելի ազատությունից զրկել միայն այն պատճառով, որ ի վիճակի չէ կատարելու քաղաքացիաիրավական պարտավորությունները:
ՀՀ քրեական օրենսգիրքը քրեական պատասխանատվություն չի նախատեսում քաղաքացիաիրավական, ինչպես նաև պայմանագրային պարտավորությունների կամ պարտականությունները չկատարելու համար: Հետևաբար վերոհիշյալ հիմնարար դրույթների ուժով անձը ոչ միայն ազատությունից զրկվել չի կարող, այլև նրա նկատմամբ քրեական հետապնդում չի կարող իրականացվել:
ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35 հոդվածի առաջին մասի 2-րդ կետի համաձայն՝ քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե՝ արարքի մեջ հանցակազմ չկա: Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ դատարանը հայտնաբերելով քրեական հետապնդումը բացառող հանգամանքներ, լուծում է ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու հարցը:
Նման պայմաններում Դատարանը իրավացիորեն հանգել է հետևության, որ Կարեն Բեգլարյանին մեղսագրվող արարքն ընդհանրապես տեղի չի ունեցել, չի եղել դեպքը, որը կարող էր դիտվել, որպես հանցագործություն, այսինքն՝ հանցավոր արարքի փաստ չի հայտնաբերվել, ուստի Դատարանը գտել է, որ Կարեն Բեգլարյանի գործողություններում ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված արարքը բացակայում է, այն է՝ արարքում հանցակազմ չկա:
Վերոգրյալ հիմքերի առկայության պայմաններում, Վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ սույն գործով թույլ չեն տրվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք կհանգեցնեին դատական սխալի, ուստի գտնում է, որ Դատարանի դատավճիռը Կարեն Բեգլարյանին արդարացնելու մասով, օրինական է ու հիմնավորված և այն բեկանելու, իսկ բերված վերաքննիչ բողոքները բավարարելու օբյեկտիվ հիմքեր առկա չեն:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 393, 394, հոդվածներով՝ ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

Մեղադրող Լ. Հովհաննիսյանի և տուժող Մ. Մխիթարյանի կողմից բերված վերաքննիչ բողոքները մերժել՝ Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 03.10.2011թ. դատավճիռն՝ ըստ մեղադրանքի Կարեն Վլադիմիրի Բեգլարյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, թողնելով օրինական ուժի մեջ:
Որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ Վճռաբեկ դատարանին՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

	ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ՝ ստորագրություն ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ Իսկականի հետ ճիշտ է՝ ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ՝ Կ. ՂԱՋԱՐՅԱՆ

Ամսաթիվ:	27-12-2011
Էջերի քանակը:	1-ին հատոր՝180 թերթ, 2-րդ հատոր՝124 թերթ, 3-րդ հատոր՝119 թերթ
Գործին կից նյութեր:	
Այլ նշումներ:	

Գործն ուղարկվել է:	27-12-2011
Էջերի քանակը:	180, 124, 119 թերթ
Գործին կից նյութերը:	ամբաստանյալի վիճ. քարտը և անձնագիրը:
Ուր:	Վճռաբեկ
Գրության համարը:	Ե-19541/11
Այլ նշումներ:	

Ամսաթիվ:	30-12-2011

Դատական Գործ N: ԵԱԴԴ/0042/01/11

Ամսաթիվ:	23-12-2011
Բողոք բերող անձինք:	Տուժող
Բողոք բերող անձինք:	Դատախազ
Բողոք բերող անձինք	
Անուն	Մարինա
Ազգանուն	Մխիթարյան
Հասցե	տուժող՝ ք.Երեվան, Դավիթաշեն 2-րդ թաղ. 32 շենք, բն. 23
Այլ	ամբաստանյալ՝ Կարեն Վլադիմիրի Բեգլարյան
Բողոք բերող անձինք	
Անուն	Լ
Ազգանուն	Հովհաննիսյան
Հասցե	Աջափնյակ եվ Դավթաշեն վարչական շրջանների դատախազություն՝ ք.Երեվան, Լենինգրադյան փող. 4ա
Այլ	բողոքը ստացվել է 30.12.2011թ.
Փաստաբան	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Դատապարտյալ	
Անուն	

Ազգանուն	
Հասցե	
Չափահաս:	Այո
Պատասխանի ստացման ամսաթիվը:	
Պատասխանի բովանդակությունը:	

Գործի առաքման ամսաթիվը:	27-12-2011
Գրության համարը:	Ե-19541
Գործի ստացման ամսաթիվը:	10-01-2012
Քրեական գործի հատորներ /փաստաթղթեր/:	3 հատոր, 1 վիճակագրական քարտ, 1 անձնագիր
Դատապարտյալ	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Գործի համարը:	ԵԱԴԴ/0042/01/11
Գործը ստացվել է:	Քրեական և զինվորական վերաք.
Գործը ստացվել է:	
Գործը ստացվել է:	
Պատասխանատվության ենթարկվածների թիվը:	1

Ամսաթիվ:	10-01-2012
Նախագահող դատավոր	
Դատարանի անվանում:	Վճռաբեկ
Դատավորի անուն:	Դավիթ Զաքարի Ավետիսյան
Դատավոր	
Դատարանի անվանում:	Վճռաբեկ
Դատավորի անուն:	Սամվել Վլադիմիրի Օհանյան
Այլ նշումներ:	

Ամսաթիվ:	30-01-2012
Որոշման բովանդակությունը:	ԵԱԴԴ/0042/01/11 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ՎՃՌԱԲԵԿ ԲՈՂՈՔՆԵՐԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ 30 հունվարի 2012 թվական ք.Երևան

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
քննարկելով Կարեն Վլադիմիրի Բեգլարյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 6-ի որոշման դեմ մեղադրող Լ.Հովհաննիսյանի և տուժող Մ.Մխիթարյանի վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 3-ի դատավճռով Կարեն Բեգլարյանը ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ճանաչվել է անպարտ և արդարացվել է:
Վերոհիշյալ դատավճռի դեմ վերաքննիչ բողոքներ են բերել մեղադրող Լ.Հովհաննիսյանը և տուժող Մ.Մխիթարյանը:
ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 6-ի որոշմամբ մեղադրողի և տուժողի վերաքննիչ բողոքները մերժվել են, իսկ բողոքարկված դատական ակտը՝ թողնվել օրինական ուժի մեջ:
Վճռաբեկ բողոքներ են բերել մեղադրող Լ.Հովհաննիսյանը և տուժող Մ.Մխիթարյանը: Գտնելով, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշումը հիմնավորված և օրինական չէ, թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա՝ մեղադրող Լ.Հովհաննիսյանը խնդրել է ամբողջությամբ բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 6-ի որոշումը:
Մեղադրող Լ.Հովհաննիսյանը նշել է, որ բողոքը պետք է վարույթ ընդունվի, քանի որ առկա է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված հիմքը՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար:
Վերլուծելով բողոքը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքաբերի փաստարկները բավարար չեն եզրահանգելու, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար:
Ուստի, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մեղադրող Լ.Հովհաննիսյանի բողոքում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված հիմքի առկայությունը հիմնավորված չէ:
Գտնելով, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշումն օրինական և հիմնավորված չէ, սխալ իրավաբանական գնահատական է տրվել Կ.Բեգլարյանի գործողություններին՝ տուժող Մ.Մխիթարյանը խնդրել է վերանայել և փոփոխել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշումը և ամբաստանյալ Կ.Բեգլարյանի նկատմամբ կայացնել մեղադրական դատական ակտ կամ քրեական գործն ուղարկել համապատասխան առաջին ատյանի դատարան՝ ողջ ծավալով քննության:
Տուժող Մ.Մխիթարյանը նշել է, որ բողոքը պետք է վարույթ ընդունվի, քանի որ առկա են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով սահմանված հիմքերը, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և վերաքննիչ դատարանի

	կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ, որն առաջացրել է ծանր հետևանքներ: Վերլուծելով բողոքը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքաբերի փաստարկները բավարար չեն եզրահանգելու, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար: Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ բողոքաբերի փաստարկները բավարար չեն եզրահանգելու, որ առկա է գործի ելքի վրա ազդած դատական սխալ՝ նյութական կամ դատավարական իրավունքի խախտում, որը կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետևանքներ: Ուստի, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տուժող Մ.Մխիթարյանի բողոքում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով սահմանված հիմքերի առկայությունը հիմնավորված չէ: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վճռաբեկ բողոքը վերադարձվում է, եթե այն չի համապատասխանում նույն օրենսգրքի 407-րդ հոդվածի և 414.2-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին, ուստի ներկայացված բողոքները ենթակա են վերադարձման: Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.1-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝ Վճռաբեկ դատարանը Ո Ր Ո Շ Ե Ց Կարեն Վլադիմիրի Բեգլարյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 6-ի որոշման դեմ մեղադրող Լ.Հովհաննիսյանի և տուժող Մ.Մխիթարյանի վճռաբեկ բողոքները վերադարձնել: Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման: Նախագահող՝ Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆ Դատավորներ՝ Ս.ՕՀԱՆՅԱՆ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆ Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ

Ամսաթիվ:	17-02-2012
Այլ նշումներ:	

Գործի առաքման ամսաթիվ:	22-02-2012
Դատարան:	Աջափնյակ և Դավթաշեն
Այլ նշումներ:	3 հատոր՝ 180, 124, 178 թերթ, 1 վիճակագրական քարտ, Կարեն Բեգլարյանի անձնագիրը:

Փաստաթուղթը տպվել է www.datalex.am պորտալի կողմից 21 Հունիս 2013